Շաբաթօրյա դպրոցում Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

Ջոն Մ. Ֆաուլեր

Բովանդակություն

Դաս 1.	28.03-03.04	ՀԻՍՈՒՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ	10
Դաս 2.	04.04-10.04	ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	19
Դաս 3.	11.04-17.04	Ո՞Վ Է ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ	28
Դաս 4.	18.04-24.04	ԱԾԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՉ	38
Դաս 5.	25.04-01.05	ՔՐԻՍՏՈՍԸ ՈՐՊԵՍ ՇԱԲԱԹԻ ՏԵՐ	48
Դաս 6.	02.05-08.05	ԿԱՆԱՅՔ ՀԻՍՈՒՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ	57
Դաս 7.	09.05-15.05	ՀԻՍՈՒՍԸ, ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ԱՂՈԹՔԸ	66
Դաս 8.	16.05-22.05	ՀԻՍՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	75
Դաս 9.	23.05-29.05	ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ՀԻՍՈՒՍԸ	85
Դաս 10.	30.05-05.06	ՀԻՍՈՒՍԻՆ ՀԵՏԵՎԵԼԸ ԱՄԵՆՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ	94
Դաս 11.	06.06-12.06	ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ	103
Դաս 12.	13.06-19.06	ՀԻՍՈՒՍԸ ԵՐԿՈՒՍԱՂԵՄՈՒՄ	112
Դաս 13.	20.06-26.06	ԽԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱԾ	122

ԵՐԵՎԱՆ
2015

ԹԱՆԿԱԳԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՎ ՔՈՒՅՐԵՐ, ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Այս տարին Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու պատմության մեջ նշված է առանձնահատուկ իրադարձությամբ:

2015 թվականի հուլիսի 2-11-ը տեղի կունենա եկեղեցու համաշխարհային համագումարը՝ Վեհաժողովի 60-րդ նիստը (ԱՄՆ, Տեխաս, քաղաք Սան-Անտոնիո):

Այսօր Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին ավելի քան 18 միլիոն անդամ ունի: Վեհաժողովը՝ բոլոր միությունների, համաժողովների/առաքելությունների/դաշտերի և բոլոր հիմնարկների համաշխարհային միավորումը, բարձրագույն ղեկավար մարմինն է, որն արտահայտում է Յոթերորդ օրվա ադվենտիստների ողջ եկեղեցու կարծիքը: Վեհաժողովի նիստերը անց են կացվում հինգ տարին մեկ անգամ: Այդ համաշխարհային խորհրդաժողովներում ներկայացվում են հաշվետվություններ ողջ աշխարհում եկեղեցու աշխատանքի և ձեռքբերումների մասին, առաջարկվում են տարատեսակ ծրագրեր և նախաձեռնություններ, վճռվում են ադվենտիստական համաշխարհային եկեղեցու ծառայության հիմնարար հարցերը:

Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու առաքելությունը բոլոր ազգերին աշակերտներ դարձնելն է՝ նրանց տանելով հավիտենական Ավետարանը՝ երեք հրեշտակների պատգամի համատեքստում, և աշխարհը Քրիստոսի երկրորդ գալստյանը նախապատրաստելը: Մենք այդ նպատակին հասնում ենք Սուրբ Հոգու առաջնորդությամբ և զորությամբ՝ որպես միջոց օգտագործելով.

1. Ավետարանումը: Ընդունելով Քրիստոսի տված հանձնարարությունը (Մատթեոս 28.18-20)՝ այս վերջին օրերին մենք ողջ աշխարհին քարոզում ենք Աստծո սիրո հավիտենական Ավետարանը, որն առավել լիակատար կերպով բացահայտվել է Նրա Որդու կյանքի, գործունեության, քավչարար մահվան, հարության և քահանայապետական ծառայության մեջ: Աստվածաշունչն ընդունելով որպես Նրա կամքի անսխալ բացահայտում՝ մենք նրա լուրը ներկայացնում ենք լիովին, ներառյալ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան և Նրա տասը պատվիրանների հավիտենական ուժի մասին լուրը՝ յոթերորդ օրվա՝ շաբաթվա մասին դրանց հիշեցման հետ միասին:

2. Ուսուցումը: Ընդունելով այն փաստը, որ մտքի ու բնավորության զարգացումը էական դեր է խաղում Աստծո՝ փրկագնման ծրագրում, մենք խրախուսում ենք Աստծո, Նրա Խոսքի և Նրա արարած տիեզերքի խելահաս ըմբռնման և փոխհարաբերությունների աճը:

3. Ապաքինումը: Ընդհանուր առմամբ հաստատելով մարդկային անձի բարօրության աստվածաշնչյան սկզբունքները՝ մենք ավելի մեծ ուշադրություն ենք դարձնում մարդկանց առողջության պահանմանը, հիվանդների ապաքինմանը և ծառայություն իրականացնելով աղքատների և հալածվածների համար՝ համագործակցում ենք Նրա կարեկից աշխատանքին՝ ուղղված նրանց առողջության վերականգնմանը:

4. Խորհուրդներ: Աջակցելով եկեղեցու բոլոր անդամների մշտական հոգևոր աճին՝ մենք հոգ ենք տանում նոր դարձի եկածների մասին, նրանց սովորեցնում ենք ապրել արդար կյանքով և նախապատրաստում ենք գործուն վկայության՝ խրախուսելով նրանց գթասիրտ հնազանդությունը Աստծո կամքին:

Համաշխարհային եկեղեցու 60-րդ համագումարում նրա կյանքի և ծառայության շատ կարևոր հարցեր են լուծվելու: Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու Վեհաժողովի ղեկավարները համաշխարհային եկեղեցու բոլոր անդամներին կոչ են անում մասնակցելու «Միավորված աղոթքի 100 օր» նախաձեռնությանը:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում կարիքները, որոնց համար անհրաժեշտ է աղոթել.

- Յուրաքանչյուր անդամի և ողջ եկեղեցու վերածնունդ և վերափոխում:
- Եկեղեցու կազմակերպական միասնության պահպանումը՝ ներկայիս համաշխարհային հիմնախնդիրների կապակցությամբ:
- Համաշխարհային եկեղեցու համախմբում նրա առաքելության շուրջ՝ կապված Քրիստոսի մեծ հանձնարարության հետ:
- Մեծ քաղաքներում ավետարանչական ծառայության համար համալիր նախագծերի հետագա զարգացում:
- Ադվենտիստական նույնականացման հաստատում՝ առանձնահատուկ շեշտադրմամբ արտահայտած երկնային սրբարանում Քրիստոսի՝ որպես ճշմարիտ Քահանայապետի ծառայության մասին ուսմունքի վրա:

- Արարման մասին աստվածաշնչյան տեսակետի, մասնավորապես՝ տառացի վեց օրերի ընթացքում երկրի արարման դավանաբանության պաշտպանություն:
- Սուրբ Հոգու հեղում վերջին անձրևի զորությամբ՝ Քրիստոսի՝ մոտալուտ երկրորդ գալստյան նախաշեմին:

Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր: Հրավիրում ենք ձեզ՝ միավորվել աղոթքի մեջ հարյուր օրվա ընթացքում՝ 2015 թվականի մարտի 25-ից մինչև հուլիսի 2-ը: Աղոթե՛ք Աստծո համաշխարհային եկեղեցու կյանքի և գործունեության, բոլոր ժողովուրդներին, ազգերին և լեզուներին Ավետարանի քարոզի մասին: Աղոթքի ծառայություններում միավորվեք եկեղեցիներում, տանը՝ փոքր խմբերում: Աղոթեք ընտանիքներում, աղոթեք ձեր անձնական աղոթքներում՝ ամեն օր և ամեն ժամանակ, երբ հնարավորություն է ընձեռվում: Աստծուն դիմեք ձեր քաղաքում Ավետարանի քարոզի մասին բարեխոսական աղոթքով և ակտիվորեն մասնակցեք ավետարանչությանը:

«ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՂՈԹՔԻ 100 ՕՐ»

2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25 – ՀՈՒԼԻՍԻ 2-Ը

Վեհաժողովի այս նախաձեռնությունը Եվրասիական բաժանմունքի գործող «Ավետարանչության 777 օր» նախաձեռնության գագաթնակետն է: Այն ընդգրկում է Վեհաժողովի նիստի նախընթաց 100 օրը, նիստ, որ տեղի է ունենալու 2015 թվականի հուլիսի 2 - 11-ը ԱՄՆ Տեխաս նահանգի Սան-Անտոնիո քաղաքում:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցու բոլոր անդամներին միավորել Սուրբ Հոգու հեղման մասին աղոթքում և առանձնահատուկ ջանքեր ուղղել ավետարանչական ծառայությանը՝ Վեհաժողովի 60-րդ նիստի սկզբին նախընթաց 100 օրվա ընթացքում:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Զգալ Սուրբ Հոգու մեծազոր ներկայությունը, որ մեզ ամենքիս միավորում է եկեղեցու առաքելության կատարման շուրջ:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Եկեղեցու անդամներին միավորել աղոթքի մեջ: «Եվ միշտ հետևում էին առաքյալների վարդապետությանը և հաղորդությանը և հաց կտրելուն և աղոթքներին» (Գործք առաքելոց 2.42):

2. Եկեղեցու անդամներին միավորել առաքելության կատարան շուրջ: «Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8):

3. Վեհաժողովի նիստի ողջ ընթացքում ՅՕԱ եկեղեցին միավորել Սուրբ Հոգու առանձնահատուկ հեղման մասին աղոթքի մեջ:

4. Վեհաժողովի նիստից հետո եկեղեցու անդամներին դրդել միավորված աղոթքի՝ առաքելության իրականացման հաջողության մասին:

Գործողությունների ծրագիրը

Եկեղեցու բոլոր անդամներին հրավիրում ենք միավորվել մեր ադվենտիստական առաքելության մասին աղոթքի մարաթոնին: Ստորև ներկայացված գրաֆիկում նշված են եկեղեցու ծառայության բաժինները, որոնք պատասխանատու են աղոթքի ծառայության և ձեր եկեղեցում ավետարանչական նախաձեռնությունների կազմակերպման համար: Բաժինների աղոթքի կարիքները և ավետարանչական նախաձեռնությունները եկեղեցում կներկայացվեն անմիջականորեն նրանց համապատասխանող շաբաթվանից առաջ:

Մարտի 25-27	Աղոթքի ծառայության բաժին, Տեղեկատվության բաժին:
Մարտի 28 - ապրիլի 3	Երիտասարդական ծառայության բաժին:
Ապրիլի 4-10	Ադվենտիստական առաքելություն/Ավետարանչություն/Հովվական միավորում, ներառյալ՝ երեցների ծառայությունն ու սարկավագական բաժինը:
Ապրիլի 11-17	Ընտանեկան ծառայության բաժին:
Ապրիլի 18-24	Հրատարակչական ծառայության բաժին, Ռեսուրսների կառավարման բաժին, Վստահության ծառայություն:

Ապրիլի 25 - մայիսի 1	Շաբաթօրյա դպրոցի և անձնական ծառայության բաժին:
Մայիսի 2-8	Առողջության ծառայության բաժին:
Մայիսի 9-15	Երաժշտական ծառայության բաժին:
Մայիսի 16-22	Հասարակական կապերի և կրոնական ազատության բաժին, Կապելանային ծառայության բաժին:
Մայիսի 23-29	Կրթության բաժին:
Մայիսի 30 – հունիսի 5	Մանկական ծառայության բաժին:
Հունիսի 6-12	ԱԴՐԱ/Տաբիթայի բաժին:
Հունիսի 13-19	Կանանց ծառայության բաժին:
Հունիսի 20-26	ՅՕԱ հոգևոր ժառանգության բաժին, Աստվածաշնչյան հետազոտությունների ինստիտուտ:
Հունիսի 26 – հուլիսի 1	Աղոթքի ծառայության բաժին:

«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և իմ վկաները կլինեք... մինչև երկրի ծայրերը»
(Գործք առաքելոց 1.8)

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

«Եվ վեր կացավ եկավ իր հոր մոտ, և դեռ որ նա հեռու էր, հայրը տեսավ նրան և գութը շարժեց. և վազեց նրա վզով ընկավ, և համբուրեց նրան» (Ղուկաս 15.20):

Մենք լավ գիտենք աստվածաշնչյան այս համարը: Այն վերցված է ողջ գրականության ամենահանրաճանաչ ու ամենասիրված պատմություններից մեկից, ինչպես սուրբգրային, այնպես էլ աշխարհիկ: Զարմանալի է, բայց մենք երբևէ չէինք լսի այս պատմությունը, եթե հասարակ բժիշկ-ավետարանիչը այդ թանկարժեք մարգարիտը չներառեր իր ընկերոջը՝ գիտնական Թեոփիլեին գրած նամակի մեջ:

Բժշկի անունը Ղուկաս է, նա հեթանոսությունից դարձի եկած քրիստոնյա է, իսկ նրա գրած նամակը Ղուկասի Ավետարանն է: Որպես լրացում Ավետարանի՝ Ղուկասը գրել է նաև «Գործք առաքելոց» գիրքը: Լինելով Պողոսի ուղեկիցը՝ Ղուկասը հոյակապ դիտորդ էր և մասնակիցը Հիսուսի հետևորդների մեծ շարժման, որ ընդգրկել էր ողջ Հռոմեական կայսրությունը: Պողոսի հետ այդ սերտ կապը օգնեց Ղուկասին՝ ոչ միայն հասկանալու քրիստոնեական եկեղեցու խորը նշանակությունը, որը հաստատուն մնաց կայսերը որպես աստվածության մեծարելու պահանջի դեմ, այլ նաև արժանահավատ աղբյուրներից առավել խորը իմանալ այն Մարդու՝ Հիսուս Քրիստոսի մասին, Ով կանգնած էր այդ ամենի հետևում: Այդպես, Սուրբ Հոգու ներշնչանքով Ղուկասը երկհատորյա աշխատություն գրեց, որը կարելի էր անվանել «Քրիստոնեական եկեղեցու ծագումն ու պատմությունը»:

Այդ աշխատության առաջին մասն Ավետարանն է, որը գրվել և Թեոփիլեին է հասցվել նախքան «Գործք առքելոց» գրքի գրվելը (Գործք առաքելոց 1.1): Շատ աստվածաբաններ Ղուկասի Ավետարանը թվագրում են մեր թվարկության 61-63 թվականներով:

Թեոփիլեն հույն նորադարձ էր. նամակը հասցեագրելով նրան՝ Ղուկասը փաստացի այն հասցեագրում է հունական ծագում ունեցող բոլոր հավատացյալներին և եկեղեցու՝ հեթանոսությունից դարձի

եկած բոլոր անդամներին՝ միևնույն ժամանակ չանտեսելով Հիսուս Քրիստոսի հրեական ծագումը: Մատթեոսը գրում էր առաջին հերթին հրեաների համար, և այդ պատճառով նա շեշտը դնում է Հիսուսի մեսիականության վրա: Մարկոսը գրում էր հռոմեացիներին, և մենք տեսնում ենք, թե ինչպես է նրա Ավետարանում Հիսուսը քայլում ողջ երկրում՝ արքայության մասին լուրով: Հովհաննեսը լուրջ մտածող էր, և նրա Ավետարանում Հիսուսը հառնում է որպես Խոսք, Արարիչ, Աստծո Որդի: Բայց Ղուկասը գրում է՝ խոսքն ուղղելով հեթանոսներին: Նա նրանց է ներկայացնում Հիսուսին՝ Մարդի Որդուն՝ որպես աշխարհի Փրկիչ և բոլոր մարդկանց Բարեկամ: Փրկության համընդհանուր բնույթը նրա Ավետարանի հիմնական թեման է, այդ պատճառով նա գրում է տոհմաբանություն, որտեղ Հիսուսի ծագումը հասցնում է ընդհուպ մինչև Ադամին և նրան կապում է Աստծո հետ, այն դեպքում, երբ Մատթեոսի գրած տոհմաբանությունը կանգ է առնում հրեա ժողովրդի հոր՝ Աբրահամի վրա (Ղուկաս 3.23-38, համեմատե՛ք Մատթեոս 1.1-17-ի հետ):

Ղուկասի Ավետարանը ամենամեծն է Նոր Կտակարանում: Որոշ հրաշքներ նկարագրված են միայն Ղուկասի Ավետարանում, օրինակ՝ Նային քաղաքում բնակվող որբևայրու որդու հարությունը (Ղուկաս 7.11-18) և Մաղքոսի ապաքինումը (Ղուկաս 22.50,51): (Ինչպես նաև այլ հրաշքներ, տե՛ս Ղուկաս 5.4-11, 13.11-17, 14.1-6, 17.11-19): Շատ առակներ նույնպես գրի է առել միայն Ղուկասը, այդ թվում՝ մի քանի ամենահայտնիները. բարի սամարացու մասին (Ղուկաս 10.30-37), անմիտ հարուստի մասին (Ղուկաս 12.16-21), անառակ որդու մասին (Ղուկաս 15.11-32), հարուստի և Ղազարոսի մասին (Ղուկաս 16.19-31), փարիսեցու և մաքսավորի մասին (Ղուկաս 18.10-14): Զակքեոսի պատմությունը (Ղուկաս 19.1-10) նույնպես Ղուկասի եզակի ներդրումն է:

Սուրբ Հոգու առաջնորդությամբ Ղուկասը պնդում է, որ ուսումնասիրել է պատմական նյութերը՝ հարցուփորձ անելով ականատեսներին (Ղուկաս 1.2), իսկ հետո, «սկզբից բոլոր բաներին ճշմարտությունով հետևելով», գրեց ամեն բան «կարգավ», որպեսզի ընթերցողը (կամ ընթերցողները) «իմանա ստուգությունը» Հիսուսի ուսմունքի և Նրա Բարի լուրի (համարներ 3,4):

Երբ նշանավոր աստվածաբան Ջեյմս Դեննիին հարցրեցին, թե նա կարո՞ղ է Հիսուսի լավ կենսագրություն առաջարկել, նա պատասխանեց. «Իսկ դուք փորձե՞լ եք այն մեկը, որ Ղուկասն է գրել»:

Լա՛վ միտք է: Եկե՛ք միասին, որպես համաշխարհային եկեղեցի, այս եռամսյակի ընթացքում ուսումնասիրենք Հիսուսի կենսագրությունը, որ գրել է Ղուկասը:

Ջոն Մ. Ֆաուլերը 53 տարի ծառայել է եկեղեցում՝ որպես հովիվ, աստվածաբանության և փիլիսոփայության դասախոս, խմբագիր և Կրթության բաժնի վարիչ: Նա բազմաթիվ հոդվածների և գրքերի, ինչպես նաև մեծահասակների համար՝ շաբաթօրյա դպրոցում Աստվածաշնչի ուսումնասիրության երկու ձեռնարկի հեղինակ է՝ «Տիեզերական հակամարտությունը Քրիստոսի և սատանայի միջև» (2002 թ.) և «Եփեսացիներին ուղված ուղերձը. փոխհարաբերությունների ավետարան» (2005 թ.):

ԴԱՍ 1

ՄԱՐՏԻ 28 - ԱՊՐԻԼԻ 3

ՀԻՍՈՒՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Ղուկաս 1.2,3, Բ Տիմոթեոս 3.16, Ղուկաս 1.5-22, Երկրորդ Օրինաց 18.15, Ղուկաս 2.9-12,25-32:

Հիշելու համարը.
«Որովհետև Աստծո առաջին ոչ մի բան անկարելի չէ» (Ղուկաս 1.37):

Ղուկասի Ավետարանը գրվել է առաջին հերթին հեթանոսների համար: Ղուկասն ինքը հեթանոս էր (դա ենթադրվում է Կողոսացիս 4.10-14-ի համատեքստից), ինչպես և Թեոփիլեին հասցեագրված լինելուց:

Բացի նրանից, որ Ղուկասը բժիշկ էր, նա նաև բծախնդիր պատմաբան էր: Ավետարանի սկզբում Ղուկասը Հիսուսին «տեղավորում է» իրական պատմության մեջ, այսինքն՝ նա իր պատմությունը ներդնում է իր ժամանակի պատմական համատեքստի մեջ. Հերովդեսը Հուդայի թագավորն էր (Ղուկաս 1.5), Օգոստոսը թագավորում էր Հռոմեական կայսրությունում (Ղուկաս 2.1), իսկ Զաքարիա անունով քահանան ծառայում էր Երուսաղեմի տաճարում (Ղուկաս 1.5,9): Երրորդ գլխում Ղուկասը հիշատակում է իրեն հայտնի վեց տարեթիվ՝ կապված Հիսուսի նախակարապետի՝ Հովհաննես Մկրտչի ծառայության հետ:

Այսպիսով, Ղուկասը Հիսուսի կյանքի մասին պատմությունը տեղավորում է պատմության ընթացքի մեջ՝ նշելով որոշակի անուններ և ամսաթվեր, որպեսզի ընթերցողը նվազագույն իսկ կասկած չունենա մտածելու, թե այդ պատումը հորինված է: Ընթերցողները պետք է երկյուղեն և զարմանան՝ հասկանալով, որ Հիսուսն իրական է, և որ Աստված մարդկության պատմությանը միջամտեց Հիսուսի միջոցով, «Որ է Քրիստոս Տերը» (Ղուկաս 2.11):

Միաշաբթի **մարտի 29**

«Կարգով գրել... »
(Ղուկաս 1.1-3, Գործք առաքելոց 1.1-3)

Գործք առաքելոց 1.1-ն ասում է, որ նախքան «Գործք առաքելոց» գրքի գրվելը դրա հեղինակը գրել է «առաջին գիրքը»: Այս, ինչպես նաև այն փաստը, որ երկու պատումներն էլ հասցեագրված էին Թեոփիլեին, օգնում են մեզ՝ հանգելու այն եզրակացության, որ երկու գիրքն էլ նույն հեղինակն է գրել: Երկու պատումներն էլ կարելի է դիտարկել որպես «Քրիստոնեական եկեղեցու ծագումն ու պատմությունը» գրքի առաջին և երկրորդ մասեր: Առաջին մասը (Ավետարան ըստ Ղուկասի) պատմություն է Հիսուսի կյանքի և ծառայության մասին, իսկ երկրորդը (Գործք առաքելոց) Հիսուսի լուրի տարածման և վաղ եկեղեցու զարգացման պատմությունն է:

Ինչպե՞ս է գրվել Ավետարանը: Կարդացե՛ք Ղուկաս 1.2,3 և Բ Տիմոթեոս 3.16-ը: _____

_____

_____

_____

Ղուկասը շատ մարդկանց էր ճանաչում, ովքեր գրում էին իրադարձությունների մասին, որ ցնցել են Երուսաղեմ քաղաքը և նրա շրջակայքը, իրադարձություններ, որոնք կապված էին Հիսուս Քրիստոսի հետ: Նրա գրական ստեղծագործությունների համար տեղեկատվության աղբյուր էին «ականատես և խոսքին սպասավոր լինողները» (Ղուկաս 1.2)՝ հստակ հղում աշակերտներին և Հիսուսի այլ ականատեսներին: Ղուկասն ինքը ճանաչում էր այդ վկաներին ու ծառայողներին (օրինակ՝ Պողոսին և մյուս առաքյալներին) և, հնարավոր է, կարդացել էր Մարկոսի ու Մատթեոսի գրած Ավետարանները: Ղուկասն, ըստ երևույթին, Հիսուսի կյանքի ականատեսը չէր եղել, բայց նա Քրիստոսի արժանավոր ու ճշմարիտ հետևորդն էր:

Մատթեոսը գրում էր հրեաներից բաղկացած լսարանին՝ Հիսուսին ներկայացնելով որպես մեծ Ուսուցիչ, որպես մարգարեությունները կատարող և որպես Հուդայի Թագավոր: Նա հաճախ հիմնվում է Քրիստոսի հետ կապված հինկտակարանյան մարգարեությունների վրա, որոնք կատարվել են: Մարկոսը գրում էր հռոմեական լսարանի համար. նա Հիսուսի մասին պատմում է որպես գործի Մարդու: Ղուկասը՝ բժիշկ և հեթանոս, գրում էր հույների ու հեթանոսների

համար: Պատմելով Հիսուսի մասին՝ նա ընթերցողին է ներկայացնում աշխարհի Փրկչին: Ղուկասը հիշատակում է իր աշխատության երկու նպատակների մասին. «կարգով գրել» (Ղուկաս 1.3) և ընթերցողին ներկայացնել «հաստատուն հիմք» (Ղուկաս 1.4. բառացի թարգմանություն) նոր դարաշրջանի մեծ ուսմունքի, ճշմարտության մասին, որ հայտնվել է Հիսուսում:

Ղուկասը՝ Սուրբ Գրքի՝ Աստծուց ոգեշնչված հեղինակը, իր աշխատության մեջ այլ նյութեր է օգտագործել: Սա հետաքրքիր փաստ է: Ակնհայտ է, որ այլ աղբյուրների օգտագործումը ոչ մի կերպ չի ազդում աշխատության հեղինակի ներշնչվածության և հեղինակության վրա: Մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս փաստից:

Երկուշաբթի մարտի 30

«Եվ նրա անունը Հովհաննես կդնես»

Մաղաքիա մարգարեից հետո գրեթե չորս հարյուր տարվա ընթացքում Իսրայելի պատմությունը բնութագրվում է Աստծո լռությամբ: Հովհաննես Մկրտչի ծննդյան մասին հաղորդումները ցույց տվեցին, որ Աստծո լռությունը ուր որ է կխախտվի:

Հովհաննեսի և Հիսուսի ծննդյան պատմությունները նման գծեր ունեն: Երկու ծնունդներն էլ հրաշալի են. Հովհաննեսի դեպքում Եղիսաբեթը վաղուց դուրս էր եկել զավակ ունենալու տարիքից, իսկ Հիսուսի դեպքում պետք է հղիանար կույսը: Ծննդյան երկու խոստումներն էլ հայտարարել էր Գաբրիել հրեշտակը: Երկու հաղորդումն էլ ընդունվեց զարմանքով, ուրախությամբ և Աստծո կամքին հնազանդությամբ: Երկու նորածիններն էլ պետք է մեծանային և դառնային Հոգով ուժեղ (Ղուկաս 1.80, 2.40):

Բայց երկու հրաշալի նորածինների առաքելությունն ու ծառայությունը յուրահատուկ էին և տարբերվում էին մեկը մյուսից: Հովհաննեսը պետք է պատրաստեր Հիսուսի ճանապարհը (Ղուկաս 1.13-17): Հիսուսը «Աստծո Որդին» էր (համար 35) և մեսիական մարգարեությունների կատարողը (տեքստեր 31-33):

Կարդացե՛ք Ղուկաս 1.5-22-ը: Թեև Զաքարիայի մասին ասված է, որ նա Աստծո պատվիրաններում գնում էր անարատ, հրեշտակի խոստման հանդեպ նրա թերահավատությունը հանդիմանություն առաջ բերեց: Ինչպե՞ս

է դա մեզ օգնում հասկանալու, թե Հիսուսին հավատացողի համար ի՞նչ է նշանակում «անարատ»: _____

_____

_____

_____

«Զաքարիայի որդու ծնունդը, այնպես, ինչպես Աբրահամի որդու և Մարիամի Որդու ծնունդը, պետք է վիթխարի հոգևոր ճշմարտություն բացահայտեր, ճշմարտություն, որ մենք դանդաղ ենք յուրացնում և արագ ենք մոռանում. մենք ինքներս ոչ մի բարի բան չենք կարող անել, բայց այն, ինչ մեր իշխանությունից դուրս է, Տիրոջ զորությամբ կկատարվի ամեն մի խոնարհ և անկեղծորեն հավատացող հոգում: Հենց հավատով է, որ տրվեց խոստման որդին: Միայն հավատի միջոցով է ծնվում հոգևոր կյանքը, և մենք ընդունակ ենք դառնում արդար արարքներ գործել» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 98):

Հովհաննեսի ծննդյան հրաշքը կարևոր նպատակ էր հետապնդում Աստծո հարաբերություններում Իր ժողովրդի հետ: Իսրայելի պատմության մեջ մարգարեների չորսհարյուրամյա բացակայությունից հետո ի հայտ է գալիս Հովհաննեսը՝ որոշակի լուրով և վճռորոշ իշխանությամբ: Հովհաննեսի առաքելությունն ու լուրը հետևյալն էր. «որ Տիրոջ համար բարեկարգ ժողովուրդ պատրաստի» (Ղուկաս 1.17): Նա պետք է դառնար Փրկչի նախակարապետը, նա, ով ճանապարհ կպատրաստի Հիսուսի ծառայության համար:

Երեքշաբթի **մարտի 31**

«Եվ նրա անունը Հիսուս դնես»

Հիսուս Քրիստոսի ծնունդը սովորական իրադարձություն չէր: Այն նշված էր Աստծո հավիտենական օրացույցում, և «երբ որ ժամանակի լրումն եկավ, Աստված ուղարկեց իր Որդին՝ կնոջից ծնված» (Գաղատացիս 4.4): Դա եղավ առաջին խոստման իրականացումը, որ Աստված տվեց մեղանչումից հետո, Եդեմում (Ծննդոց 3.15):

Կարդացե՛ք հետևյալ զույգ տեքստերը: Տեսե՛ք, թե դրանցից յուրաքանչյուրն ինչպես է ներկայացնում Հիսուսի ծնունդը՝ մարգարեության զարմանահրաշ իրականացումը: Ինչպե՞ս է դա սովորեցնում հավատալ Աստծո բոլոր խոստումներին: Երկրորդ Օրինաց 18.15 և Գործք առաքե-

լոց 3.22-24, Եսայիա 7.14 և Մատթեոս 1.22,23, Միքիա 5.2 և Ղուկաս 2.4-7: _____

_____

_____

Վեց ամիս այն բանից հետո, երբ Գաբրիելը Զաքարիային հայտնեց Հովհաննեսի մոտալուտ ծննդյան մասին, նա նազարեթցի Մարիամին է՛լ ավելի մեծ հրաշք հայտնեց. «Եվ ահա կհղիանաս և որդի կծնես, և նրա անունը Հիսուս կդնես» (Ղուկաս 1.31):

Հիսուսի անարատ հղացումը հակասում է ֆիզիոլոգիային, և այն անհնար է բացատրել բնության օրենքներով կամ բնապաշտական փիլիսոփայությամբ: Անգամ Մարիամի մեջ հարց ծագեց. «Սա ինչպե՞ս կլինի. Ըստ որում, ես այր չգիտեմ» (տեքստ 34): Հրեշտակը վստահեցրեց նրան, որ դա կլինի Սուրբ Հոգու գործը (տեքստ 35), «որովհետև Աստծո առաջ ոչ մի բան անկարելի չէ» (տեքստ 37): Ապշեցուցիչ էր Մարիամի անհապաղ ու ակեղծ հնազանդությունը. «Թող քո խոսքի պես լինի ինձ» (տեքստ 38): Ցանկացած մարդկային հարց, որքան բնական ու տրամաբանական էլ այն լինի, պետք է նահանջի Աստծո պատասխանի առջև: Լինի դա արարումը, թե խաչը, մարմնացումը կամ հարությունը, մանանայի պարգևը, թե Սուրբ Հոգու հեղումը Պենտեկոստեի օրը, Աստծո նախաձեռնությունը պահանջում է հնազանդություն և ընդունում մարդու կողմից:

Երբ Մարիամը պատասխանեց ենթարկվելով Աստծո իշխանությանն ու հավիտենական մտահղացմանը հնազանդությամբ, Գաբրիելը նրան ևս մի մեծ լուր հայտնեց. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը քեզ վրա կհովանավորի, այդ պատճառով և այն ծնված սուրբն էլ Աստծո Որդի կկոչվի» (տեքստն 35):

Աշխարհիկ մշակույթը մարդկանց դրդում է հավատալ, որ աշխարհում ամեն բան ունի բնական և գիտական բացատրություն: Ինչո՞ւ աշխարհի վեհասքանչության և վիթխարիության հանդեպ այդպիսի դիրքորոշումն կարելի է համարել նեղ և անգամ մակերեսային:

Չորեքշաբթի ապրիլի 1

Բեթղեհեմյան մսուրը

Բեթղեհեմի մսուրի մասին պատմությունը Ղուկասն սկսում է պատմական ակնարկից: Հովսեփն ու Մարիամը թողեցին Նազարեթի

իրենց տունը և ուղևորվեցին Բեթղեհեմ՝ իրենց նախահայրերի քաղաքը՝ հնազանդվելով Կվիրինիոսի Սիրիայի կառավարիչ եղած ժամանակ հռոմեական կայսր Ավգուստինոսի հրապարակած մարդահամարի հրամանին: Աստվածաշունչը հետազոտողին այսպիսի պատմական մանրամասնությունները ցույց են տալիս, թե որքանով էր Ղուկասը հնազանդվում Սուրբ Հոգու առաջնորդությանը, որպեսզի մարմնացման մանրուքներն անգամ գրի առնի պատմական իրավիճակի համատեքստում:

Խորհեցեք այն ընտանիքի աղքատության մասին, որտեղ ծնվեց Հիսուսը: Հիսուսի ծննդյան հանգամանքների նկարագրությունը՝ «պատեց խանձարուրներով», «մսուրի մեջ դրեց», «իջևանում տեղ չկար» (Ղուկաս 2.7) այն բանի հետ, թե ինչպես է Պողոսը նկարագրում Հիսուսի խոնարհումը Փիլիպեցիս 2.5-8-ում: Ինչպիսի՞ ճանապարհ անցավ Հիսուսը հանուն մեզ: _____

_____

_____

Պատմությունն աղքատության մասին, որի ընթացքում տեղի ունեցավ երկնքի Իշխանի մարմնացումը, շարունակվում է մսուրի առաջին այցելուների՝ հովիվների նկարագրությամբ: Ոչ թե այս աշխարհի հարուստներին կամ հզորներին, ոչ թե դպիրներին կամ քահանաներին, ոչ թե երկիրը կառավարող տիրակալներին կամ իշխանություն ունեցողներին եկավ «մեծ ուրախությունը» (Ղուկաս 2.10), այլ համեստ ու արհամարհված հովիվներին: Ուշադրություն դարձրեք հաղորդման մեծազորությանն ու պարզությանը. «*Ձեզ համար Փրկիչ ծնվեց, Դավթի քաղաքում: Նա Քրիստոս Տերն է, Օծյալ: Դուք նրան կգտնեք խանձարուրում*» (հեղինակի թարգմանությունը): Երկնքի ամենաթանկարժեք նվերը եկավ այդպիսի «հասարակ փաթեթավորմամբ», ինչպես դա հաճախ է պատահում: Բայց այդ նվերը բերեց «Փառք Աստծուն», «երկրի վրա՝ խաղաղություն», և «մարդկանց մեջ՝ հաճություն» (համար 14):

Հրեշտակի ազդարարումը, որ նկարագրում է Ղուկասը (Ղուկաս 2.9-12), ի հայտ է բերում քրիստոնեական աստվածաբանության երեք կարևորագույն հարցերը: Առաջին հերթին, Ավետարանի բարի լուրը նախատեսված է «բոլոր մարդկանց» համար: Հիսուսում և՛ հրեաները, և՛ հեթանոսները դառնում են Աստծո մեկ ժողովուրդ: Երկրորդ, Հիսուսը Փրկիչն է. ուրիշը չկա: Երրորդ, Հիսուսը Քրիստոս Տերն է:

Այս երեք թեմաները, որ այդքան հստակորեն ներկայացված են Ղուկասի Ավետարանի սկզբում, հետագայում դառնում են առաքյալների քարոզի, մասնավորապես՝ Պողոսի քարոզի հիմքը:

Խորհեցե՛ք այն մասին, ինչին հավատում ենք մենք՝ քրիստոնյաներս. ողջ արարչագործության Արարիչը (Հովհաննես 1.1-3) ոչ միայն այս ընկած աշխարհ եկավ որպես մարդ, այլ նաև Հիսուսում ծանր կյանք ապրեց՝ միայն որպեսզի խաչ բարձրանա: Եթե մենք իսկապես հավատում ենք սրան, ինչո՞ւ պետք է մեր կյանքի յուրաքանչյուր տեսանկյունը ենթարկենք այս զարմանահրաշ ճշմարտությանը: Ձեր կյանքի ո՞ր տեսանկյուններն են արտացոլում Հիսուսի պատմության հանդեպ ձեր հավատը, իսկ որոնք՝ ոչ:

Հինգշաբթի ապրիլի 2

Փրկչի գալստյան վկաները

Թեև Ղուկասը գրում էր առաջին հերթին հեթանոսների համար, նա չի մոռանում Հին Կտակարանում ներկայացված հրեական ժառանգության կարևորության մասին: Նա հոգ է տանում, որ Նոր Կտակարանի պատմությունը կապակցի Հին Կտակարանի հետ, և ցույց է տալիս, թե ինչպես Մարիամն ու Հովսեփը մանուկ Հիսուսին բերում են Երուսաղեմի տաճարը՝ ծնունդից հետո ութերորդ օրը թլփատելու համար՝ համաձայն հրեական օրենքի (Ղուկաս 2.22-24):

Կարդացե՛ք Ղուկաս 2.25-32-ը: Ուշադրությո՛ւն դարձրեք փրկության աստվածաբանության երեք տեսանկյուններին, որոնք Սիմեոնը համարում է առաջնային. փրկությունը եկավ Հիսուսի միջոցով, փրկությունը պատրաստված է Աստծո կողմից, փրկությունը նախատեսված է բոլոր ազգերի համար՝ ինչպես հեթանոսների, այնպես էլ՝ հրեաների: Այս ճշմարտություններն ինչպե՞ս են կապված Հայտնություն 14.6,7-ի առաջին հրեշտակի պատգամի հետ: ___

_____

_____

Սիմեոնի մարգարեությունը մատնանշում էր նաև Հիսուսի ծառայության երկու էական առանձնահատկությունները:

Նախ, Քրիստոսը «կա... Իսրայելի մեջ շատերի համար ընկնելու և կանգնելու... նշան» (Ղուկաս 2.34): Այո, Քրիստոսը լույս և փրկու-

թյուն բերեց բոլոր մարդկանց, բայց այդ բարիքներն ստացողները պետք է որոշակի գին վճարեն: Քրիստոսի հարցում անհնար է չեզոքություն պահպանել. կա՛մ դուք Նրան ընդունում եք, կա՛մ էլ մերժում եք, և ձեր արձագանքից է կախված ձեր փրկությունը: Քրիստոսը բացառիկություն է պահանջում. կա՛մ մենք հարատևում ենք Նրանում, կա՛մ ոչ: Նրանք, ովքեր հարատևում են Նրանում, հարություն կառնեն և կապրեն Նրա թագավորությունում, իսկ նրանք, ովքեր մերժում են Նրան կամ էլ անտարբեր են մնում Նրա հանդեպ, անհույս կկործանվեն: Քրիստոսի հանդեպ հավատը բանակցությունների առարկա չէ:

Երկրորդ, Սիմեոնը մարգարեանում է Մարիամին, որ հենց նրա «անձով սուր կանցնի» (Ղուկաս 2.35): Անկասկած, սա մատնանշում է խաչը, որի վկան կդառնա Մարիամը: Մարիամը և բոլոր սերունդները, որ կհետևեն նրան, պետք է հիշեն, որ առանց խաչի փրկություն չկա: Խաչը կենտրոնն է, որի շուրջը պտտվում է փրկության ողջ ծրագիրը:

Փրկությունը պարգև է այն իմաստով, որ մենք չենք կարող ոչինչ անել, որպեսզի վաստակենք այն: Այնուամենայնիվ, այն կարող է շատ թանկ արժենալ նրանց համար, ովքեր ընդունում են այն: Ձեզ ի՞նչ է արժեցել Քրիստոսին հետևելը, և ինչո՞ւ այդ գինը, ինչպիսին էլ այն լինի, այնուամենայնիվ, բավականաչափ փոքր է:

Ուրբաթ ապրիլի 3

Հետագա ուսումնասիրության համար

«Ղուկասը՝ չորս Ավետարաններից մեկի հեղինակը, բժիշկ-ավետարանիչ էր: Սուրբ Գրքում նա անվանված է «բժիշկ սիրելի» (Կողոսացիս 4.14): Պողոս առաքյալը լսել էր Ղուկասի բժշկական հմտության մասին և փնտրելով՝ գտել էր նրան՝ հասկանալով, որ Աստված առանձնահատուկ աշխատանք է վստահել նրան: Նա ներգրավել էր նրան համագործակցության մեջ, և որոշ ժամանակ Ղուկասը ուղեկցում էր Պողոսին նրա ավետարանչական ճանապարհորդությունների ընթացքում: Հետո Պողոսը Ղուկասին թողեց Փիլիպպեում՝ Մակեդոնիայում: Այստեղ Ղուկասը մի քանի տարի շարունակում էր աշխատել որպես բժիշկ և Ավետարանի ուսուցիչ: Նա ծառայում էր հիվանդներին, իսկ հետո աղոթում էր, որպեսզի Աստծո բժշկող զորությունը իջնի տկարների վրա: Այդպես ճանապարհ էր բացվում ավետարանի լուրի համար: Որպես բժիշկ՝ Ղուկասի ունեցած

հաջողությունը՝ հեթանոսների մեջ Քրիստոսին քարոզելու բազում հնարավորություններ էր բացում: Աստծո մտահղացումն այն է, որ մենք էլ գործենք նման ձևով» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 140, 141):

Հարցեր քննարկման համար

1. Եթե իր Ավետարանը գրելիս Ղուկասն օգտագործել է արդեն գոյություն ունեցող նյութերը, մենք ինչպե՞ս պետք է հասկանանք Սուրբ Գրքի ներշնչվածությունը (Բ Տիմոթեոս 3.16): Ինչպե՞ս է գործում աստվածային ներշնչանքը: Տե՛ս «Աստվածաշնչյան գրողների ներշնչվածությունը» գլուխը Է. Ուայթի «Հատընտիր լուրեր» գրքում, հատոր 1, 15-23:
2. Անարատ հղիությունը Աստծո գործողություն է, որն իր վրա կրում է Նրա խորհուրդի, մեծության և առաքելության հետքը: Սա իսկապես դուրս է մարդկային ըմբռնման սահմաններից: Բայց, այնուամենայնիվ, ո՞րն է դրա բացառիկությունը: Որքա՞ն բնական երևույթներ գոյություն ունեն, որոնք նույնպես դուրս են մարդկային ըմբռնման սահմաններից: Եթե Աստված կարող է ստեղծել ու պահպանել տիեզերքը, մի՞թե անարատ հղիության նման գործողությունները կարող են դժվարություն ներկայացնել Նրա համար: Միայն նրանք, ում աշխարհայացքը սահմանափակված է բնական օրենքներով (առնվազն՝ նրանցով, որ մենք գիտենք ներկայումս), կարող են մերժել անարատ հղիության գաղափարը: Իսկ նրանք, ում աշխարհայացքը ներառում է գերբնականը, չպետք է կասկածեն դրան: Տեսե՛ք, թե հրեշտակն ինչ ասաց Մարիամին այն բանից հետո, երբ նրան հայտնեց անհավատալի լուրը. «Որովհետև Աստծո առջև ոչ մի բան անկարելի չէ»:
3. Մի ամերիկացի հեռուստալրագրող հայտարարեց, որ եթե ինքը հնարավորություն ունենար հարցազրույց վերցնել Հիսուս Քրիստոսից, նա Նրան միայն մեկ հարց կտար. «Դու իսկապե՞ս կույսից ես ծնվել»: Իսկապես այդքան կարևո՞ր է այս հարցը:

ԴԱՍ 2

ԱՊՐԻԼԻ 4-10

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 3.1-14, Հռոմեացիս 6.1-6, Ղուկաս 3.21,22, Ղուկաս 4.5-8, Եսայիա 14.13,14, Ղուկաս 4.9-13:

Հիշելու համարը.

«Եվ Սուրբ Հոգին մարմնավոր տեսիլքով աղավնու պես իջավ նրա վրա. Եվ երկնքից ձայն եղավ, որ ասում էր. Դու ես իմ սիրելի Որդին, ես քեզ հավանեցի» (Ղուկաս 3.22):

Ինչպես տեսանք անցյալ շաբաթ, Ղուկասը բերում է պատմական խոշոր պաշտոնյաների ցանկը՝ ցույց տալու համար, որ Հիսուսի և Հովհաննեսի մասին իր պատմությունը նույնքան իրական և պատմական է, որքան և այս աշխարհի այդ հզորները:

Բայց այդ մեծազոր ու ազդեցիկ մարդկանց հիշատակելու ևս մեկ կարևոր պատճառ գոյություն ունի: Ղուկասը նրանց հակադրում է անապատից եկած խոնարհ մարդուն՝ Հովհաննես Մկրտչին, Աստծո կողմից ընտրված լրաբերին, ով պետք է «ճանապարհի պատրաստեր» մարդկության պատմության ամենանշանակալից իրադարձության՝ Հիսուսի՝ աշխարհի Փրկչի գալստյան համար: Հետաքրքիր է, որ Աստված Փրկչի մունետիկ ընտրեց ոչ թե «մեծերից» մեկին, այլ «փոքրերից» մեկին:

Միավորելով այս բոլոր պատմական իրողությունները՝ հետազոտողները մեզ տալիս են Հովհաննես Մկրտչի և Հիսուսի ծառայության սկզբի տարեթիվը՝ Ք.հ. 27 կամ 28 թվականի մոտ: Հենց Հռոմեական կայսրության գոյության այս շրջանակներում Հիսուսը մկրտվեց և ստացավ երկնքի հավաստիացումը, որ Ինքը Աստծո «սիրելի Որդին» է (Ղուկաս 3.22): Ղուկասն այս փաստը սահմանում է ամենասկզբում՝ դեռևս նախքան Հիսուս Քրիստոսի առաքելությունն ու ծառայությունը իր ընթերցողներին «կարգով գրել» սկսելը:

Միաշաբթի ապրիլի 5

«Պատրա՛ստ արեք Տիրոջ ճանապարհը»

Ղուկասի Ավետարանի երրորդ գլխում Հովհաննեսը հայտնվում է իր եզակի և փրկության պատմության համար կարևոր դերով: Շատ բան կարելի է ասել Հովհաննեսի քարոզի մասին, բայց մի բան ակներև է. նա իր խոսքերը չէր պճնում՝ ի հաճություն ամբոխի:

Կարդացե՛ք Ղուկաս 3.1-14-ը: Հովհաննեսի այս խոսքերը բովանդակում են ճշմարտություններ, որոնք կարևոր են ոչ միայն նրա անմիջական ունկնդիրների, այլ նաև մեզ բոլորիս համար: Ի՞նչ որոշակի ճշմարտություններ կարող եք քաղել ձեզ համար այն ամենից, ինչ այստեղ ասում է Հովհաննեսը: _____

_____

Ապաշխարությունը պարզապես տեսական հասկացություն չէ, այն կենսակերպ է: Բառը ծագում է հունարեն *մետանոյա* բառից, ինչը նշանակում է մտքի փոփոխություն, և այն հանգեցնում է նոր կյանքի:

«Մկրտել»՝ նշանակում է սուզել կամ լիովին ընկղմել ջրի մեջ: Ընկղմումը խորը իմաստ ունի: Նախքան Հովհաննես Մկրտիչն էլ՝ հրեաները ընկղմամբ մկրտությանը վիթխարի նշանակություն էին տալիս: Այդ ծեսը սովորաբար կատարում էին հեթանոս նորադարձների հանդեպ, ովքեր որոշում էին միանալ հրեաների հավատին:

Հրեաներին առաջարկելով մկրտվել՝ Հովհաննես Մկրտիչը սահմանեց նոր սկզբունք. մկրտությունը՝ հրապարակավ սեփական հին, մեղավոր ճանապարհներից հրաժարվելու և սեփական անձը Մեսիայի գալստյանը պատրաստելու հնարավորություն է: Այսպիսով, Հովհաննես Մկրտիչը ներմուծեց մեղքից հրաժարվելու և սեփական անձը նոր կենսակերպին նվիրելու խորհրդանշական ակտը՝ որպես Փրկչի թագավորության քաղաքացի, Ով ուր որ է պիտի օծվեր: Հովհաննեսն իսկույն ավելացրեց, որ ինքը մկրտում է միայն ջրով, բայց Նա, Ով գալու է իր հետևից, «Սուրբ Հոգով և կրակով կմկրտի» (Ղուկաս 3.16): Այսպիսով, կարևոր ճշմարտություն է ներկայացված. մկրտությունը՝ որպես ջրում ընղմվելու գործողություն, սոսկ ներքին փոփոխությունների խորհրդանիշ է, փոփոխություններ, որոնք վերջին հաշվով կնքվելու են Սուրբ Հոգու մկրտությամբ:

Կարդացե՛ք Հռոմեացիս 6.1-6-ը: Պողոս առաքյալն ի՞նչ հոգևոր դասեր է քաղում մկրտության գործողությունից:

Ուշադրությո՛ւն դարձրեք համեմատությանը, որ նա անում է ջրի մեջ ընկղմվելու գործողության և ջրից դուրս գալու միջև, մեղքի համար մահանալու և արդար կյանքի միջև: Այս նոր կյանքը Քրիստոսում ինչպե՞ս է դրսևորվել ձեր կյանքում: Դրա ո՞ր ոլորտներոն են դեռևս մնում «ջրի տակ»:

Երկուշաբթի ապրիլի 6

«Դու ես իմ սիրելի Որդին»

Ղուկաս 2.41-50-ում մենք կարդում ենք հանրահայտ պատմությունն այն մասին, թե ինչպես Հովսեփն ու Մարիամը Հիսուսին կորցրեցին Երուսաղեմում: Հատկապես ուշադրության է արժանի Հիսուսի պատասխանը Մարիամի հանդիմանությանը (տեքստ 48): Նրա պատասխանը ցույց է տալիս, որ Նա հասկանում էր Իր աստվածային էությունը, որ Ինքը Աստծո Որդին է. «Ինչո՞ւ համար էիք ինձ որոնում. դուք չգիտեի՞ք, թե պետք է, որ ես իմ Հոր տանը լինեմ» (տեքստ 49): ԻՆչպես ասվում է հաջորդ տեքստում, Հովսեփն ու Մարիամը չհասկացան այն բանի իմաստը, ինչ ասաց Հիսուսը: Եվ ինչպե՞ս կարող էին հասկանալ: Չէ՞ որ անգամ աշակերտները, մի քանի տարի անցկացնելով Հիսուսի հետ, դեռևս լիովին վստահ չէին, թե ով էր Նա և ինչ պետք է աներ:

Օրինակ, Իր հարությունից հետո Հիսուսը Էմմաուսի ճանապարհին խոսում էր երկու աշակերտի հետ: Նրանցից մեկը, պատմելով Հիսուսի մասին, ասաց, որ Նա «մի մարգարե մարդ էր, զորավոր գործերով Աստծո և բոլոր ժողովրդի առջև» (Ղուկաս 24.19): Հիսուսը, իհարկե, շատ ավելին էր, քան մարգարեն: Անգամ այդ ժամանակ նրանք դեռևս չէին հասկանում, թե Ով է նա, և եկել էր ի՞նչ անելու :

Կարդացե՛ք Մատթեոս 3.13-17, Հովհաննես 1.29-34 և Ղուկաս 3.21,22: Ո՞րն է Հիսուսի մկրտության իմաստը: __

_____

_____

Հիսուսի մկրտության ժամանակ երկինքը վկայեց, որ Նա Աստծո Որդին է: Հիսուսը մկրտությունն ընդունեց ոչ թե այն պատճառով, որ նրա կարիքն ուներ որպես դարձի գալու և ապաշխարության գործընթացի մի մաս, այլ որպեսզի օրինակ ցույց տա ուրիշներին (Մատթեոս 3.14,15): Հիսուսի մկրտության վերաբերյալ կարելի է առանձնացնել երեք կարևոր գործոն.

(1) Հովհաննես Մկրտիչը հռչակեց. «Ահա՛ Աստծո Գառը, որ *վեր է առնում* աշխարհի մեղքը» (Հովհաննես 1.29), (2) Սուրբ Հոգին օծեց Նրան՝ առաջիկա առաքելության համար, (3) Երկինքը հռչակեց, որ Հիսուսը Աստծո Որդին է, Ում վրա է Աստծո օրհնությունը:

Խորհեցե՛ք ահա թե ինչի մասին. Աստծո անմեղ Որդին, տիեզերքի Արարիչը մկրտվեց հասարակ մարդու կողմից, և այդ ամենը փրկության ծրագրի մի մասն էր: Նրա այդ զարմանահրաշ խոնարհությունը պետք է օգնի մեզ՝ պատրաստ լինելու խոնարհվել, երբ դա կպահանջեն հանգամանքները:

Երեքշաբթի ապրիլի 7

«Ոչ միայն հացով»

«Եվ Հիսուսը, Սուրբ Հոգով լցված... Հոգիով տարվեց անապատ: Քառասուն օր սատանայից փորձվեց» (Ղուկաս 4.1,2): Ծնված լինելով Աստծո կողմից կանխորոշված առաքելությունը կատարելու համար, մկրտության ժամանակ լիազորվելով կատարելու որոշակի աշխատանք, Սուրբ Հոգու զորությամբ օժտված՝ Հիսուս Քրիստոսը ուղևորվեց անապատ, որպեսզի իմաստավորի Իր առջև եղած խնդիրը:

Անապատում փորձությունը նշանավոր ճակատամարտ դարձավ Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարում, որ շարունակվում է այն ժամանակից ի վեր, երբ Արուսյակը խռովություն բարձրացրեց երկնքում: Անապատում, երբ Փրկիչը թուլացավ քառասնօրյա ծոմից հետո, երբ առաջիկա ծոմը մռայլ ու հյուծիչ պիտի լիներ, սատանան անձամբ հարձակվեց Հիսուսի վրա: «Սատանան հասկացավ, որ ինքը պետք է կա՛մ հաղթի, կա՛մ էլ վերջնական պարտություն կրի: Այդ պայքարը չափազանց լուրջ էր, որպեսզի այն վստահեր իր համախոհ հրեշտակներին, նա ինքը մտավ ճակատամարտի դաշտ» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 116):

Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ ասաց սատանան Քրիստոսին. «Եթե Աստծո Որդի ես, ասա այդ քարին, որ հաց դառնա» (Ղուկաս 4.3): Սատանայի այս փորձն ինչպե՞ս է արտացոլում այն, ինչ նա փորձել էր անել երկնքում»:_____

_____

_____

Առաջին փորձության էությունը հացը չէ, և ոչ էլ քաղցը: Այո՛, անապատում քառասնօրյա ծոմից հետո Փրկիչը պետք է որ ուժեղ քաղց զգար, և սատանան այդ հանգամանքն օգտագործեց որպես խայծ: Բայց սատանան գիտեր, որ Հիսուսը տիեզերքի Արարիչն է: Նրա համար, Ով ոչնչից ստեղծել էր տիեզերքը, քարից հաց ստեղծելը ոչ մի խնդիր չէր ներկայացնում: Փորձության կարևորագույն պահը մենք գտնում ենք հետևյալ արտահայտության մեջ. «Եթե Աստծո Որդի ես... »: Ընդամենը դրանից 40 օր առաջ երկնքից ձայնը վկայեց, որ Հիսուսն իսկապես Աստծո Որդին է, և այժմ Հիսուսը կկասկածի՞ արդյոք այդ երկնային հավաստմանը: Աստծո Խոսքին կասկածելը փորձությանը զիջելու առաջին քայլն է: Երկնքում սատանան վիճարկում էր Հիսուսի իրավունքները. առավել նուրբ ձևով նա այդպես էր վարվում նաև այժմ:

Ինչպե՞ս սովորել չկասկածել Աստծո խոստումներին:

Չորեքշաբթի ապրիլի 8

«Եթե իմ առաջ ընկած երկրպագություն անես»

Կարդացե՛ք Ղուկաս 4.5-8-ը: Ինչո՞ւ էր սատանան ուզում, որ Հիսուսը երկրպագի իրեն: Այստեղ ո՞րն էր խաղագումարը: _____

_____

_____

Երկրպագությունը Աստծո բացառիկ արտոնությունն է: Սա այն գործոններից մեկն է, որը կտրուկ կերպով տարբերում է Արարչին արարվածից: Արուսյակի խռովության ժամանակ բարձրացված հարցերից մեկը երկրպագության հարցն էր: Արուսյակի հավակնությունները լավ ամփոփված են Եսայիա մարգարեի գրքի 14.13,14-ում՝ վեր ելնել երկինք, աստղերից բարձր դնել իր աթոռը, Բարձրյալին նմանվել: Սա իշխանությունը բռնազավթելու փորձ էր, որը պատկանում է միայն Արարչին և ոչ մի այլ կենդանի էակի, որքան էլ բարձրաստիճան լինի նա:

Այս համատեքստում մենք կարող ենք ավելի լավ հասկանալ, թե ինչ է տեղի ունենում Քրիստոսի փորձության ժամանակ: Երբ Հիսուսը գործնականում պատրաստ էր սկսել աշխարհի փրկագնման և Իր սեփականությունը Աստծո իշխանության ներքո վերադարձնելու Իր առաքելությունը, սատանան Նրան բարձրացրեց լեռան գագաթը,

ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունների համայնապատկերը և դրանք առաջարկեց Նրան՝ մեն-միակ գործողության դիմաց. «Եթե իմ առաջ ընկած երկրպագություն անես, բոլորը քոնը կլինի» (Ղուկաս 4.7):

Սատանան ջանում էր Քրիստոսի հայացքը հեռացնել Իր աստվածային առաքելությունից և Նրան գայթակղել այն շքեղությամբ ու փառքով, որ կարելի է ստանալ հասարակ երկրպագության դիմաց: Նա այստեղ ջանում էր իշխանություն և երկրպագություն ստանալ, որոնք նրան չէր հաջողվել ստանալ երկնքում:

Ուշադրությո՛ւն դարձրեք այն բանին, թե ինչպես Քրիստոսը մերժեց փորձչին. «Ետս գնա, սատանա՛» (համար 8): Երկրպագությունն ու դրա հետ կապված ծառայությունը պատկանում են միմիայն արարիչ Աստծուն: Եվ այստեղ կրկինՆրան օգնության է գալիս Աստծո Խոսքը: Հենց Աստծո ներշնչանքն էր Մովսեսի միջոցով ասել. «Լսիր, ով Իսրայել, մեր Եհովա Աստվածը՝ Եհովան մեկ է: Եվ սիրիր քո Եհովա Աստծուն... Քո Եհովա Աստծուց վախեցիր և նրան պաշտիր» (Երկրորդ Օրինաց 6.4,5,13): Հավատով և հնազանդությամբ Աստծուն հետևելու անսասան որոշումը վերջնական պատասխանն է սատանայի ստին ու որոգայթներին:

Մեզանից յուրաքանչյուրը կարող է հավատի հարցերում բախվել փոխզիջման գնալու գայթակղությանը, անգամ՝ «մանրուքներում»: Ի՞նչ կլինի, եթե լավ աշխատանքը, բուհի ընդունելության քննությունը կամ ծառայողական առաջխաղացումը փոխզիջում պահանջի շաբաթ օրվա հարցում: Իսկ եթե վիզա ստանալու համար անհրաժեշտ է թաքցնե՞լ հավատի մասին տեղեկատվությունը: Ո՞ր պահին դուք կսայթաքեք: Կա՞ն դեպքեր, երբ փոխզիջումն ընդունելի է:

Հինգշաբթի ապրիլի 9

Հաղթող Քրիստոսը

Ղուկասն ու Մատթեոսը տեղերով փոխում են երկրորդ ու երրորդ փորձությունները: Պատճառը հայտնի չէ, բայց դա չպետք է շփոթեցնի մեզ: Գլխավորը Քրիստոսի վերջնական հաղթանակն է սատանայի հանդեպ, որ հռչակում են երկու Ավետարաններն էլ: Կարևոր եզրակացություն կարելի է քաղել Ավետարանների ուսում-

նասիրությունից. Հիսուս Քրիստոսը իրական մարդ է՝ մեզ նման փորձվելու ենթակա, ինչպես և մենք, բայց մեղք չունի (Եբրայեցիս 4.15): Հաղթանակ տանելով փորձություններից յուրաքանչյուրում, հաղթահարելով սատանային, Աստծո Խոսքն ունենալով բերանում և աղոթքի միջոցով սերտ կապի մեջ լինելով զորության երկնային աղբյուրի հետ՝ Հիսուսը հայտնվում է, որպեսզի հռչակի Աստծո արքայությունը և նշանավորի մեսիական ժամանակաշրջանի սկիզբը:

Կարդացե՛ք Ղուկաս 4.9-13 և Մատթեոս 4.5-7-ը: Առաջին երկու փորձություններում Հիսուսը սատանայի փորձությունները հաղթահարելու համար օգտագործում է Սուրբ Գիրքը: Այժմ՝ երրորդ փորձության ժամանակ, սատանան անում է նույն բանը և մեջբերում է Սուրբ Գիրքը՝ իբրև թե ստուգելու համար, թե իսկապե՞ս Հիսուսը լրջորեն է վերաբերվում Աստծո Խոսքին: Ի՞նչ է տեղի ունենում այստեղ, և ի՞նչ է պատասխանում Հիսուսը: _____

_____

_____

_____

Սատանան Հիսուսին բարձրացնում է Երուսաղեմի տաճարի գագաթը՝ հրեաների պատմության ամենասրբազան վայրը: Սիոն քաղաքը, տաճարը, որտեղ Աստված բնակվում է Իր ժողովրդի մեջ, դառնում է Հիսուսի հետ սատանայի բախման վայրը: Եվ կրկին այս նախաբանը. «Եթե դու Աստծո Որդին ես»: Տեսե՛ք, թե ինչ է ասում սատանան. եթե իսկապես Աստված Քո Հայրն է, և եթե Քո առաքելությունը իսկապես Նրա կամքով է, ցա՛ծ նետվիր տաճարի աշտարակից ու ևս մեկ անգամ ստուգի՛ր դա: Եվ եթե այդ ամենը ճիշտ է, Աստված Քեզ թույլ չի տա ջախջախվել: Հետո նա մեջբերում է Սուրբ Գիրքը. «Իր հրեշտակներին կհրամայի, որ քեզ պահեն» (Ղուկաս 4.10):

Սատանան գիտի Սուրբ Գիրքը, բայց նա աղավաղում է այն: Նրա մարտավարությունն է՝ ստիպել Հիսուսին՝ փորձելու Աստծուն: Աստված իսկապես խոստացել է Իր հրեշտակների պաշտպանությունը, բայց միայն Իր կամքի կատարման համատեքստում, օրինակ, ինչպես Դանիելի և նրա ընկերների դեպքում: Հիսուսը միշտ վճռականորեն է պատասխանում սատանային՝ օգտագործելով Սուրբ Գիրքը, հայտարարելով, որ հարկավոր չէ փորձել Աստծուն (համար 12, Ռուսաստանի աստվածաշնչյան ընկերության թարգմանություն): Մեր պարտքն է մեզ հանձնել Աստծո ձեռքը, և թո՛ղ Նա անի մնացած ամեն ինչը:

Նկատե՛ք փորձության բնույթի մասին աստվածաշնչյան չորս հիմնական ճշմարտությունները. (1) ոչ ոք ազատ չէ գայթակղություններից, (2) երբ Աստված թույլ է տալիս գայթակղություններին՝ գալ մեզ մոտ, Նա նաև տալիս է շնորհը, որպեսզի մենք կարողանանք դիմադրել դրանց, և ուժ՝ դրանք հաղթահարելու համար, (3) փորձությունները չեն գալիս ամեն անգամ նույն ձևով, (4) ոչ ոքի չի ուղարկվում իր ուժերից վեր փորձություն, այլ այնպես, որ մենք կարողանանք տանել դա (Ա Կորնթացիս 10.13):

Ուրբաթ **ապրիլի 10**

Հետագա ուսումնասիրության համար

«Եթե Հովսեփն ու Մարիամը իրենց մտքերը կենտրոնացնեին Աստծո վրա՝ մտորելով ու աղոթելով, նրանք կգիտակցեին իրենց հանդեպ ցուցաբերված սրբազան վստահությունը և աչքից բաց չէին թողնի Հիսուսին: Մի անգամ անփութություն դրսևորելով՝ նրանք կորցրեցին Փրկչին, և դա նրանց համար երեք օրվա հոգս ու անհանգստություն արժեցավ: Այդպես էլ մենք, հրապուրվելով դատարկ խոսակցություններով, չարախոսությամբ կամ անտեսելով աղոթքը, ենթարկվում ենք մի անգամ Փրկչին կորցնելու վտանգին, և այդ ժամանակ մենք պետք է շատ օրեր անցկացնենք տրտում որոնումներում, որպեսզի կրկին գտնենք Նրան և վերադարձնենք խաղաղությունը, որ կորցրել ենք» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 83):

Հարցեր քննարկման համար

1. Փորձությունն ինքնին մեղք չէ: Աստվածաշնչյան իմաստով փորձությունը անգամ կարող է ավելի ուժեղ դարձնել մարդուն: Փորձվելը մի բան է, մեղք գործելը՝ միանգամայն այլ բան: Ո՞րն է մեր պատասխանատվությունը գայթակղությունից խուսափելու հարցում:
2. Փիլիսոփաներն ու աստվածաբանները հաճախ օգտագործում են «մետապատում» եզրույթը՝ խոշոր համընդգրկուն պատմություն կամ թեմա, որի շրջանակներում տեղի են ունենում մյուս պատմությունները: Այլ խոսքերով՝ մետապատումը ֆոնն է, համատեքստը, որտեղ ծավալվում են մյուս պատմությունները կամ իրադարձությունները: Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝

մենք մեծ պայքարը դիտարկում ենք որպես «մետապատում» կամ իրադարձությունների ֆոն, որոնք տեղի են ունենում ոչ միայն այստեղ՝ երկրի վրա, այլ նաև երկնքում: Աստվածաշնչյան ի՞նչ համարներ են մեզ ցույց տալիս մեծ պայքարի իրական բնույթը, և ինչպե՞ս է այն օգնում՝ բացատրելու աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները:

3. Հիշե՛ք ամենավառ և համոզիչ աստվածաշնչյան տեքստերը, որոնք մեզ հաղթանակ են խոստանում փորձությունների դեմ, որ հանդիպում են մեր ճանապարհին: Ինչո՞ւ, անգամ ունենալով այդ խոստումները, երբեմն այդքան դժվար է դիմակայելը:
4. Երեքշաբթի օրվա դասում ասված է. «Աստծո խոսքին կասկածելը առաջին քայլն է փորձությանը զիջելու մեջ»: Ինչո՞ւ է դա այդպես:
5. Էլ ի՞նչ ձևեր կարող է ընդունել կռապաշտությունը, եթե չհաշվենք որևէ այլ բանի երկրպագելը՝ Աստծուց բացի: Ինչպե՞ս կարող է քողարկվել այն:

ԴԱՍ 3

ԱՊՐԻԼԻ 11-17

Ո՞Վ Է ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 4.16-30, 6.5, Եփեսացիս 1.3-5, Ղուկաս 9.18-27, Բ Պետրոս 1.16-18:

Հիշելու համարը.

«Եվ նրանց ասաց. Բայց դուք ո՞վ եք ասում ինձ համար, թե լինեմ: Պետրոսը պատասխանեց և ասաց. Աստծո Քրիստոսը» (Ղուկաս 9.20):

Ո՞վ է Հիսուս Քրիստոսը:

Այս հարցը փիլիսոփայական կամ սոցիոլոգիական հնարք չէ: Այն շոշափում է այն բանի էությունը, թե ովքեր են մարդիկ, և, որ առավել կարևոր է, թե ինչ է նրանց սպասվում հավերժության մեջ:

Մարդիկ կարող են հիանալ Հիսուսի գործերով, հարգել Նրա խոսքերը, գովաբանել Նրա համբերությունը, հանդես գալ հոգուտ բռնության մեթոդներից հրաժարվելու Նրա սկզբունքի, ողջունել Նրա վճռականությունը, գովել Նրա ինքնուրացությունը և քարանալ Նրա դաժան մահվան ժամանակ: Շատերը անգամ պատրաստ են ընդունելու Հիսուսին՝ որպես լավ Մարդու, Ով փորձել է կարգուկանոն հաստատել աշխարհում, արդարություն հաստատել այնտեղ, ուր անարդար են վարվել, ապաքինում առաջարկել այնտեղ, ուր հիվանդություն է եղել, մխիթարություն այնտեղ, ուր միայն տառապանք է եղել:

Այո՛, Հիսուսը լիովին կարող էր ստանալ լավագույն ուսուցչի, հեղափոխականի, գերազանց առաջնորդի ու հոգեբանի կոչում, հոգեբան, ով ընդունակ է թափանցել մարդկային հոգու խորքերը: Նա եղել է այդ ամենը և էլի շատ ուրիշ բաներ:

Բայց ոչինչ այս ամենից մեզ չի մոտեցնում ամենակարևոր հարցի պատասխանին, որ տվեց Ինքը՝ Հիսուսը. «Բայց դուք ո՞վ եք ասում ինձ համար, թե լինեմ» (Ղուկաս 9.20):

Սա պատասխան պահանջող հարց է, և այդ պատասխանից է կախված մարդկության ճակատագիրը:

Մարդկանց արձագանքը Հիսուսին

Կարդացե՛ք Ավետարանները, կարդացե՛ք ողջ Նոր Կտակարանը: Այս բոլոր գրքերը անհավանական հայտարարություններ են անում ոչ միայն այն մասին, ինչ արել է Հիսուսը, այլև, որ ավելի կարևոր է, այն մասին, թե Ով էր Նա: (Իհարկե, Հիսուսի գործերն իրենք համոզիչ կերպով վկայում են, թե Ով էր Նա): Այս հայտարարություններն այն մասին, որ Նա Աստված է, որ Նա մեր Փրկիչն է, որ միայն Նա է դեպի հավիտենական կյանք տանող Ճանապարհը, մեր ուշադրությունն են պահանջում, որովհետև դրանք իմաստալից են և որոշում են յուրաքանչյուր մարդու հավիտենական ճակատագիրը:

Կարդացե՛ք Ղուկաս 4.16-30-ը: Ի՞նչն էր մարդկանց ստիպում նման կերպ արձագանքելու: _____

_____

_____

Նրա հայրենի քաղաքի ունկնդիրները անասելի հուզվեցին՝ տեսնելով Հիսուսին, Ով շատ հրաշքներ գործելուց հետո վերադարձավ Նազարեթ, և «զարմանում էին այն շնորհաց խոսքերի վրա», որ Նա ասում էր (Ղուկաս 4.22): Սակայն նրանց արձագանքը Նրա հանդիմանությանը ցույց տվեց, թե իրականում ինչ ոգի էր ղեկավարում նրանց:

Կարդացե՛ք Ղուկաս 7.17-22-ը: Հովհաննեսն ի՞նչ հարց տվեց Հիսուսի մասին և ինչո՞ւ: _____

_____

_____

Անգամ Հովհաննես Մկրտչի՝ Հիսուսի նախակարապետի և Հիսուսին «Աստծո Գառ» հայտարարած մարդու հոգում կասկածներ կային: Նա ցանկանում էր իմանալ. «Դո՞ւ ես այն, որ գալու է, թե՞ ուրիշի սպասենք» (Ղուկաս 7.19):

Ուշադրությո՛ւն դարձրեք նաև, որ Հիսուսը ուղղակի չպատասխանեց Հովհաննեսի հարցին. դրա փոխարեն Նա մատնացույց է անում այն գործերը, որոնք համոզիչ կերպով վկայում են Իր մասին. «Կույրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբվում են, խուլերը լսում են, մեռելները հարություն են առնում, աղքատներին ավետարան է քարոզվում» (համար 22): Կարելի է հաստատել, որ Հիսուսը Հովհաննեսի հարցին ուղղակիորեն պատասխանելու ան-

հրաժեշտություն չուներ. Նրա արարքներն ու գործերը բավարար ապացույցներ էին ներկայացնում, թե Ով էր Նա:

Որոշ իմաստով Հիսուսի պատասխանը, հնարավոր է, Հովհաննեսին էլ ավելի մեծ տարակուսանքի մեջ գցեց: Չէ՞ որ եթե Հիսուսը իշխանություն ունի կատարելու այդ բոլոր անհավանական բաները, ինչո՞ւ եմ ես տառապում այստեղ՝ բանտում: Անձնական ողբերգություն ապրելիս մեզանից ո՞վ ինքն իրեն հարց չի տվել. եթե Աստծունն է ողջ զորությունը, ինչո՞ւ է սա տեղի ունենում ինձ հետ: Ինչո՞ւ խաչը և ամեն բան, ինչ խորհրդանշում և խոստանում է այն, մեր միակ պատասխանն է:

Երկուշաբթի ապրիլի 13

Աստծո Որդին

«Մարդի Որդի» և «Աստծո Որդի». այս երկու անուններն Ավետարաններում օգտագործվում են Հիսուսին նկարագրելու համար: Առաջինը ցույց է տալիս մարմնացած Աստծուն, երկրորդը՝ Հիսուսի՝ որպես Աստվածության երկրորդ Անձի աստվածային էությունը: Այս երկու արտահայտությունները միասին մեզ հրավիրում են մտորելու Հիսուս Քրիստոսի բացառիկության մասին, Աստծո, Ով միևնույն ժամանակ մարդ է: Այդ հայեցակարգը դժվար է ըմբռնել, բայց այս դժվարությունն անգամ չնչին չափով չի փոքրացնում այն զարմահրաշ ճշմարտությունը և մեծ հույսը, որ այն հաղորդում է մեզ:

Կարդացե՛ք Ղուկաս 1.31,32,35, 2.11-ը: Ի՞նչ են ասում այս համարները Հիսուսի մասին: _____

_____

_____

Ղուկաս 1.31,32-ում հրեշտակը «Հիսուս» անունը կապում է «Բարձրյալի Որդու» հետ, Ում «Տեր Աստվածը ... կտա» Դավթի աթոռը: Հիսուսն Աստծո Որդին է: Նա նաև Քրիստոսն է՝ Մեսիան, Ով պետք է վերականգնի Դավթի գահը ոչ որպես երկրային ազատարար, այլ, վախճանաբանական իմաստով, սատանային թույլ չտալով զավթել Իր՝ Աստծո գահը: Հրեշտակը հայտարարեց հովիվներին, որ մսուրի նորածինն է «Փրկիչ, որ է Քրիստոս Տերը» (Ղուկաս 2.11):

Միևնույն ժամանակ «Աստծո Որդի» տիտղոսը ոչ միայն հաստատում է աստվածային Երրորդության մեջ Քրիստոսի դիրքը, այլ նաև

մատնացույց է անում սերտ և սրտակից փոխհարաբերություններ, որ Հիսուսն ուներ Հայր Աստծո հետ, երբ երկրի վրա էր:

Սակայն Հոր և Որդու միջև փոխհարաբերությունները տարբերվում են այն հարաբերություններից, որ մենք ունենք Աստծո հետ: Այն դեպքում, երբ մեր հարաբերությունները Քրիստոսի աշխատանքի արդյունքն են՝ և՛ որպես Արարիչ, և՛ որպես Փրկիչ, Հոր հետ Նրա փոխհարաբերությունը երեք հավասար հավիտենական Անձանցից Մեկի հարաբերություն է՝ որպես Որդի: Ունենալով աստվածային էություն՝ Հիսուսը Հոր հետ ամենասերտ կապն էր պաշտպանում:

«Հիսուսն ասում է. «Հայր իմ, որ երկնքում ես»՝ հիշեցնելով Իր աշակերտներին, որ մարդկային էությամբ Ինքը, Ով կիսում է նրանց փորձությունները և կարեկցում է նրանց տառապանքներին, կապված է նրանց հետ, բայց Իր աստվածային էությամբ Նա կապված է Անեզրի գահին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 442):

Մեզ համար ի՞նչ նշանակություն ունի այն փաստը, որ Հիսուսը Աստված էր՝ այդ բառի լիակատար իմաստով: Թեև այս ճշմարտությունից շատ եզրակացություններ են հետևում, ամենազարմանալիներից մեկն այն է, որ Հիսուսը, լինելով Աստված, եկավ, որպեսզի ոչ միայն Իր վրա առնի մարդկային էությունը, այլ նաև այդ մարդկային էությամբ Իրեն առաջարկեց որպես զոհ՝ մեր փոխարեն: Մի՛ մոռացեք, որ խոսքը Աստծո մասին է: Ի՞նչ ապշեցուցիչ հույս է մեզ տալիս այս ճշմարտությունը՝ բացահայտելով Աստծո բնավորությունը:

Երեքշաբթի **ապրիլի 14**

Մարդի Որդին

Թեև Հիսուսը լիովին գիտակցում էր, որ Ինքը և՛ Մարդու Որդի էր, և՛ Աստծո Որդի (Ղուկաս 22.67-70), մեր Փրկիչը ամենից շատ սիրում էր Իրեն կոչել «Մարդի Որդի»: Ուրիշ ոչ ոք Նրան այդպես չէր անվանում: Այդ անունը Սուրբ Գրքում ևս մի քանի անգամ է հանդիպում. Ստեփանոսի խոսքում (Գործք առաքելոց 7.56) և Հայտնություն գրքում (Հայտնություն 1.13, 14.14): Ավելի քան 80 անգամ այս բառակապակցությունը հայտնվում է Ավետարաններում, որից 25 անգամ՝ Ղուկասի Ավետարանում: Այս փաստը վկայում է Հիսուսի՝ որպես սովորական Մարդու, մարդկային էության հանդեպ Ղուկասի խորը

հետաքրքրության մասին, Մարդ, Ով ուղարկված էր Աստծո կողմից, որպեսզի հռչակի փրկության մասին բարի լուրը:

«Աստծո Որդու մարդկային էությունը ամեն բան է մեզ համար: Դա ոսկե շղթա է, որը մեր հոգիները կապում է Քրիստոսի, իսկ Քրիստոսի միջոցով՝ Աստծո հետ: Հենց դա էլ պետք է լինի մեր ուսումնասիրության առարկան: Քրիստոսը մարդ էր՝ այդ բառի լիարժեք իմաստով. Նա ապացուցեց Իր խոնարհությունը՝ մարդ դառնալով: Եվ, այնուամենայնիվ, Նա Աստված էր մարմնով» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հատոր 1, 244):

Ղուկասի Ավետարանում «Մարդի Որդի» եզրույթի օգտագործումը՝ մարմնացյալ Հիսուսի էությունը, առաքելությունն ու ճակատագիրը հասկանալու տարատեսակ հնարավորություններ է տալիս:

Առաջին հերթին, այդ անունը սահմանում է Նրան որպես մարդ (Ղուկաս 7.34), ընդ որում՝ աշխարհում բնակության որոշակի վայր կամ պաշտպանվածություն չունեցող (Ղուկաս 9.58):

Երկրորդ, Ղուկասն այդ անունն օգտագործում է Քրիստոսի աստվածային էությունը և կարգավիճակն ընդգծելու համար, որովհետև «Մարդի Որդին շաբաթի էլ տերն է» (Ղուկաս 6.5): Այսպիսով, Նա նաև մեղքերը ներելու իշխանություն ունեցող Արարիչ է (Ղուկաս 5.24):

Երրորդ, դեռևս նախքան աշխարհի արարումը Աստծո կողմից նախասահմանված (եփեսացիս 1.3-5) այդ քավչարար առաքելությունն իրականացնելու համար Մարդի Որդին եկավ կործանվողը որոնելու և փրկելու համար (Ղուկաս 9.56, 19.10): Բայց բուն փրկությունը կարող էր ավարտվել միայն այն բանից հետո, երբ «պետք է Մարդի Որդին շատ չարչարվի և անարգվի... և սպանվի և երրորդ օրը հարություն առնի» (Ղուկաս 9.22): Մարդու Որդու կողմից Իր անցնելիք ուղու և Իր վճարելիք գնի այս գիտակցումը բացահայտում է ոչ միայն փրկության ծրագրի աստվածային ծագումը, այլ նաև Իր մարդկային էությամբ Քրիստոսի հնազանդությունն այդ ծրագրին:

Չորրորդ, ուշադրությո՛ւն դարձրեք, թե Փրկչի տառապանքի որքան լիարժեք պատկեր է ներկայացնում Ղուկասը հետևյալ հատվածներում՝ խաչի Նրա կանխատեսումը (Ղուկաս 18.31-33), մատնությունը (Ղուկաս 9.44), Իր մահը՝ որպես մարգարեության իրականացում (Ղուկաս 22.22), Իր խաչելությունն ու հարությունը (Ղուկաս 24.7, համեմատե՛ք Ղուկաս 11.30-ի հետ) և Նրա դերը Հոր առջև՝ որպես Բարեխոս (Ղուկաս 12.8):

Հինգերորդ, Ղուկասը Մարդի Որդուն տեսնում է որպես Նա, Ով վերջին ժամանակում վերադառնում է երկիր, որպեսզի պարգևատրի Իր սրբերին և ավարտի մեծ պայքարը (Ղուկաս 9.26, 12.4, 17.24,26,30, 21.36, 22.69):

Կարճ ասած՝ «Մարդի Որդի» անունը ներառում է բազմակող տեսանկյունը ոչ միայն այն բանի, թե Ով էր Քրիստոսը, այլ նաև նրա, թե ինչ նպատակով էր Նա եկել, ինչ է արդեն կատարել և դեռ կկատարի մեզ համար՝ փրկության ծրագրում:

Չորեքշաբթի ապրիլի 15

«Աստծո Քրիստոսը»

Կարդացե՛ք Ղուկաս 9.18-27-ը: Հիսուսն ինչո՞ւ աշակերտներին տվեց մի հարց, որի պատասխանն արդեն գիտեր: Ի՞նչ դաս էր Նա ցանկանում տալ, որպեսզի ոչ միայն բացահայտի Իր մասին ճշմարտությունը, այլ նաև սովորեցնի, թե ինչ է նշանակում հետևել Իրեն: _____

_____

_____

_____

_____

«Իսկ դուք ո՞վ եք ասում ինձ համար, թե լինեմ» (Ղուկաս 9.20): Հարցը, որ Քրիստոսը տվել է երկու հազար տարի առաջ, հնչում է մինչև հիմա: Մարդիկ բազմաթիվ տարբեր պատասխաններ են տալիս դրան. մեծ ուսուցիչ, բարոյականության նախանձախնդիր կողմնակից, ճշմարտության մարմնացում, ինքնազոհության օրինակ, անվախ մարգարե, սոցիալական բարենորոգիչ, մեծագույն օրինակն այն բանի, թե ով և ինչպիսին պետք է լինի մարդը: Բայց ցանկացած պատասխան, որտեղ չկա խոստովանությունը, որ պոկվեց Պետրոսի շուրթերից՝ ի պատասխան Հիսուսի տված հարցին, չի լինի բավարար:

Դրսևորելով Իր իշխանությունը բնության վրա (Ղուկաս 8.22-25), դևերին հրամայելու զորությունը (26-35 տեքստեր), իշխանությունը հիվանդությունների վրա (Ղուկաս 5.12-15, 8.43-48), սննդի չնչին քանակություն ունենալով՝ հինգ հազար մարդու կերակրելու ընդունակությունը (Ղուկաս 9.13-17) և իր՝ մահվան վրա ունեցած իշխանությունը (Ղուկաս 8.51-56)՝ Հիսուսը Իր աշակերտներին դիմում է իրականում երկու հարցով. նախ, Իր մասին ի՞նչ են մտածում մարդիկ,

և երկրորդ, Իր մասին ի՞նչ են մտածում իրենք՝ աշակերտները: Նա հարցնում էր ո՛չ նրա համար, որ իմանա այն, ինչ չգիտեր: Ո՛չ, Նա հարցրեց, որպեսզի օգնի նրանց հասկանալու, թե Ով է Ինքը, նրանցից կպահանջի նվիրվածություն, որը նրանց համար կարժենա ամեն բան աշխարհում:

«Մենք պետք է Հիսուսին ճանաչենք անձամբ: Մարդը կարող է իմանալ յուրաքանչյուր կարծիք, որ երբևէ ասվել է Հիսուսի մասին, նա կարող է իմանալ մարդկային մտքի կողմից երբևէ ստեղծված քրիստոսաբանությունները, նա կարող է տալ Հիսուսի մասին բոլոր մեծագույն մտածողների ու խոշոր աստվածաբանների ուսմունքների ամփոփ տեսությունը, և, այնուամենայնիվ, չլինել քրիստոնյա: Քրիստոնեությունը ամենևին էլ Հիսուսի *մասին* գիտելիքները չեն, այլ *Հիսուսին ճանաչելը*: Հիսուս Քրիստոսը յուրաքանչյուրից նրա սեփական կարծիքն է պահանջում: Նա միայն Պետրոսին չէ, որ հարցրեց. «Իսկ դուք ո՞վ եք ասում ինձ համար, թե լինեմ» (Ուիլյամ Բարկլի, Մատթեոսի Ավետարան, հատոր 2, 161):

Հիսուսի տված հարցին մեր պատասխանը չի կարող տարբերվել Պետրոսի խոստովանությունից. Հիսուսը «Աստծո Քրիստոսն է» (Ղուկաս 9.20): Քրիստոս նշանակում է «Օծյալ», Փրկիչ, որ եկել է որոշակի առաքելությամբ՝ ոչ թե որպես քաղաքական ազատագրիչ, այլ որպես Մեսիա, Ով մարդկությունը կփրկի սատանայի ու մեղքի իշխանությունից և կհաստատի արդարության թագավորություն:

Բավական չէ պարզապես իմանալը, թե ով էր Հիսուսը: Մեզանից յուրաքանչյուրը պետք է անձամբ ճանաչի Նրան: Եթե դուք պնդում եք, թե ճանաչում եք Հիսուսին, իրականում ի՞նչ գիտեք Նրա մասին: Այսինքն՝ ո՞րն է ձեր անձնական գործնական գիտելիքը Հիսուսի և այն մասին, թե Ով է Նա:

Հինգշաբքի ապրիլի 16

Պայծառակերպությունը

Պայծառակերպության մասին պատմությունը կարդացե՛ք բոլոր երեք Ավետարաններում (Ղուկաս 9.27-36, Մատթեոս 17.1-9, Մարկոս 9.2-8): (Կարդացե՛ք նաև Պետրոսի պատմությունն այդ դեպքի մասին և ուշադրություն դարձրեք, թե ինչ ճշմարտություն էր պնդում առաքյալը՝ հիմնվելով ականատեսի իր փորձառության վրա. տե՛ս Բ

Պետրոս 1.16-18-ը): Ի՞նչ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացնում Ղուկասը, և ինչո՞ւ է դա կարևոր: _____

_____

_____

_____

Ղուկասը պատմությունն սկսում է մանրամասներով, որը չեն հիշատակում ո՛չ Մատթեոսը, ո՛չ Մարկոսը. Հիսուսը Պետրոսին, Հովհաննեսին ու Հակոբոսին իր հետ սարը տարավ, *որպեսզի աղոթեն*: Հիսուսն Իր հայացքն ու մտքերն ուղղեց դեպի Երուսաղեմ և կանխատեսեց տառապանքների ուղին, որն ընկած էր Իր առջև: Հիսուսը ցանկանում էր վստահ լինել, որ ամեն բան, որ Ինքն անում է, հաճո է Աստծուն և համապատասխանում է Նրա ծրագրին: Այդպիսի պահերին աղոթքը որոշակիություն և վստահություն ձեռք բերելու միակ միջոցն է: Աղոթքի ժամանակ Հիսուսին պարուրեց աստվածային փառքը. «Եվ եղավ, որ նա աղոթք անելիս, նրա երեսի կերպարանքն ուրիշ կերպ եղավ. և նրա հագուստը սպիտակ փայլուն եղավ» (Ղուկաս 9.29):

Այլակերպված Հիսուսը զրուցում էր Մովսեսի ու Եղիայի հետ «նրա վախճանի համար, որ Երուսաղեմում կատարվելու էր» (տեքստ 31): «Վախճան» բառը կարելի է երկկերպ հասկանալ. Նրան սպասվող մահը Երկուսաղեմում, թեև հունարեն «ելք» բառը, որ այստեղ գործածվում է, հազվադեպ է գործածվում մահվան իմաստով. հետևաբար, «վախճանը» կարող է նաև նշանակել այն մեծ «ելքը», որ Հիսուսն ուր որ է կատարելու էր Երուսաղեմում՝ փառավոր քավչարար ելքը, որը ազատագրում կբերի մեղքից:

Երեքի հանդիպումն ավարտվեց երկնքից հնչած հավանությամբ. «Դա է իմ սիրելի Որդին, դրան լսեցեք» (տեքստ 35): Պայծառակերպությունը Հիսուսին օծում է փառքով՝ ևս մեկ անգամ ընդգծում է Նրա որդի լինելը և հայտարարում է, որ քավության գինը Որդու կյանքն է: Այդ պատճառով աշակերտներին երկնային հրաման է տրվում՝ լսել Նրան: Առանց հնազանդության և Նրա հանդեպ բացառիկ նվիրվածության՝ չի կարող աշակերտություն լինել:

Էլեն Ուայթը գրում է, որ Մովսեսն ու Եղիան, «որ Երկնային Թագավորի գահի մոտ ցանկացած հրեշտակից ավելի բարձր էին, եկան, որպեսզի Հիսուսի հետ զրուցեն Նրա տառապանքների մասին և մխիթարեն Նրան հավաստիացմամբ, որ Երկինքը կարեկցում է Նրան՝ Իր կյանքի

ու մահվան մեջ: Նրանց զրույցի թեման աշխարհի հույսն ու յուրաքանչյուր մարդու փրկությունն էր» (Դարերի փափագը, 425): Անգամ Ինքը՝ Հիսուսը, որ այդքան շատ մարդկանց էր մխիթարել, Իր համար աջակցություն և մխիթարություն էր որոնում: Սա ի՞նչ պետք է ասի մեզ այն մասին, թե ինչպես անգամ հոգևորապես ուժեղ մարդիկ՝ առաջնորդները, ուսուցիչներն ու ղեկավարները, կարող են ժամանակ առ ժամանակ մխիթարության, քաջալերանքի ու այլ մարդկանց օգնության կարիքն ունենալ: Դուք ո՞ւմ եք մտաբերում հենց հիմա, ում կարող էիք մխիթարություն, քաջալերանք ու աջակցություն տրամադրել:

Ուրբաթ ապրիլի 17

Հեկտագա ուսումնասիրության համար

«Խուսափե՛ք Քրիստոսի մարդկային էության մասին ցանկացած հարցից, որը կարող է սխալ ըմբռնվել: Ճշմարտությունը մոտ է ենթադրությունների արահետին: Քրիստոսի մարդկային էությունը քննարկելիս անհրաժեշտ է ջանադրաբար կշռադատել ցանկացած պնդում, որպեսզի ձեր խոսքերին հնարավոր չլինի վերագրել ավելին, քան դրանք նշանակում են, և որպեսզի դուք չկորցնեք և չմթագնեք Նրա մարդկային էության մասին հստակ պատկերացումները, որ կապված է Նրա աստվածային էության հետ: Նրա ծնունդը Աստծո հրաշքն էր... Երբեք, ոչ մի դեպքում մարդկանց մտքում անգամ չնչին պատկերացում մի՛ թողեք, թե Քրիստոսը թեկուզ աննշան բիծ կամ մեղքի հանդեպ հակում ուներ, կամ թեկուզ որևէ հարցում Նա տրվել է մեղքին: Նա փորձվեց ամեն բանում, այնպես, ինչպես փորձվում է յուրաքանչյուր մարդ, բայց Նա անվանված է «Սուրբ ծնունդ»: Սա խորհուրդ է, որն անբացատրելի է մնում մահկանացուների համար, որ Քրիստոսը կարող էր փորձվել ամեն բանում, բայց, այնուամենայնիվ, մնալ անմեղ: Քրիստոսի մարմնացումը միշտ եղել է և ընդմիշտ կմնա առեղծված» (Է. Ուայթի մեկնությունները, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 5, 1128, 1129):

Հարցեր քննարկման համար

1. Կարդացե՛ք Քրիստոսի մարդկային բնույթի մասին Է. Ուայթի աշխատություններից վերը բերված մեջբերումը: Մենք պետք է ընդունենք այն փաստը, որ Հիսուսի մարդկային էությունը, ինչպես և Նրա աստվածային էությունը, մեծագույն ճշմարտություն է, որն այս պահին չենք կարող լիովին հասկանալ: Ինչպես նա էր գրում. «Քրիստոսի մարմնացումը միշտ եղել է և ընդմիշտ կմնա գաղտնիք»: Ուրեմն ինչո՞ւ մենք պետք է զգույշ լինենք մեր դատողություններում նրանց մասին, ովքեր այդ խորհուրդը հասկանում են ոչ այնպես, ինչպես հասկանում ենք մենք:
2. Խորհեցե՛ք այն մասին, ինչ տեղի ունեցավ Պայծառակերպության սարի վրա: Ուր որ է, պետք է տեղի ունենար փրկության պատմության այդ զարմանահրաշ իրադարձությունը, և ի՞նչ էին անում ընտրյալ աշակերտները, որ Նրա հետ եկել էին սար: Քնա՜ծ էին: Որքանո՞վ է սա նման մեզանից յուրաքանչյուրին առանձին-առանձին կամ մեզ՝ որպես եկեղեցու, որ ապրում է փրկության պատմության մեկ այլ վիթխարի իրադարձության՝ Հիսուսի երկրորդ գալստյան նախաշեմին:
3. Վերընթերցե՛ք որոշ հատվածներ Սուրբ Գրքից, որտեղ Հիսուսը խոսում է Իր մասին: Ինչո՞ւ է սխալ այն միտքը, որ Հիսուսը պարզապես մեծ մարդ էր, մեծ մարգարե կամ մեծ հոգևոր առաջնորդ: Ինչո՞ւ մենք պետք է ընդունենք, որ Նա Նա էր, որպես Ով ներկայանում էր, կամ էլ խելագար էր և սխալվում էր Իր վերաբերյալ: Ինչո՞ւ մենք ուրիշ այլընտրանք չունենք Հիսուս Քրիստոսի անձի վերաբերյալ:

ԴԱՍ 4 ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՉ

ԱՊՐԻԼԻ 18-24

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 5.1-11, 6.12-16, 9.1-6, Մատթեոս 10.5-15, Ղուկաս 10.1-24, Ղուկաս 9.23-25, Մատթեոս 16.24-28:

Հիշելու համարը.

«Եվ ամենքին ասում էր. Եթե մեկը կամենում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնի և իմ հետևից գա» (Ղուկաս 9.23):

«Աշակերտ» բառը նշանակում է հետևորդ կամ սան: Աստվածաշնչում այն հանդիպում է ավելի քան 250 անգամ, հիմնականում՝ Ավետարաններում և Գործք առաքելոց գրքում:

Աշակերտությունը հոգին օժտում է զորությամբ, մտքին ստիպում է աշխատել և մեզանից լիակատար նվիրվածություն է պահանջում Աստծո և մերձավորների հետ մեր փոխհարաբերություններում: Առանց Քրիստոսի հանդեպ բացարձակ նվիրվածության՝ անհնար է լինել Նրա աշակերտը: Իսկ մի՞թե կա առավել բարձր կոչում:

«Աստված մարդկանց ընդունում է այնպիսին, ինչպիսին նրանք կան, և դաստիարակում է նրանց Իր ծառայության համար, եթե միայն նրանք հնազանդվում են Իրեն: Հոգում ընդունված Աստծո Հոգին կկենդանացնի նրա բոլոր ընդունակությունները: Ամբողջովին Տիրոջը նվիրված միտքը սկսում է ներդաշնակորեն զարգանալ Սուրբ Հոգու առաջնորդությամբ և ամրանում է՝ ըմբռնելու և կատարելու Աստծո պահանջները: Թույլը, փոփոխականը դառնում է ուժեղ և կայուն: Ամեն օր իրեն Աստծուն նվիրաբերող քրիստոնյան այնքան սերտ փոխհարաբերություններ է հաստատում Հիսուսի հետ, որ իր մտքերով և բնավորությամբ նմանվում է Նրան» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 251):

Այս շաբաթ մենք կդիտարկենք, թե ինչպես Հիսուսը կանչեց նրանց, ովքեր պետք է հետևեին Իրեն, և կջանանք դաս քաղել, որը կօգնի մեզ՝ շարունակելու Նրա սկսած գործը երկրի վրա:

Մարդկանց որսորդները

Սիմոնն ու Անդրեասը աշխատել էին ողջ գիշեր: Լինելով փորձառու ձկնորսներ՝ նրանք քաջածանոթ էին ձկնորսության արվեստին և գիտեին, թե երբ է հարկավոր ավարտել գործը: Ողջ գիշերվա աշխատանքը ոչ մի որս չէր տվել: Եվ ահա հիասթափության ամենաթեժ պահին անսպասելի հրաման է հնչում. «Նավը դեպի խորը տար, և ձեր ուռկանները գցեցեք որսի» (Ղուկաս 5.4): Սիմոնի պատասխանը անհույս էր ու վշտալի. «Բոլոր գիշերն աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց քո խոսքի համար ուռկանը կգցեմ» (տեքստ 5):

Ո՞վ է այս հյուսնը, որ ձկնորսին խորհուրդներ է տալիս ձկնորսության մասին: Սիմոնը կարող էր անտեսել Հիսուսի խոսքերը, բայց, հնարավոր է, քարոզը, որ նա լսել էր մինչ այդ, որոշ արդյունք ունեցավ: Այդ պատճառով Սիմոնը պատասխանեց. «Բայց քո խոսքի համար... »:

Այսպիսով՝ աշակերտության առաջին դասը հնազանդությունն է Քրիստոսի Խոսքին: Անդրեասը, Հովհաննեսն ու Հակոբը նույնպես շուտով տեսան, որ երկար ու անպտուղ գիշերը փոխարինվեց վառ ու զարմանալի լուսաբացով՝ իր հետ հարուստ որս բերելով: Նույն պահին Պետրոսը ծնկի իջավ և բացականչեց. «Ինձանից դուրս գնա, որ ես մեղավոր մարդ եմ, Տեր» (տեքստ 8): Աստծո սրբության և սեփական մեղավորության խոստովանումը ևս մի կարևոր քայլ է աշակերտության ճանապարհին: Պետրոսը, ինչպես մի ժամանակ Եսայիան (Եսայիա 6.5), արեց այդ քայլը:

Կարդացե՛ք Ղուկաս 5.1-11, Մատթեոս 4.18-22 և Մարկոս 1.16-20-ը: Խորհեցե՛ք հրաշքի, զարմացած ձկնորսների, Պետրոսի խոստովանության և Հիսուսի հեղինակության մասին: Այս պատումներից յուրաքանչյուրն ի՞նչ է ասում աշակերտության ճանապարհի մասին: _____

_____

_____

_____

«Մի՛ վախեցիր. այսուհետև մարդիկ որսող կլինես» (Ղուկաս 5.10): Պարզ ձկնորսական կյանքից անցումը մարդկանց որսորդ դառնալուն արտասովոր է. այն բացարձակ ինքնանվիրում է պահանջում Ուսուցչին, սեփական անկարողության և մեղավորության

խոստովանություն, հավատով դիմում Քրիստոսին՝ զորություն ստանալու համար, և մշտական վստահություն Քրիստոսին և միմիայն Նրան: Ձկնորսի կյանքը լի է անորոշությամբ և վտանգներով, նա ստիպված է լինում պայքարել անգութ ալիքների դեմ և կայուն եկամտի վստահություն չունի: Մարդկանց որսորդի կյանքը պակաս դժվար չէ, բայց Տերը խոստանում է. «Մի՛ վախեցիր»: Աշակերտությունը դժվար ճանապարհ է. այն ունի իր թռիչքներն ու անկումները, ուրախություններն ու դժվարությունները, բայց աշակերտը կանչված չէ միայնակ գնալու դրանով: Նա, Ով ասաց. «Մի՛ վախեցիր», միշտ հավատարիմ աշակերտի կողքին է:

Հե՛տ վերադարձեք ու ևս մեկ անգամ կարդացե՛ք Պետրոսի խոստովանությունն այն մասին, որ ինքը մեղավոր մարդ է: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպես նրա մեղավորությունը դրդեց նրան՝ հեռանալու Հիսուսից: Ի՞նչ կա մեղքի մեջ, որ մեզ վանում է Աստծուց:

Երկուշաբթի ապրիլի 20

Տասներկուսի ընտրությունը

Աշակերտ չեն դառնում սեփական նախաձեռնությամբ: Դա Հիսուսի կանչին արձագանքելու արդյունքն է: Ղուկասը հիշատակում է, որ Հիսուսն արդեն կանչել էր Պետրոսին, Անդրեասին, Հովհաննեսին ու Հակոբին (Ղուկաս 5.11), ինչպես նաև Ղևի Մատթեոսին՝ մաքսավորին (տեքստ 27-32): Այժմ հեղինակը տասներկուսի ընտրությունը տեղավորում է իր պատմության ռազմավարական հատվածում՝ անմիջապես՝ չորացած ձեռք ունեցող մարդուն շաբաթ օրը բժշկելուց հետո (Ղուկաս 6.6-11): Հենց դա փարիսեցիներին դրդեց Հիսուսին սպանելու մտահղացմանը: Տերը գիտեր, որ եկել է Իր աշխատանքը համախմբելու և աշխատակիցների թիմ նախապատրաստելու ժամանակը՝ նրանց ուսուցանելու և նախապատրաստելու համար այն խնդրի կատարմանը, որ պետք է կատարվեր Նրա խաչի մահից հետո:

Կարդացե՛ք Ղուկաս 6.12-16, 9.1-6-ը: Այս տեքստերն ի՞նչ են ասում տասներկու աշակերտների կանչման մասին: __

_____

_____

_____

Հիսուսին շրջապատող բազմաթիվ մարդկանց մեջ նաև Նրա աշակերտներն էին՝ նրանք, ովքեր հետևում էին Նրան, ինչպես աշակերտները հետևում են իրենց ուսուցչին: Բայց Քրիստոսի խնդիրը չէր սահմանափակվում ուսուցմամբ: Նա պետք է փրկագնվածների համայնք կառուցեր՝ եկեղեցի, որ Նրա փրկարար լուրը կտանի երկրի բոլոր ծայրերը: Այդ նպատակի համար Նրան պարզապես աշակերտներ չէ, որ հարկավոր էին: «Եվ ընտրեց նրանցից տասներկուսին, որոնց առաքյալ էլ անվանեց» (Ղուկաս 6.13): «Առաքյալն» այն մարդն է, ով ուղարկված է հատուկ լուրով: Ղուկասն այս բառն օգտագործում է վեց անգամ Ավետարանում և ավելի քան 25 անգամ՝ Գործք առաքելոց գրքում (Մատթեոսն ու Մարկոսն այս բառն օգտագործում են մեկական անգամ):

Տասներկուսն ընտրվեցին ոչ թե իրենց կրթության, տնտեսական վիճակի, սոցիալական հանրահայտության, բարոյական արժանիքների կամ որևէ այլ բանի պատճառով, ինչը նրանց ընտրվելու արժանի կդարձներ: Դրանք սովորական մարդիկ էին՝ հասարակ ծագումով՝ ձկնորսներ, մաքսավոր, զելոտ, թերահավատ և անգամ նա, ով մատնիչ դուրս եկավ: Նրանք կանչված էին մեն-միակ նպատակի համար՝ լինելու Արքայի և Նրա Թագավորության սուրհանդակները:

«Աստված մարդկանց ընդունում է այնպիսին, ինչպիսին նրանք կան, նրանց հատուկ բնավորության բոլոր մարդկային գծերով, և նրանց նախապատրաստում է Իր ծառայության համար, եթե նրանք հնազանդ են և ցանկանում են սովորել Իրենից: Այդ մարդիկ ընտրվում են ոչ թե նրա համար, որ կատարյալ են, այլ որովհետև, չնայած իրենց ողջ անկատարությանը, նրանք ընդունակ են ճանաչելու ճշմարտությունը և դրա սկզբունքները կյանքի կոչելու միջոցով, շնորհի օգնությամբ նմանվել Նրան» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 294):

Եկե՛ք նայենք ճշմարտության աչքերին. մենք անկատար ենք, և մեր եկեղեցու մյուս մարդիկ նույնպես անկատար են: Մենք ամենքս գտնվում ենք աճի գործընթացում (անգամ եթե մեզ թվում է, թե ուրիշներն աճում են ավելի դանդաղ, քան կցանկանայինք): Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել աշխատել այլ մարդկանց հետ միասին և ընդունել նրանց այնպիսին, ինչպիսին նրանք կան:

Առաքյալները հանձնարարություն են ստանում

Կարդացե՛ք այն մասին, թե ինչպես Հիսուսը առաքյալներին ուղարկեց քարոզելու և բժշկելու. Ղուկաս 9.1-6 և Մատթեոս 10.5-15: Ի՞նչ հոգևոր ճշմարտություններ մենք կարող ենք իմանալ այս հատվածներից: _____

_____

_____

_____

Ղուկասը աշակերտների քարոզելու դուրս գալը նկարագրում է որպես եռաստիճան գործընթաց:

Առաջին հերթին Հիսուսը նրանց մեկտեղ «կանչեց» (Ղուկաս 9.1): «Կանչել» կամ «կոչել» բառերը («կանչել բառից») շատ կարևոր են քրիստոնեական առաքելության համար և կարևոր տեղ են զբաղեցնում քրիստոնյայի բառապաշարում: Նախքան դրանք կդառնան աստվածաբանական եզրույթներ, դրանք պետք է լինեն մարդու անձնական փորձառությունը: Առաքյալները պետք է լսեն Կանչողին, գան Նրա մոտ և միասին լինեն: Ե՛վ հնազանդությունը Կանչողի հանդեպ, և՛ ողջ կյանքը Նրան վստահելը մեծ նշանակություն ունեն միասնություն զգալու համար, որը կարևոր դեր է խաղում առաքելության մեջ հաջողության հասնելու հարցում:

Երկրորդ, Հիսուսը «զորություն և իշխանություն տվեց» նրանց (Ղուկաս 9.1): Հիսուսը երբեք Իր լրաբերներին դատարկաձեռն չի ուղարկում: Նա նաև մեզանից չի պահանջում լինել Իր ներկայացուցիչները՝ հենվելով միայն սեփական ուժերի վրա: Մեր կրթությունը, մշակույթը, հասարակական դիրքը, գույքը կամ խելքը ի զորու չեն օգնել մեզ՝ կատարելու Նրա առաքելությունը: Հենց Քրիստոսն է օժտում ընդունակություններով, զինում և զորություն տալիս: Հունարեն «զորությունը» *dynamis* բառն է, նրանից են ծագում «դինամո»՝ լույսի աղբյուր և «դինամիտ» բառերը՝ էներգիայի աղբյուր, որի օգնությամբ կարելի է ուղի (թունել) անցկացնել սարի միջով: Հիսուսի տված զորությունն ու իշխանությունը բավական է սատանային պարտության մատնելու և նրա մտադրությունները խափանելու համար: Հիսուսը մեր զորությունն է: «Երբ մարդու կամքը միավորվում է Աստծո կամքի հետ, այն դառնում է ամենազոր: Ամեն բան, ինչ պետք է արվի Նրա հրամանով, կարող է կատարվել Նրա զորությամբ: Նրա

բոլոր հրամանները օժտված են զորությամբ» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 333):

Երրորդ, Հիսուսը «նրանց ուղարկեց Աստծո արքայությունը քարոզելու և հիվանդներին բժշկելու» (Ղուկաս 9.2): Քարոզն ու բժշկությունը քայլում են ձեռք ձեռքի տված, և աշակերտների առաքելությունը ամբողջ մարդու՝ նրա մարմնի, մտքի և հոգու մասին հոգ տանելն է: Մեղքն ու սատանան նվաճել են ամբողջ մարդուն, ուստի ամբողջ մարդուն անհրաժեշտ է տեղավորել Հիսուսի սրբագործող զորության ներքո:

Իսկական աշակերտ կարելի է դառնալ միայն ողջ կյանքը լիովին Քրիստոսին նվիրելու պայմանով, երբ ոչինչ կանգնած չէ Նրա և մարդու միջև: Ո՛չ ոսկին, ո՛չ արծաթը, ո՛չ հայրը, ո՛չ մայրը, ո՛չ ամուսինը, ո՛չ զավակը, ո՛չ կյանքը, ո՛չ մահը, ո՛չ այսօրվա չնախատեսված հանգամանքները, ո՛չ վաղվա օրվա արտակարգ իրավիճակները չպետք է կանգնեն Քրիստոսի և Նրա աշակերտի միջև: Միակ բանը, որ նշանակություն ունի՝ Քրիստոսն է, Նրա արքայությունը և կործանվողների փրկությունը:

«Ոչինչ չվերցնեք ճանապարհի համար» (Ղուկաս 9.3): Ի՞նչ սկզբունք է արտահայտված այստեղ, որը մեզ անհրաժեշտ է հասկանալ և կիրառել մեր կյանքում:

Չորեքշաբթի ապրիլի 22

Յոթանասուն աշակերտների ընտրությունը

Կարդացե՛ք Ղուկաս 10.1-24-ը: Յոթանասուն աշակերտներին ծառայության կանչելու այս պատմությունն ի՞նչ է ասում մեզ մարդկանց փրկության աշխատանքի մասին՝ մեծ պայքարի համատեքստում: _____

_____

_____

Հիսուսի ծառայության ընթացքում Նրան հետևում էին ոչ միայն 12 աշակերտները: Երբ Պետրոսը դիմեց հավատացյալներին Հուդային փոխարինող ընտրելու առաջարկով, ներկա էր ոչ պակաս, քան 120 աշակերտ (Գործք առաքելոց 1.15): Պողոսն ասում է, որ համբարձման պահին Հիսուսն առնվազն 500 հետևորդ ուներ (Ա Կորնթացիս 15.6): Այդ պատճառով, երբ Հիսուսը ծառայելու համար նշանակում է 70 աշակերտի, դա խոսում է միայն այն մասին, որ Նա ընտրել

էր մարդկանց այդ յուրահատուկ խումբը որոշակի առաքելության՝ Իրենից առաջ Գալիլեայի քաղաքներն ուղևորվելու և Իր հետագա այցելությունների համար հող նախապատրաստելու համար:

Միայն Ղուկասի Ավետարանում կա 70 աշակերտի մասին պատմությունը, ինչը միանգամայն բնորոշ է Ղուկասի ավետարանչական տրամադրվածությանը: 70 թիվը խորհրդանշական է Սուրբ Գրքում, ինչպես նաև՝ հրեաների պատմության մեջ: Ծննդոց գրքի տասներորդ գլուխը թվարկում է 70 ազգություն, որոնք Նոյի սերունդներն էին, իսկ Ղուկասը համընդհանուր աշխարհայացքով գրող էր: Մովսեսը 70 ավագ նշանակեց, ովքեր իրեն օգնում էին աշխատանքի մեջ (Թվոց 11.16,17,24,25): Ավագանին բաղկացած էր 70 անդամից: Սուրբ Գրքում ասված չէ, թե դա որևէ նշանակություն ունե՞ր Հիսուսի կողմից յոթանասուն աշակերտների կանչելու հարցում, և մեզ հարկավոր չէ ժամանակ ծախսել կռահումների համար: Բայց կարևոր է այն, որ Հիսուսը, առաջնորդներ ուսուցանելով եկեղեցու համար, օգտագործում էր հետևյալ ռազմավարությունը՝ իշխանությունն ու պատասխանատվությունը չկենտրոնացնել փոքրաթիվ ղեկավարների ձեռքում, այլ դրանք բաշխել բոլոր աշակերտների միջև:

Առաքելության իրականացման ուրախությունը նշանավորեց յոթանասուն աշակերտների վերադարձը: Նրանք հայտնեցին Հիսուսին. «Դևերն էլ հնազանդվում են մեզ քո անունով» (Ղուկաս 10.17): Հոգիներ նվաճելու հաջողությունը կախված չէ ավետարանչի աշխատանքից: Ավետարանիչը միայն միջոց է: Հաջողությունն անցնում է «Քո անվան» միջով: Հիսուսի անունն ու զորությունը յուրաքանչյուր հաջող ավետարանչական առաքելության կենտրոնում են:

Բայց ուշադրությո՛ւն դարձրեք յոթանասուն աշակերտների առաքելության հաջողությանը Հիսուսի երեք հիանալի արձագանքներին: Նախ, ավետարանման հաջողության մեջ Հիսուսը տեսնում է սատանայի պարտությունը (տեքստ 18): Երկրորդ, որքան ավելի եռանդուն է մարդը ներգրավված ավետարանչական աշխատանքի մեջ, այնքան ավելի մեծ իշխանություն է նրան խոստացված (տեքստ 19): Երրորդ, ավետարանիչը պետք է ուրախանա ոչ թե այն բանից, ինչի ինքը հասել է երկրի վրա, այլ նրանից, որ իր անունը գրված է երկնքում (տեքստ 20): Երկինքը ցնծում և նշում է յուրաքանչյուր մարդու, ով պոկվել է սատանայի ճանկերից: Երկնային արքայության համար ձեռք բերված յուրաքանչյուր մարդ հարված է խաբեբայի որոգայթներին:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Ղուկաս 10.24-ը: Ի՞նչ ենք տեսնում, ինչ էին կամենում, բայց չկարողացան տեսնել մարգարեներն ու թագավորները: Դա ի՞նչ պետք է նշանակի մեզ համար:

Հինգշաբթի ապրիլի 23

Աշակերտության գինը

Սոկրատի աշակերտը Պլատոնն էր: Գամաղիելի աշակերտը Սողոսն էր: Տարբեր կրոնների առաջնորդները ունեին նվիրված հետևորդներ: Նրանց աշակերտների և Հիսուսի աշակերտների տարբերությունն այն է, որ առաջին դեպքում աշակերտությունը հիմնված էր մարդկային փիլիսոփայության բովանդակության վրա, այն դեպքում, երբ երկրորդ դեպքում այն իր արմատներով հենվում է Իր՝ Հիսուսի անձի և գործերի վրա: Այսպիսով, քրիստոնեական ուսմունքը հիմնվում է ոչ միայն Քրիստոսի ուսմունքի, այլ նաև այն բանի վրա, ինչ Նա արել է մարդկության փրկության համար: Այս պատճառով Հիսուսն Իր հետևորդներին պատվիրում է լիովին նմանվել Իրեն, վերցնել սեփական խաչն ու հետևել Իր առաջնորդությանը: Առանց Գողգոթայի հետքերով գնացող մարդկանց, չկա քրիստոնեական աշակերտություն:

Կարդացե՛ք Ղուկաս 9.23-25, Մատթեոս 16.24-28, Մարկոս 8.34-36-ը: Այստեղ ի՞նչ կարևոր ուղերձ կա նրանց, ովքեր պնդում են, թե քրիստոնյա են: _____

_____

_____

Քրիստոնեական ուսմունքը գործուն կապ է փրկվածի և Փրկչի միջև. որպես փրկվածներ՝ մենք պետք է հետևենք Փրկչին: Այդ պատճառով Պողոսը կարող էր ասել. «Ես Քրիստոսի հետ խաչված եմ: Եվ կենդանի եմ ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում» (Գաղատացիս 2.19,20):

Աշակերտության գինը սահմանված է Ղուկաս 9.23-ում. «Եթե մեկը ցանկանում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնի և իմ հետևից գա»: Ուշադրությո՛ւն դարձրեք ակտիվ և վճռական գործողություն նշանակող բառերին. «ուրանա», «վերցնի» և «գա»: Երբ Պետրոսն ուրացավ Հիսուսին, դժվար է գտնել «ուրանալ» բառի առավել հստակ բնորոշում: Պետրոսն ասաց. «Ես չեմ ճանաչում

Հիսուսին... »: Եվ այսպես, երբ աշակերտության խոստովանությունը պահանջում է, որ ես ինձ ուրանամ, ես պետք է ի վիճակի լինեմ ասելու, որ ես ինձ չեմ ճանաչում, իմ «ես»-ը մեռած է: Նրա փոխարեն ապրում է Քրիստոսը (Գաղատացիս 2.20): Երկրորդ, ամեն օր տանել իր խաչը՝ մշտական հիմունքներով ինքնախաչելությունը փորձելու կոչ է: Երրորդ, անհրաժեշտ է ձգտել այն բանին, որ կյանքի կենտրոնը և ուղղությունը լինի Քրիստոսը և միայն Նա:

Հիսուսն է՛լ ավելի է ընդլայնում աշակերտության գինը, ինչպես ցույց է տրված Ղուկաս 9.57-62-ում. ոչինչ և ոչ ոք չի կարող առավել բարձր դիրք զբաղեցնել, քան Հիսուսը: Նա, և միայն Նա է վեր կանգնած ամեն տեսակ ընկերության և փոխհարաբերությունների, աշխատանքի և երկրպագության մեջ: Քրիստոնեական աշակերտության մեջ սեփական «ես»-ի համար մահը հնարավոր տարբերակներից մեկը չէ. դա անհրաժեշտություն է: «Երբ Քրիստոսը կանչում է մարդուն, Նա նրան առաջարկում է գալ և մահանալ... Դա միևնույն մահն է ամեն անգամ՝ մահը Հիսուս Քրիստոսում, հին մարդու մահը՝ նրա կոչով... Միայն սեփական կամքի համար մահացած մարդը կարող է հետևել Քրիստոսին» (Դիտրիխ Բոնհյոֆֆեր, Աշակերտության գինը, 99):

Ի՞նչ է արժեցել ձեզ համար Քրիստոսին հետևելը: Լավ մտածեք ձեր պատասխանի և դրա նշանակության մասին:

Ուրբաթ ապրիլի 24

Հետագա ուսումնասիրության համար

«Վերցնելով մեր խաչը՝ մենք ազատվում ենք եսասեր «ես»-ից և սովորում ենք կրել Քրիստոսի բեռը: Անհնար է հետևել Քրիստոսին՝ չվերցնելով խաչը և չգնալով Նրա հետևից: Եթե մեր կամքը համաձայնության մեջ չէ աստվածային պահանջների հետ, մեզ անհրաժեշտ է հրաժարվել մեր փայփայած հակումներից ու ցանկություններից և գնալ Քրիստոսի հետևից» (Է. Ուայթ, Աստծո որդիներն ու դուստրերը, 69):

Հարցեր քննարկման համար

1. Եվս մեկ անգամ քննարկե՛ք չորեքշաբթի օրվա դասի վերջի հարցը Ղուկաս 10.24-ի վերաբերյալ: Մտաբերե՛ք որոշ իրադարձություններ և երևույթներ, որոնց վկան դարձանք մենք՝ ապրելով այս ժամանակ և այս դարում, և որոնք «շատ մարգարեներ և

թագավորներ» կցանկանային տեսնել, բայց չտեսան: Վերցրե՛ք, օրինակ, մարգարեությունների կատարումը: Խորհեցե՛ք այն մասին, թե շատ մարգարեների և թագավորների համար՝ Դանիելի գրքի 2-րդ, 7-րդ և 8-րդ գլուխների մարգարեությունների որ հատվածները դեռևս մնացին հեռավոր ապագայում, բայց մեզ համար դրանք արդեն պատմական փաստեր են: Է՞լ ինչ օրինակներ դուք կարող եք բերել:

2. Խորհեցե՛ք Հիսուսի այն խոսքերի մասին, որ կարելի է ստանալ ողջ աշխարհը, բայց կորցնել սեփական հոգին: Ի՞նչ նկատի ունի Նա: Մի բան է, երբ անհավատը եսասիրաբար կառչում է այս աշխարհի նյութական բարիքներին: Եվ ինչո՞ւ չկառչի, չէ՞ որ նա համարում է, թե դա ամենն է, ինչ ինքն ունի: Ուրիշ ինչի՞ն կառչի: Բայց մենք՝ Հիսուսին հավատացողներս, իմանալով, որ այս աշխարհը կվերջանա, և մի գեղեցիկ օր նորը կսկսվի, մեր մեջ ձգտում ենք նկատում՝ հնարավորինս շատ բան ստանալ այս աշխարհից: Մենք ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել այս խիստ վտանգավոր ծուղակից:
3. Կարդացե՛ք Ղուկաս 10.17-20-ը: Կարելի է հասկանալ այս մարդկանց հոգևոր հուզմունքը, երբ նրանք տեսան, որ Քրիստոսի անունով անգամ դևերն են հնազանդվում իրենց: Տեսե՛ք, թե նրանց ինչ պատասխանեց Հիսուսը: Ինչի՞ մասին պետք է հիշեն բոլորը, ովքեր մասնակցում են ավետարանչական գործունեությանը:
4. Հիշեցե՛ք մարդկանց, բացի աստվածաշնչյան կերպարներից, ովքեր Քրիստոսին հետևելու իրենց որոշման համար շատ թանկ վճարեցին, թերևս, ավելի թանկ, քան մեր մեծամասնությունը: Դասարանում պատասխանեցե՛ք «Ի՞նչ կորցրեցին այդ մարդիկ, նրանց ի՞նչ արժեցավ Քրիստոսին հետևելը, և պատրա՞ստ եմ ես անել նույնը » հարցերին:

ԴԱՍ 5

ԱՊՐԻԼԻ 25 – ՄԱՅԻՍԻ 1

ՔՐԻՍՏՈՍԸ ՈՐՊԵՍ ՇԱԲԱԹԻ ՏԵՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մարկոս 1.21, 6.2, Ղուկաս 4.17-19,31-37, Բ Կորնթացիս 5.17, Ղուկաս 6.1-11, 13.10-16:

Հիշելու համարը.

«Շաբաթը մարդի համար եղավ, և ոչ թե մարդը՝ շաբաթի համար: Ուրեմն մարդի Որդին շաբաթի էլ տերն է» (Մարկոս 2.27,28):

Թեև Ղուկասն իր Ավետարանը գրել է առաջին հերթին հեթանոսների համար, կարևոր է նշել, թե որքան հաճախ է Նա հիշատակում շավաթ օրվա մասին: Ավետարաններում և Գործք առաքելոց գրքում շաբաթ օրվա մասին 54 հիշատակումներից 17-ը գտնում ենք Ղուկասի Ավետարանում և 9-ը՝ Գործք առաքելոցում, Մատթեոսի Ավետարանում շաբաթ օրվա մասին հիշատակվում է 9, Մարկոսի Ավետարանում՝ 10 և Հովհաննեսի Ավետարանում՝ 9 անգամ: Լինելով դարձի եկած հեթանոս՝ Ղուկասը, իհարկե, հավատում էր, որ յոթերորդ օրը՝ շաբաթը, տրված է ինչպես հրեաներին, այնպես էլ հեթանոսներին: Քրիստոսի առաջին գալուստը ոչինչ չփոխեց շաբաթ օրը պահելու հարցում:

«Իր երկրային ծառայության ժամանակ Քրիստոսն ընդգծում էր շաբաթ օրվա սկզբունքային պահանջները: Իր բոլոր ուսմունքներում Նա երկյուղածություն էր դրսևորում այս պատվիրանի հանդեպ, որ Ինքն էր սահմանել: Նրա օրոք շաբաթ օրն այնքան աղավաղված էր, որ այն պահելն արտացոլում էր ոչ թե Աստծո էությունը, այլ մարդու եսասիրությունն ու բռնակալությունը: Քրիստոսը վերացրեց շաբաթվա մասին կեղծ ուսմունքը, որի միջոցով այն մարդիկ, ովքեր պնդում էին, թե գիտեն Աստծուն, աղավաղում էին Նրա կերպարը» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 183):

Սույն դասը Հիսուսին դիտարկում է որպես շաբաթ օրվա Տեր, Ով պահում էր շաբաթը, և թողել է օրինակ, որին մենք կարող ենք հետևել: Շաբաթվա առաջին օրը՝ որպես շաբաթ պահելը հաստատում չի գտնում ո՛չ Քրիստոսի կյանքում, ո՛չ Նոր Կտակարանում:

«Իր սովորության պես»
(Ղուկաս 4.16-30, տե՛ս նաև Եսայիա 61.1,2)

«Եվ իր սովորության պես շաբաթ օրը ժողովարանը մտավ» (Ղուկաս 4.16): Սա լավ ադվենտիստական տեքստ է: Մեր մեծամասնությունն այն օգտագործում է ավետարանչական հավաքներին կամ Աստվածաշնչի ուսումնասիրության դասերի ժամանակ՝ ընդգծելու համար, որ Հիսուսը պահում էր շաբաթը:

Ժողովարանները վճռորոշ դեր էին խաղում հրեաների կրոնական կյանքում: Գերության ժամանակ, երբ տաճարն արդեն գոյություն չուներ, ժողովարաններ կառուցվեցին երկրպագության և փոքրահասակ երեխաների ուսուցման համար: Ժողովարան կարելի էր կառուցել այնտեղ, ուր գոնե տասը հրեա ընտանիք էր ապրում: Մեծացած լինելով Նազարեթում՝ Հիսուսը «սովորություն» ուներ ամեն շաբաթ գնալ ժողովարան, և այժմ ծննդավայր կատարած Նրա առաջին ուղևորության ժամանակ մենք Նրան գտնում ենք ժողովարանում:

Կարդացե՛ք Մարկոս 1.21, 6.2, Ղուկաս 4.16-30, 6.6-11, 13.10-16, 14.1-5-ը: Այս տեքստերը մեզ ի՞նչ են ասում Հիսուսի և շաբաթ օրվա մասին: Երբ դուք կարդաք դրանք, հարցրեք ինքներդ ձեզ, թե կարելի՞ է որևէ տեղ գտնել ցուցում այն մասին, որ Հիսուսը կա՛մ վերացրել է շաբաթը պահելը, կա՛մ էլ նշել է մեկ այլ օր, որով հարկավոր է փոխարինել շաբաթը:

«Իր սովորության պես» (Ղուկաս 4.16): Միայն Ղուկասն է օգտագործում այս արտահայտությունը. նաև Ղուկաս 4.16-ում, երբ մոտենում էր Հիսուսի խաչի մահը, և Նա «իր սովորության պես գնաց Ձիթենյաց սարը»: Երկու անգամ էլ «սովորությունը» կապված էր երկրպագության և աղոթքի հետ:

Ինչո՞ւ պետք է մենք սովորություն դարձնենք շաբաթ օրերին եկեղեցի այցելելը, ինչպես Հիսուսը շաբաթ օրը այցելում էր ժողովարան:

Նախ, Աստված ամենուր է: Նրան կարելի է երկրպագել ցանկացած վայրում, բայց ինչ-որ առանձնահատկություն կա այն բանում, երբ մարդիկ հանդիպում են առանձնահատուկ վայրում, արարման ժամանակ սահմանված և որպես պատվիրան՝ Նրա բարոյական օրենքում նշանակված օրը:

Երկրորդ, դա հնարավորություն է տալիս հրապարակավ հաստատելու, որ Աստված մեր Արարիչն ու Փրկիչն է:

Վերջապես դա հնարավորություն է տալիս շփվելու և միմյանց հետ կիսվելու ուրախություններով ու տխրություններով:

Նրանք, ովքեր մեզ մեղադրում են օրինամոլության մեջ կամ պնդում են, որ մենք ստրկության մեջ ենք, քանի որ շաբաթ ենք պահում, բաց են թողնում այն մեծ օրհնությունը, որ կարող է բերել շաբաթ օրը: Դուք ինքներդ ինչպե՞ս եք զգացել ազատագրման փորձառությունը, որը կարող է տալ շաբաթ պահելը:

Երկուշաբթի ապրիլի 27

Շաբաթ. դրա գաղափարն ու նշանակությունը

«Եվ երբ որ գիրքը բացվեց... » (Ղուկաս 4.17): Շաբաթ օրը պետք է եկեղեցի գնալ ոչ միայն երկրպագության, այլ նաև Աստծո Խոսքը լսելու համար: Առանց Նրա Խոսքի ապրելը նշանակում է ապրել մեղքի որոգայթի կողքին. «Իմ սրտում թաքցրի քո խոսքերը, որ չմեղանչեմ քո դեմ» (Սաղմոս 119.11):

Կարդացե՛ք Ղուկաս 4.17-19-ը: Այսօր, հետ նայելով այն ամենին, ինչ գիտենք մենք Հիսուսի մասին, այն մասին, թե Ով էր Նա և ինչ կատարեց մեզ համար, մենք ինչպե՞ս ենք հասկանում այդ բառերի նշանակությունը: Նրա մեսիական պնդումներն ինչպե՞ս են կատարվել Տիրոջ հետ ձեր կյանքում: _____

_____

_____

Կարդալով Եսայիա 61.1,2-ը՝ Հիսուսն ասաց. «Այսօր այս գիրքը կատարվեց ձեր ականջներում» (Ղուկաս 4.21): «Այսօր» բառն արժանի է մեկնաբանության: Հրեաներն սպասում էին, որ Աստծո արքայությունը գալու է ինչ-որ ժամանակ՝ ապագայում և կգա հուզումներով՝ ուղեկցվելով ռազմական բախումներով, արմատախիլ անելով օտարերկրյա կառավարությունն ու Հուդայում վերականգնելով Դավթի գահը: Բայց Հիսուսն ասում էր, որ արքայությունն արդեն եկել է ի դեմս Իրեն, և որ Ինքը կկործանի մեղքի իշխանությունը, գահընկեց կանի սատանային և կազատագրի տանջահար գերիներին:

Խորհեցե՛ք, թե որքան սերտորեն է շաբաթ օրը կապված Նրա մեսիական պնդումների հետ: Շաբաթը հանգստի օրն է՝ հանգստի օրը Քրիստոսի մեջ (Եբրայեցիս 4.1-4): Շաբաթը ազատության և ազատագրման խորհրդանիշն է, որ մենք ունենք Քրիստոսում (Հռոմեացիս 6.6,7): Շաբաթը բացահայտում է ոչ միայն Աստծո արարչագործությունը, այլ նաև վերաարարման խոստումը Քրիստոսի մեջ (Բ Կորնթացիս 5.17, Ա Կորնթացիս 15.51-53): Համընկնում չէր նաև այն, որ Հիսուսը շաբաթ օրն ընտրեց շատ բժշկություններ կատարելու համար, որպեսզի ազատագրի նրանց, ովքեր հալածված ու գերված են հիվանդության «բանտում»:

Շաբաթ օրը ամենշաբաթյա հիշեցնում է, որը տպավորված է ինչ-որ ավելի անփոփոխ բանի վրա, քան քարն է (ժամանակի մեջ), հիշեցնում այն մասին, ինչ մենք ստացել ենք Հիսուսում:

Շաբաթը պահելն ինչպե՞ս է օգնում ձեզ՝ ավելի լավ հասկանալու հավատով փրկությունն ու հանգիստ գտնել նրանում, ինչ Քրիստոսն արեց մեզ համար՝ փոխանակ ջանալու մեր սեփական իրավունքը վաստակել երկնքում:

Երեքշաբթի ապրիլի 28

Բուժումը Կափառնայումում շաբաթ օրը

Նազարեթում մերժվելուց հետո Հիսուսը վերադարձավ Կափառնայում, որտեղ Նա նախկինում արդեն ծառայություն էր կատարել (Մատթեոս 4.13): Այս քաղաքը Գալիլեայում Նրա ծառայության համար յուրօրինակ բազա էր դարձել: Այդ քաղաքում կար ժողովարան, հնարավոր է՝ կառուցված հռոմեացի ծառայողների կողմից (Ղուկաս 7.5), և Հիսուսը, Իր սովորության պես, շաբաթ օրը մտավ ժողովարան:

Հիսուսի մեն-միակ շաբաթօրյա ծառայությունը գործունեության լայն շրջանակ ընդգրկեց՝ ուսուցում, ապաքինում, քարոզ: Ոչինչ ասված չէ այն մասին, թե հատկապես ինչի մասին էր քարոզում Հիսուսը, բայց մարդկանց մեջ դա զարմանք հարուցեց. «Որ նրա խոսքը իշխանությունով էր» (Ղուկաս 4.32): Նրա ուսմունքը շատ էր տարբերվում ռաբբիների ուսմունքից, դրանում հասարակ կիսամիջոցներ չկային: Նրա քարոզը հնչում էր իշխանությամբ, արմատներն առնում էր Սուրբ Գրքից, մատուցվում էր Սուրբ Հոգու զորությամբ՝ մեղքն անվանելով իր անունով և համառորեն ապաշխարության կոչ անելով:

Կարդացե՛ք Ղուկաս 4.31-37: Այս տեքստերում ի՞նչ համոզիչ ճշմարտություններ են բացվում 1) մեծ պայքարի, 2) դևերի իրական լինելու, 3) շաբաթ օրվա նպատակի և 4) չարի հանդեպ Աստծո իշխանության մասին: Է՞լ ինչ կարելի է գտնել այնտեղ: _____

_____

_____

Ղուկաս 4.31-41-ում մենք կարդում ենք շաբաթօրյա հինգ ապաքինումներից մեկի մասին, որոնց մասին հիշատակում է Ղուկասը (տե՛ս Ղուկաս 4.38,39, 6.6-11, 13.10-16, 14.1-16): Նազարեթում քարոզի ժամանակ Հիսուսը հայտարարեց, որ Իր առաքելությունն է՝ թեթևացնել ցավը, ապաքինել և վերականգնել կոտրված սիրտ ունեցողներին և հալածվածներին: Այստեղ՝ Կափառնայումում, շաբաթ օրը, երբ ժողովարանը լի էր աղոթողներով, դիվահարը Հիսուսին դիմեց խոստովանությամբ. «Թող տուր, ի՞նչ բան ունես մեզ հետ, Հիսուս Նազովրեցի... Գիտեմ քեզ, դու ով ես, Աստծո Սուրբը» (Ղուկաս 4.34): Դևը, լինելով չարի ուժերի ներկայացուցիչ և այդպիսով գերբնական էակ, անմիջապես ճանաչեց մարմնացած Փրկչին: Այս պատմության մեջ տեսանելի և անտեսանելի աշխարհների միջև եղած վարագույրը հետ քաշվեց:

Խորհեցե՛ք այն մասին, թե այստեղ որքանով է ակնհայտորեն դրսևորված մեծ պայքարը: Հաճախ դա այնքան էլ ակներև չի լինում: Ինչպե՞ս է դա դրսևորվում ձեր սեփական կյանքում: Ո՞րն է այդ պայքարում հաղթելու ձեր միակ հույսը: Տե՛ս նաև Ա Կորնթացիս 15.2:

Չորեքշաբթի **ապրիլի 29**

Շաբաթի փերը

Ղուկաս 6.1-11-ը նկարագրում է երկու դեպք այն մասին, թե ինչպես Հիսուսը շաբաթ օրվա հարցով բախվեց փարիսեցիների հետ:

Առաջին դեպքի մասին կարդացե՛ք Ղուկաս 6.1-5-ում: Հիսուսն ինչպե՞ս արձագանքեց մեղադրանքներին այն մասին, թե Ինքը և Իր աշակերտները չեն պահում օրենքը և շաբաթը: _____

_____

_____

Դաշտով անցնելիս աշակերտները հասկեր քաղեցին, տրորեցին իրենց ափերի մեջ և կերան: Փարիսեցիներն, իրենց հերթին, աշակերտներին մեղադրեցին շաբաթ օրվա մասին պատվիրանի խախտման մեջ: Հիսուսը նրանց հիշեցրեց Դավիթ թագավորի մասին, ով, քաղցած լինելով, մտավ Աստծո տունը, վերցրեց առաջավորաց հացերը, որ թույլատրվում էր ուտել միայն քահանաներին, կերավ և տվեց իր զինվորներին: Այդպիսով Հիսուսը ցույց տվեց, թե ինչպես փարիսեցիները, օրինամոլության երկար պատմության ընթացքում, դնելով կանոն կանոնի, ավանդույթ ավանդույթի վրա, շաբաթը դարձրել էին ոչ թե ուրախություն, ինչ պետք է լիներ այն, այլ անտանելի բեռ:

Երկրորդ պատմությունը կարդացե՛ք Ղուկաս 6.6-11-ում: Շաբաթ օրվա մասին ի՞նչ դասեր են անկիայտ այստեղ: _

_____

_____

_____

_____

Թեև այս պատմությունը պատմում են բոլոր սինօպտիկական Ավետարանները, միայն Ղուկասն է հիշատակում այն մասին, որ մարդու հենց աջ ձեռքն էր չորացած: Բժիշկ Ղուկասի այս լրացուցիչ մանրամասնությունը օգնում է մեզ՝ հասկանալու, թե տվյալ ֆիզիկական արատը որքան լրջորեն էր ազդում նորմալ կյանք վարելու մարդու ունակության վրա: Այս իրադարձությունը երկու պատասխան գործողություն առաջ բերեց. նախ՝ փարիսեցիները հնարավորություն ստացան մեղադրել Հիսուսին շաբաթը խախտելու հարցում, եթե Նա որոշի բժշկել մարդուն: Երկրորդ՝ Հիսուսը կարդում էր նրանց սրտերը և շարունակում էր ցույց տալ, որ Ինքը շաբաթի Տերն է, Նա, Ով ստեղծել է շաբաթը, և որ Ինքը չի նահանջի հիվանդ մարդուն մեղքի ստրկությունից ազատելու Իր առաքելությունից: Այդպիսով, Նա ցույց տվեց Աստծո դիրքորոշումը շաբաթը պահելու հարցում. թույլատրելի է շաբաթ օրը բարիք գործել և կյանք փրկել (Ղուկաս 6.9-1):

Խորհեցե՛ք, թե որքանով էին այս առաջնորդները կուրացած սեփական կանոններով ու նորմերով, որոնք նրանք համարում էին Աստծունը: Մենք ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ չենք ընկել այդ նույն ծուղակը՝ թույլ տալով, որ ավանդույթներն ու մարդկային սովորույթները մեզանից թաքցնեն աստվածային խորը ճշմարտությունները:

Հինգշաբթի ապրիլի 30

Շաբաթ. բուժել հիվանդի՞ն, թե՞ եզը դուրս հանել ջրհորից

Երեք սինօպտիկական Ավետարաններից միայն Ղուկասն է նկարագրում շաբաթ օրը տեղի ունեցած այդ երկու բժշկությունները (Ղուկաս 13.10-16, 14.1-15): Առաջինը առաջ բերեց ժողովարանի ղեկավարի դժգոհությունը, երկրորդը փարիսեցիներին ստիպեց լռել: Բոլոր դեպքերում, Հիսուսի թշնամիները օրենքի՝ իրենց սխալ մեկնաբանությունն օգտագործում էին Նրան՝ շաբաթը խախտելու մեջ մեղադրելու համար:

Կարդացե՛ք Ղուկաս 13.10-16 և 14.1-6-ը: Այստեղ ի՞նչ կարևոր դասեր են բացահայտվում այն մասին, թե ինչպես կարելի է հեշտորեն խեղաթյուրել աստվածաշնչյան ճշմարտությունները: _____

_____

_____

Դիտարկենք կծկված կնոջ բժշկումը: Նա պատկանում էր այն սեռին, որին արհամարհում էին փարիսեցիները, նա հաշմանդամ էր ավելի քան 18 տարի: Դա բավականաչափ երկար ժամանակ էր՝ փորձելու համար նրա համբերությունը և ուժեղացնելու համար կյանքի անիմաստության զգացումը, և, վերջապես, կինը բացարձակապես ի զորու չէր ազատագրելու ինքն իրեն:

Եվ ահա նրա մոտ գալիս է աստվածային շնորհը՝ ի դեմս Հիսուսի: Նա տեսնում է կնոջը, կանչում է և ասում, որ նա կարող է բուժվել, ձեռքը դնում է նրա վրա, և «նա շուտով ուղղվեց» (Ղուկաս 13.13): Տասնութամյա տառապանքները հանկարծակի փոխարինվում են ամենաուժեղ ուրախության պահով, և կինը «փառավորում էր Աստծուն» (տեքստ 13): Յուրաքանչյուր բայ, որ օգտագործում է Ղուկասը, ցույց է տալիս կնոջ արժեքավորությունն ու արժանավորությունը, և առհասարակ յուրաքանչյուր մարդու արժեքն ու արժանավորությունը՝ անկախ այն հանգամանքներից, որոնցում նա հայտնվել էր:

Երկրորդ հրաշքը տեղի ունեցավ, երբ (Ղուկաս 14.1-6) Հիսուսը շաբաթ օրը փարիսեցու տուն էր գնում՝ ճաշելու: Ճանապարհին Նա բժշկում է մի մարդու, ով տառապում էր ջրգողությամբ: Կանխատեսելով կրոնական առաջնորդների առարկությունները, ովքեր հետևում էին Իր գործողություններին, Հիսուսը երկու հարց տվեց. առաջինը

օրենքի նպատակի մասին («Արժա՞ն է շաբաթ օրը բժշկություն անել»՝ տեքստ 3), և երկրորդը՝ մարդու արժեքավորության մասին («Ձեզանից որի՞ էշը կամ եզը ջրհորի մեջ ընկնի, և նա շուտով չի հանի նրան շաբաթ օրը» տեքստ 5): Նրա նպատակը պետք է ակներև լիներ. ըստ էության, հենց այդպես էլ կար, որովհետև, ինչպես գրում է Ղուկասը, նրանք պատասխան չունեին Նրա հարցերին: Հիսուսը բացահայտում էր նրանց վատթարագույն կեղծավորությունը, քանի որ այն քողարկված էր սրբության քողով և նաև դժգոհության՝ իբր Աստծո սրբազան Օրենքի աղաղակող խախտման համար:

Որքա՜ն զգույշ պետք է լինենք մենք:

Ուրբաթ **մայիսի 1**

Հետագա ուսումնասիրության համար

«Եթե Աստված մի պահ մոռանար երկրի մասին, մարդկությունը կոչնչանար: Մարդը նույնպես որոշակի պարտականություններ ունի այդ օրը. պետք է խնամել հիվանդին, օգնություն ցուցաբերել կարիքավորներին: Մեղավոր կլինի նա, ով շաբաթ օրը չի թեթևացնի մերձավորի տառապանքները: Աստծո հանգստի սուրբ օրը տրվել է մարդու համար, և գթասրտության գործերը միանգամայն համապատասխանում են դրա նշանակությանը: Տերը չի ցանկանում, որ Իր արարչագործությունը տառապի ցավից, որը կարելի է թեթևացնել շաբաթ օրը, ինչպես և ցանկացած այլ օր» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 207):

«Հրեաներին տրված ոչ մի այլ հրահանգ նրանց այդքան հստակ չէր տարբերում իրենց շրջապատող ժողովուրդներից, որքան շաբաթը: Աստված ցանկանում էր, որ շաբաթը պահելը դառնա հրեաների՝ որպես Իր հետևորդների բնորոշ գիծը: Այն պետք է նշանավորեր նրանց հեռացումը կռապաշտությունից և միությունը ճշմարիտ Աստծո հետ: Բայց շաբաթ օրը սրբացնելու համար մարդիկ պետք է իրենք սուրբ լինեն: Հավատի միջոցով նրանք պետք է հաղորդակից դառնան Քրիստոսի արդարությանը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 283):

Հարցեր քննարկման համար

1. Մի՞թե զարմանալի չէ, թե որքան պարզ է Աստվածաշունչը խոսում Հիսուսի և շաբաթ օրվա մասին: Եվ, այնուամենայնիվ, միլիոնավոր մարդիկ, ովքեր ողջ աշխարհում կանոնավոր կերպով այցելում

են եկեղեցիներ, մինչև հիմա պնդում են, որ արդեն պարտադիր չէ յոթերորդ օրը պահելը, կամ էլ՝ որ այն պահելը հավասարազոր է օրինամոլության: Սա ի՞նչ պետք է ասի մեզ անսասան հավատարմության և Աստծո Խոսքին հնազանդության մասին: Մարդիկ խաբված են այնպիսի հիմնարար հարցում, ինչպիսին Աստծո սրբազան Օրենքն է: Ի՞նչ կարևոր նախազգուշացում է անում Հիսուսը Մարկոսի Ավետարանի 13.22-ում:

2. Տեսե՛ք, թե որքան ջանադրաբար է աշխատել սատանան, որպեսզի ոչնչացնի շաբաթը. նա օգտագործել է հրեա կրոնական առաջնորդներին՝ այն ծանր բեռի վերածելու համար՝ ոչնչացնելով այն ամենը, ինչ պետք է նշանակեր այն և ինչ պետք է լիներ: Նա օգտագործում է եկեղեցու ղեկավարներին, որպեսզի հերքի այն՝ որպես օրինամոլություն կամ էլ պարզապես հրեական ավանդույթ, որը մնացել է անցյալում: Ի՞նչ կա շաբաթ օրվա մեջ, որ այն դարձնում է սատանայի այդքան ուժեղ ատելության առարկան:
3. Հիսուսը «շաբաթի էլ տերն է» (Ղուկաս 6.5): Այս պնդումն ի՞նչ նշանակություն ունի քրիստոնյաների և շաբաթ օրվա հանդեպ նրանց վերաբերմունքի համար:

ԴԱՍ 6

ՄԱՅԻՍԻ 2-8

ԿԱՆԱՅՔ ՀԻՍՈՒՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 1.39-55, 2.36-38, 7.11-17,36-50, Հռոմեացիս 10.17, Ղուկաս 8.1-3, 18.1-8:

Հիշելու համարը.

«Որովհետև ամենքդ Աստծո որդիներ եք Քրիստոս Հիսուսի հավատով... Այլևս ոչ հրեա կա, ոչ հույն, ոչ ծառա կա և ոչ ազատ, ոչ արու կա և ոչ էգ. որովհետև դուք ամենքդ մեկ եք Քրիստոս Հիսուսում» (Գաղատացիս 3.26-28):

Ղուկասի Ավետարանը երբեմն անվանում են «Կանանց Ավետարան», որովհետև այն ավելի, քան մյուսները, հատուկ մատնանշում է, թե Հիսուսը որքանով էր ուշադիր կանանց պահանջմունքների հանդեպ, և թե կանայք որքան խորն էին ներգրավված Իր ծառայության մեջ:

Հիսուսի ապրած ժամանակաշրջանում, ինչպես և որոշ ժամանակակից մշակույթներում, կանայք ոչ մի արժեք չունեին: Այն ժամանակ որոշ հրեա տղամարդիկ շնորհակալություն էին հայտնում Աստծուն, որ չեն ծնվել ստրուկ, հեթանոս կամ կին: Հունական և հռոմեական հասարակության մեջ երբեմն կանանց է՛լ ավելի վատ էին վերաբերվում: Հռոմեական մշակույթում ամենաթողությունը գործնականում վերածվել էր անսահմանափակ սանձարձակության: Կինը մարդուն հաճախ անհրաժեշտ էր միայն օրինական երեխաներ ծնելու համար, ովքեր կժառանգեին իր ունեցվածքը, իսկ սեփական մեղսավոր հաճույքների համար նա ունենում էր հարճեր:

Կանանց հանդեպ այսքան սոսկալի վերաբերմունքի ֆոնին Հիսուսը բարի լուր բերեց այն մասին, որ կանայք իրականում Աբրահամի դուստրեր են (տե՛ս Ղուկաս 13.16): Կանանց համար որքա՜ն հաճելի պետք է լիներ այն ժամանակներում լսելը, որ Հիսուսի մեջ նրանք Աստծո նույնպիսի զավակներ են և նույնպիսի արժեք ունեն Նրա աչքում, ինչ և տղամարդիկ: Բոլոր երկրների ժամանակակից կանանց համար լուրը մնում է նույնը. մենք ամենքս՝ տղամարդիկ և կանայք, մեկ ենք Քրիստոս Հիսուսում:

Միաշաբթի **մայիսի 3**

Կանայք, ովքեր ողջունում էին Հիսուսի գալուստը

Միայն Հիսուսն է նկարագրում այդ կանանց արձագանքը տիեզերական պատմության հրաշքին. որ Աստծո Որդին մարդկային մարմին ընդունեց, որպեսզի ավարտի իր Հոր քավչարար առաքելությունը, և իրականացնի իր ժողովրդի մեսիական իղձերը: Թեև այդ կանայք լիովին չէին հասկանում, թե ինչ է տեղի ունենում, նրանց բառերն ու արձագանքը այդ զարմանահրաշ իրադարձություններին ցույց տվեցին նրանց հավատն ուԱստծո գործերի հանդեպ:

Կարդացե՛ք Ղուկաս 1.39-45-ը Եղիսաբեթի և Մարիամի հանդիպման մասին: Եղիսաբեթի զրույցի ո՞ր պահն է ցույց տալիս, որ նա հասկանում է, թեկուզ սահմանափակ չափով, այն վիթխարի իրադարձությունները, որ տեղի էին ունենում այդ ժամանակ: _____

_____

_____

Եղիսաբեթից հետո խոսեց Մարիամը (Ղուկաս 1.46-55): Նրա խոսքերը հաճախ երգ են համարում. դրանք լի են Հին Կտակարանից մեջբերումներով, որոնք հաստատում են, որ Մարիամը մանրակրկիտ ուսումնասիրում էր Սուրբ Գիրքը և, հետևաբար, հարմար մայր էր Հիսուսի համար: Մարիամի երգը կառուցվում էր ոչ միայն Սուրբ Գրքի, այլ նաև Աստծո հետ նրա անձնական, խորը փոխհարաբերությունների վրա:

Կարդացե՛ք Ղուկաս 2.36-38-ը: Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են ի հայտ գալիս Աննայի՝ տաճարի մարգարեուհու մասին: _____

_____

_____

Ապագա հույսն իր հիմնարար իրականացումը գտնում է Հիսուսի մեջ: Ծեր այրի կինն ընդունում է այդ հրաշքը և այսուհետ իր պարտադիր առաքելությունն է դարձնում Փրկչի մասին քարոզը բոլոր նրանց, ովքեր եկել էին տաճար: Նա դարձավ առաջին կին ավետարանիչը, ով քարոզում էր Բարի լուրը:

Փորձե՛ք պատկերացնել այդ կանանց զարմանքն ու ապշահարությունը, ովքեր հետևում էին իրենց շուրջը ծավալվող իրադարձություններին: Ի՞նչ կարող ենք անել մենք՝

մեր սրտերում պահպանելու զարմանքն ու հիացմունքը այն մեծ ճշմարտությունների հանդեպ, որ կանչված ենք հռչակելու:

Երկուշաբթի մայիսի 4

Կանայք և Հիսուսի կատարած ապաքինման ծառայությունը

Ղուկաս 7.11-17-ում կարդացե՛ք Նային քաղաքում տեղի ունեցած հրաշքի մասին: Այս աղքատ, ավելին՝ այրի կինը, հիմա բախվեց մեկ այլ փորձության՝ միակ որդու մահը: Կնոջ հետ թաղման թափորի մեջ բազմաթիվ եղերամայրեր էին գնում՝ արտահայտելով հասարակական վիշտն ու ցավակցությունը: Միակ որդու կորուստը, միայնակ կյանքի անորոշ ապագայի համադրությամբ, այրուն նետել էր բացարձակ ցավի ու անելանելիության հորձանուտը:

Բայց քաղաքից դուրս եկող թաղման թափորը հանդիպեց քաղաք մտնող մեկ այլ թափորի: Դուրս եկող թափորն առաջնորդում էր մահը, մտնողը՝ կյանքը՝ հայտնված Արարչի մեծությամբ: Երբ երկու թափորները հանդիպեցին, Հիսուսը այրուն տեսավ հուսահատության և տառապանքի մեջ: «Եվ Տերը նրան տեսավ՝ գթաց նրա վրա և ասաց նրան. Մի՛ լար» (Ղուկաս 7.13): Լաց չլինելու խնդրանքն անիմաստ կլիներ, եթե չբխեր Հիսուսից՝ կյանքի Տիրոջից, որովհետև «մի՛ լար» հրամանի հետևում կանգնած էր կնոջ արցունքների պատճառը վերացնելու իշխանությունը. Հիսուսը մեկնեց ձեռքը, դիպավ դագաղին և երիտասարդին հրամայեց վեր կենալ: Դագաղին դիպչելը կարևոր արարողություն էր: Նա ավելի շուտ կբավարարեր մարդկանց կարիքները, քան կկատարեր ծեսերը:

Նային քաղաքը ոչ միայն ականատես դարձավ մեծ հրաշքի, այլ նաև ապշեցուցիչ լուր ստացավ. Հիսուսում ոչ մի տարբերություն չկա տղամարդկանց հոգևոր ցավի և կանանց հոգևոր տառապանքների միջև: Բացի դրանից, Նրա ներկայությունը մարտահրավեր է նետում մահվան թագավորությանն ու ավերում է նրա իշխանությունը:

Կարդացե՛ք նաև Ղուկաս 8.41,42,49-56-ը: Հայրոսը ազդեցիկ մարդ էր՝ ժողովարանի իշխան, ով պատասխանատու էր ժողովարանի աշխատանքի և ծառայության համար: Յուրաքանչյուր շաբաթ օր նա ընտրում էր այն մարդուն, ով պետք է աղոթեր, կարդար Սուրբ Գիրքը և քարոզեր: Նա ոչ միայն բարձրաստիճան ու ազդեցիկ մարդ էր, այլ

նաև հարուստ և իշխանությամբ օժտված: Նա սիրում էր իր դստերը և հանուն նրա ապաքինման՝ առանց տատանվելու դիմեց նրան:

Այս պատմությունները խոսում են այն մասին, թե ինչպես Հիսուս Քրիստոսի խոսքը մահացած որդուն վերադարձրեց իր մորը, իսկ մահացած դստերը՝ հորը: Խորհեցե՛ք, թե այդ իրադարձությունները որքան անհավանական կթվային մարդկանց, ովքեր տեսնում էին դրանք, հատկապես՝ ծնողներին: Այս պատումներն ի՞նչ են ասում մեզ Աստծո զորության մասին: Դրանք ի՞նչ են ասում այն մասին, թե որքան սահմանափակ ենք մենք այդ զորությունն ըմբռնելու հարցում (չէ՞ որ գիտությունը ներկայումս անգամ ամենաչնչին պատկերացում չունի, թե ինչպես կարող էր դա տեղի ունենալ): Եվ ամենակարևորը. մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի սովորենք վստահել այդ զորությանը և Աստծո բարությանը, Ով օժտված է դրանով՝ անկախ մեր ներկա հանգամանքներից:

Երեքշաբթի **մայիսի 5**

Երախտագիտությամբ և հավատով լի կանայք

Ղուկաս 7.36-50-ում սննդի ընդունումը Հիսուսը վերածում է կարևորագույն հոգևոր իրադարձության, որը հաստատում է մեղսագործ կնոջ արժանապատվությունը: Պատվավոր քաղաքացի ու փարիսեցի Սիմոնը Հիսուսին հրավիրեց ճաշի: Հյուրերը նստոտեցին իրենց տեղերում, և հանկարծ իրարանցում սկսվեց. «այն քաղաքում մի կին, որ մեղավոր էր» (համար 37), նետվեց ուղիղ դեպի Հիսուսը, ջարդեց շատ թանկարժեք յուղով ալեբաստրե անոթը, յուղը թափեց Նրա վրա, կռացավ Նրա ոտքերի վրա և դրանք լվաց իր արցունքներով:

Մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել այն բանից, թե ինչպես կինը դրսևորեց իր երախտագիտությունը, և ինչպես ընդունեց Հիսուսը նրա հավատի գործողությունը: _____

_____

_____

«Մարդկային հասկացողությամբ Մարիամը անուղղելի մեղսագործ էր, իսկ Քրիստոսը լավ սաղմեր տեսավ նրա հոգում, նրա դրական գծերը: Փրկության ծրագիրը մարդկության առջև վիթխարի հնարավորություններ է բացել: Այդ հնարավորությունները պետք է

իրականացվեին նաև Մարիամի մեջ: Նրա շնորհով կինը հաղորդակից դարձավ աստվածային էությանը... Նրա հարությունից հետո Մարիամը բոլորից շուտ եկավ դագաղի մոտ: Մարիամը առաջինը հռչակեց Փրկչի հարության մասին» (Է. Ուայթը, Դարերի փափագը, 568):

Ղուկաս 8.43-48-ում առավել դժբախտ ու խղճուկ մարդը դառնում է Փրկչի խորագույն հարգանքի առարկան: Այդ կինը շատ երկար էր տառապել անբուժելի հիվանդությամբ, որը քայքայում էր նրա մարմինն ու հոգին: Եվ ահա տասներկու տարվա ողբերգության մեջ առաջին անգամ հույսի կրակ առկայծեց. կինը լսեց Հիսուսի մասին (Մարկոս 5.27):

Ի՞նչ էր լսել կինը: Ծա՞տ բան, թե՞ քիչ: Մեզ հայտնի չէ դա: Բայց կինը գիտեր, որ Հիսուսը հոգ էր տանում աղքատների մասին, Նա ընդունում է հասարակությունից արտաքսվածներին, Նա դիպչում է բորոտներին, Նա ջուրը գինի դարձրեց, բայց ամենից առավել Նա հոգ է տանում հուսահատ մարդկանց մասին, որոնցից մեկն էլ այդ կինն էր: Բայց պարզապես լսելը բավական չէ. լսելը պետք է տանի դեպի հավատ (Հռոմեացիս 10.17): Եվ այդ հավատը դրդեց նրան՝ դիպչելու Նրա հագուստին: Այդ հպումը հավատից էր դրդված, նպատակաուղղված էր, գործուն և քրիստոսակենտրոն: Միայն այդպիսի հավատը կարող է ստանալ Կենսատուի օրհնությունը. «Քո հավատը քեզ փրկեց» (Ղուկաս 8.48):

Որքա՜ն հեշտ է նայել մարդկանց և դատապարտել նրանց, այնպես չէ՞: Անգամ եթե մենք երբեմն քննադատությունը չենք արտահայտում բառերով, մեր սրտերում, միևնույնն է, դատապարտում ենք նրանց, ինչը նույնպես ճիշտ չէ: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել չդատել ուրիշներին անգամ մեր մտքում. չէ՞ որ մենք չգիտենք, թե ինչ կանեինք, եթե նրանց փոխարեն լինեինք:

Չորեքշաբթի **մայիսի 6**

Հիսուսին հետևող կանայք

Կարդացե՛ք Ղուկաս 10.38-42-ը: Մենք ի՞նչ կարևոր հոգևոր դասեր կարող ենք քաղել մեզ համար այս պատմությունից (տե՛ս նաև Ղուկաս 8.14): _____

_____

Որպես տանտիրուհի՝ Մարթան «ծառայության համար շատ զբաղմունքի մեջ էր» (Ղուկաս 10.40) և զբաղված էր հյուրերին ամեն լավագույնը հյուրասիրելով: Իսկ Մարիամը «Հիսուսի ոտքերի մոտ նստեց և լսում էր նրա խոսքերը» (համար 39): Մարթան գանգատվեց Հիսուսին, որ ինքը ստիպված է մենակ անել ողջ ծանր աշխատանքը: Ու թեև Հիսուսը Մարթային չհանդիմանեց հոգսերով տարված լինելու համար, Նա նշեց կյանքում ամենակարևորը որոշելու անհրաժեշտությունը: Հիսուսի հետ շփումը աշակերտության կարևորագույն բաղադրիչն է. հյուրասիրել հետո էլ կարելի է:

«Քրիստոսի գործը կարիք ունի ջանասեր ու գործունյա աշխատողների: Մարթայի նմանների համար, ովքեր ժրաջան են, պատրաստ ակտիվ գործողությունների, գործունեության վիթխարի դաշտ կա: Բայց նրանք նախ թող Մարիամի հետ նստեն Հիսուսի ոտքերի մոտ: Թող նրանց ջանասեր, նախաձեռնող ու գործունյա էությունը լուսավորվի Քրիստոսի շնորհով. այդ դեպքում մարդը կսկսի բարի ազդեցություն գործել շրջապատողների վրա» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 525):

Կարդացե՛ք Ղուկաս 8.1-3,23.55,56, 24.1-12-ը: Այս տեքստերում ի՞նչ է ասված կանանց դերի մասին՝ Քրիստոսին ծառայելու հարցում: _____

_____

_____

Իր ծառայության ընդլայնմանը զուգընթաց՝ Հիսուսը տասներկու աշակերտների ուղեկցությամբ «ման էր գալիս քաղաքները և գյուղերը» (Ղուկաս 8.1): Ղուկասը նաև համոզիչ վկայություն է գրի առել այն մասին, որ որոշ կանայք, ում ապաքինել էր Հիսուսը, կամ ում սրտին դիպել էին Նրա քարոզները, այդ թվում նաև որոշ հարուստ կանայք, նույնպես հետևում էին նրան: Ահա մի քանիսը, ում հիշատակում է Ղուկասը. (1) չար ոգիներից ազատված կանայք, այդ թվում՝ Մարիամ Մագդաղենացին, (2) Հովհաննան՝ Հերովդեսի տան տեսուչ՝ Քուզայի կինը, (3) Շուշանը, (4) «և շատ ուրիշներ, որ իրենց ստացվածքից նրան ծառայություն էին անում» (համար 3):

Երբ մենք հասկանում ենք, որ Հիսուսը մահացավ յուրաքանչյուր մարդու համար, կարող ենք ավելի լավ ըմբռնել բոլոր մարդկանց իսկական հավասարությունը Աստծո առջև: Այս ճշմարտությունը որքանո՞վ է լավ դրսևորվում միմյանց հանդեպ մեր վերաբերմունքի մեջ: Այսինքն՝

անհրաժեշտության դեպքում դուք ինչպե՞ս կարող եք արմատախիլ անել ցանկացած պնդում, որն ստիպում է ձեզ վերևից նայել ուրիշներին՝ որպես պակաս արժանավոր մարդկանց:

Հինգշաբթի մայիսի 7

Աղոթքի մեջ՝ հաստատ, բարի գործերում՝ զոհաբերող

Ղուկասը երկու դեպք է նկարագրում, երբ Հիսուսը բերեց երկու այրու օրինակ՝ կարևոր հոգևոր ճշմարտություններ սովորեցնելու համար:

Առաջին դեպքում (Ղուկաս 18.1-8) Հիսուսը կարեկցանքով պատմեց աղքատ ու ընչազուրկ այրու մասին, ով արդարություն խնդրելով դիմել էր անիրավ ու հզոր դատավորին: Կինը անարդարության ու խաբեության զոհ էր և, այնուամենայնիվ, հավատում էր օրենքի ուժին և արդարադատությանը: Բայց դատավորը չէր վախենում Աստծուց և, ակներևաբար, չէր շտապում օգնել այրուն: Այրիների մասին հոգ տանելը աստվածաշնչյան պահանջ է (Ելից 22.22-24, Սաղմոս 68.5, Եսայիա 1.17), բայց օրենքն անտեսելը հաճույք էր պատճառում դատավորին: Սակայն այրին մեկ զենք ուներ՝ համառությունը. հմտորեն օգտագործելով այն՝ կինը դատավորին ստիպեց լսել իրեն և հասավ արդարության:

Այս պատճառը երեք կարևոր դաս է տալիս. (1) միշտ աղոթեք և երբեք մի հանձնվեք (Ղուկաս 18.1), (2) աղոթքը շատ բան է փոխում՝ անգամ ամբարիշտ դատավորի սիրտը, (3) հաստատուն հավատը հաղթող հավատ է: Ճշմարիտ հավատը հավիտենական խորհուրդ է տալիս յուրաքանչյուր քրիստոնյայի. երբեք մի՛ հանձնվեք, անգամ եթե դա նշանակում է սպասել վերջնական արդարադատությանը, երբ կգա «Մարդի Որդին» (համար 8):

Երկրորդ դեպքում (Ղուկաս 21.1-4, Մարկոս 12.41-44), երբ Հիսուսն ավարտեց իր խոսքը, որը դատապարտում էր կրոնական երկերեսանիությունը և տաճարի հանդեպ դպիրների ու կրոնական առաջնորդների հավակնությունները, Նա մատնանշեց ապշեցուցիչ տարբերության օրինակ՝ աղքատ այրին, ով բացահայտում է ճշմարիտ կրոնի բնույթը:

Հիսուսը հանդիմանում էր կրոնական առաջնորդներին, որ նրանք «ուտում են որբևայրիների տները» (Ղուկաս 20.47) և խախտում են՝ այրիների ու աղքատների մասին հոգ տանելու աստվածաշնչյան հրամանը: Այսօր էլ շատերը ընծայում են միայն բարեպաշտ թվալու համար, և, որ ավելի վատ է, այն, ինչ նրանք տալիս են, տալիս են չափազանց մեծ հարստությունից: Իրականում, ինչ-որ բան տալով, նրանք անձամբ ոչինչ չեն զոհաբերում: Այդ պատճառով Հիսուսն իր աշակերտների ուշադրությունը սևեռեց այրու վրա՝ որպես ճշմարիտ կրոնի օրինակ, որովհետև կինը տվել էր այն ամենն, ինչ ուներ:

Մարդկանց առաջին կատեգորիայի դրդապատճառը աչքի ընկնելու ցանկությունն էր, իսկ այրին դրդված էր զոհաբերելու պատրաստակամությամբ և Աստծուն փառավորելու ցանկությամբ: Հաստատելու համար այն ձգտումը, որ իր ողջ ունեցվածքն իրականում պատկանում է Աստծուն: Եվ իր ունեցած ամեն բանով Նրան ծառայելու ցանկությունը այն ուժն է, որ ստիպեց այրուն տալ իր երկու լուման: Արարչի ամենատես աչքի համար կարևոր է ոչ այնքան այն, ինչ տալիս ենք մենք, այլ այն, թե ինչու ենք տալիս. ոչ այն, թե որքան ենք տալիս, այլ այն, թե որն է մեր զոհի չափը:

Որքանո՞վ եք դուք զոհաբերում ձեզ՝ ուրիշների բարության և Աստծո գործի համար:

Ուրբաթ մայիսի 8

Հետագա ուսումնասիրության համար

«Նա, Ով հիշեց Իր մորը, երբ կախված էր խաչից, Ով հայտնվեց ողբացող կանանց և նրանց Իր լրաբերները դարձրեց, որպեսզի նրանք առաջինը տարածեն Փրկչի հարության մասին ուրախալի լուրը, այսօր կնոջ լավագույն Ընկերն է և պատրաստ է օգնել նրան կյանքի բոլոր պարագաներում» (Է. Ուայթ, Քարիստոնեական տուն, 204):

«Տերը աշխատանքի է կանչում կանանց՝ տղամարդկանց հավասար: Ներկա ճգնաժամային ժամանակում նրանք կարող են տեղ ունենալ Նրա գործում, և Աստված կկատարի Իր գործը նրանց միջոցով: Եթե կանայք լցվեն պարտքի զգացումով և սկսեն աշխատել Սուրբ Հոգու ազդեցության ներքո, նրանք ձեռք կբերեն ինքնատիրապետում, որն անհրաժեշտ է ներկա ժամանակի համար: Փրկիչն այս անձնուրաց կանանց կլուսավորի Իր լույսով և զորություն կտա, որը երբեմն գերազանցում է տղամարդկանց ուժերը: Նրանք ընդունակ

են ընտանիքներում կատարելու աշխատանք, որն ի վիճակի չեն կատարելու տղամարդիկ, աշխատանք, որը հասնում է մարդկանց ներքին կյանքի խորքերին: Նրանք կարող են մոտենալ ընդհուպ նրանց սրտերին, ովքեր ակներևաբար անհասանելի կլինեն տղամարդկանց համար: Կանանց աշխատանքը շատ անհրաժեշտ է» (Է. Ուայթ, Ավետարանչություն, 464, 465):

Հարցեր քննարկման համար

1. Ավետարանների, այդ թվում՝ Ղուկասի Ավետարանի առավել կարևոր կողմերից մեկը կապ ունի կանանց դերի հետ՝ Հիսուսի հարության հետ կապված իրադարձություններում: Բոլոր ավետարանների պատմություններում նկարագրվում է, թե ինչպես կանայք առաջինը տեսան հարություն առած Քրիստոսին և մյուսներին պատմեցին Նրա հարության մասին: Աստվածաշնչի ջատագովներն այս փաստն օգտագործում են Հիսուսի իրական ֆիզիկական հարության իրական լինելը հաստատելու համար, որը որոշ մարդիկ ժխտում կամ կասկածի տակ են առնում: Ինչո՞ւ է այստեղ կանանց դերն այդքան կարևոր: Որովհետև եթե, ինչպես պնդում են ոմանք, Հիսուսի հարության մասին պատմությունները հորինված են հեղինակների կողմից, ինչո՞ւ են նրանք հիշատակում կանանց, ովքեր՝ որպես անձինք, բարձր չէին գնահատվում այն հասարակության մեջ, ովքեր առաջինը տեսան Հիսուսին և հայտարարեցին Նրա հարության մասին: Եթե նրանք այդ պատմությունները հորինեին նրա համար, որպեսզի մարդկանց ստիպեն հավատալ, նրանք հաստատ կպատմեին տղամարդկանց մասին: Քննարկե՛ք այս միտքը:
2. Այն հասարակության մեջ, որը միշտ չէ, որ ընդունում էր կանանց արժանապատվությունը, Հիսուսը նրանց օժտեց կարգավիճակով, որ նրանց էր պատկանում Աստծո արարչագործ նախասահմանմամբ. նրանք Աստծո զավակներն են, Աբրահամի դուստրերը, և տղամարդկանց հավասար են Ավետարանի նոր դարաշրջանում: Միևնույն ժամանակ, Աստծո առջև հավասար լինելով էլ տղամարդիկ և կանայք միանման չեն: Մենք ինչպե՞ս կարող ենք հաստատել տղամարդկանց և կանանց հավասարությունը Աստծո առջև և միևնույն ժամանակ ընդունել և հաշվի առնել նրանց տարբերությունները: Այս տարբերություններն ինչպե՞ս են դրսևորվում եկեղեցու կյանքում:

ԴԱՍ 7

ՄԱՅԻՍԻ 9-15

ՀԻՍՈՒՍԸ, ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ԱՂՈԹՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 2.25-32, Հովհաննես 16.5-7, Ղուկաս 23.46, Ղուկաս 11.1-4, Մատթեոս 7.21-23, Ղուկաս 11.9-13:

Հիշելու համարը.

«Եվ ես ասում եմ ձեզ. խնդրեցեք, և կտրվի ձեզ, որոնեցեք և կգտնեք, դուռը թակեցեք և կբացվի ձեզ: Որովհետև ամեն, ով որ խնդրում է՝ առնում է, և ով որ որոնում է՝ գտնում է, և ով որ դուռը թակում է՝ բացվում է նրան» (Ղուկաս 11.9,10):

Սինօպտիկական երեք Ավետարանների հեղինակներից՝ Սուրբ Հոգու հանդեպ Հիսուսի վերաբերմունքի մասին ավելի հաճախ խոսում է Ղուկասը: Այն ժամանակ, երբ Մատթեոսը Հոգու մասին հիշատակում է 12 անգամ, իսկ Մարկոսը՝ 6 անգամ, Ղուկասի Ավետարանում՝ 17 և Գործք առաքելոց գրքում 57 անգամ է հիշատակվում Նրա մասին: Մարդկային մարմնով Հիսուսի ծնվելու պահից (Ղուկաս 1.35) և մինչև համաշխարհային առաքելության հաստատման հրամանը (Ղուկաս 24.44-49) Ղուկասը գործնական կապ է տեսնում Հիսուսի և Սուրբ Հոգու միջև: Այս կապը հիմնարար է մեր Փրկչի ծառայությունն ըմբռնելու համար: Բացի դրանից, Ղուկասը ցույց է տալիս աղոթքի կարևորությունը Հիսուսի կյանքի և առաքելության մեջ: Օժտված լինելով Հորը և Հոգուն հավասար աստվածային բնության լիությամբ՝ Հիսուսն Իր մարդկային էությամբ օրինակ է թողել աղոթքի վերաբերյալ:

Եթե Հիսուսը տեսնում էր աղոթքի անհրաժեշտությունը, որքա՞ն առավել այն կարևոր է մեզ համար:

«Առանց զգոնության և անդադար աղոթքի մեզ սպառնում է անհոգ դառնալու և ճշմարիտ ճանապարհից շեղվելու վտանգը: Թշնամին մշտապես խոչընդոտում է մեզ դեպի շնորհի աթոռը տանող մեր ճանապարհին: Նա իր կողմից ամեն բան անում է, որպեսզի մենք անտեսենք աղոթքն ու հավատը և չստանանք շնորհն ու փորձություններին դիմադրելու զորությունը» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 95):

Միաշաբթի **մայիսի 10**

Հիսուսը և Սուրբ Հոգին

Որպես հեթանոսներից դարձի եկած քրիստոնյա և Պողոս առաքյալի ուղեկից՝ ավետարանչական ճանապարհորդությունների ընթացքում, Ղուկասը դիտարկում է քրիստոսաբանական ողջ մուտքը պատմության մեջ՝ Հիսուսի մարմնացումից մինչև Նրա համբարձումը և եկեղեցու տարածումը՝ որպես աստվածային հրաշք, որ ստեղծվել և առաջնորդվում է Սուրբ Հոգու կողմից: Հիսուսի կյանքում Աստվածության բոլոր երեք Անձերին մենք տեսնում ենք գործողության մեջ՝ մեր փրկագնումն իրագործելիս:

Հետևյալ տեքստերը ի՞նչ են ասում մեզ Սուրբ Հոգու դերի մասին՝ Քրիստոսի՝ մարդկային մարմնով երկիր գալու իրողության հետ կապված: Ղուկաս 1.35,41, 2.25-32: _____

_____

_____

Հիսուսի առաքելությունը նույնպես սկսվեց Սուրբ Հոգու մասին մի քանի հիշատակումներից: Համաձայն Ղուկասի Ավետարանի՝ Հովհաննես Մկրտիչը մարգարեացավ, որ ինքը մկրտում է ջրով, իսկ Նա, Ով գալու է իրենից հետո, մկրտելու է Հոգով (Ղուկաս 3.16): Հիսուսի մկրտության ժամանակ և՛ Հայրը, և՛ Սուրբ Հոգին հաստատեցին Նրա քավչարար առաքելության իսկությունը: Հայր Աստված երկնքից հայտարարեց, որ Քրիստոսն Իր սիրելի Որդին է՝ ուղարկված մարդկության փրկագնման համար, այն ժամանակ, երբ Սուրբ Հոգին Նրա վրա իջավ աղավնու տեսքով (Ղուկաս 3.21,22): Այդ բանից հետո, «Հիսուսը Սուրբ Հոգով լցված» (Ղուկաս 4.1), պատրաստ էր անապատում հանդիպել թշնամուն և սկսել իր ծառայությունը (Ղուկաս 4.14):

Նազարեթում քարոզի ժամանակ Հիսուսը Եսայիայի մեսիական մարգարեությունը կիրառեց Իր վերաբերյալ. «Տիրոջ Հոգին ինձ վրա է» (տեքստ 18): Հոգին Նրա մշտական ուղեկիցն էր, Նրա ամրացնող զորությունն ու Մխիթարիչը Նրա հետևորդների մեջ, երբ Հիսուսն արդեն նրանց հետ չէր (Հովհաննես 16.5-7): Եվ ոչ միայն դա. Հիսուսը խոստացել էր, որ Հոգու պարգևը կտա նրանց, ովքեր խնդրում են իրեն (Ղուկաս 11.13): Հոգին, Ով միշտ Քրիստոսին կապում էր Նրա Հոր և քավչարար առաքելության հետ, այն նույն Հոգին է, Ով աշակերտներին հաստատելու է հավատի ճանապարհին: Ահա թե ինչու է Սուրբ Հոգին վճռորոշ դեր խաղում քրիստոնեական կյանքում. և իսկապես,

Սուրբ Հոգու հանդեպ հայհոյությունը բոլոր մեղքերից ծանրագույնն է (Ղուկաս 12.10):

Ի՞նչ որոշակի, գործնական քայլեր կարող ենք ձեռնարկել մենք, որպեսզի բաց լինենք Սուրբ Հոգու առաջնորդության համար: Այլ կերպ ասած, ինչպե՞ս զգույշ լինենք, որպեսզի մեր որոշումները ոչ մի դեպքում անտարբեր չմնան Նրա կանչի հանդեպ:

Երկուշաբթի մայիսի 11

Հիսուսի աղոթքի կյանքը

Կան բազում հիշատակումներ այն մասին, որ Հիսուսն աղոթում էր, բայց կան այնպիսիները, որոնց մասին ասված է միայն Ղուկասի Ավետարանում: Ուշադրություն դարձրեք հետևյալ տեքստերին, որտեղ տեսնում ենք Հիսուսին՝ Իր կյանքի կարևոր որոշումների պահին աղոթելիս:

1) Հիսուսն աղոթում էր Իր մկրտության ժամանակ (Ղուկաս 3.21):

«Սկսվում էր Նրա կյանքի նոր, ամենակարևոր փուլը: Այժմ Նա ոտք էր դնում հասարակական ծառայության լայն թատերաբեմին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 111): Նա չէր համարձակվում առանց աղոթքի սկսել Իր հասարակական ծառայության առավել լայն փուլը, որը վերջին հաշով Նրան պիտի բերեր Գողգոթայի խաչի մոտ:

2) Հիսուսը աղոթում էր առաքյալներին ընտրելուց առաջ (Ղուկաս 6.12,13): Ոչ մի առաջնորդ առանց համակարգության չի ընտրում իր հետևորդներին: Բայց Հիսուսն ընտրում էր ոչ թե պարզապես հետևորդների, այլ նրանց, ովքեր կկարողանան իրենց նմանեցնել Նրա Անձին և հասկանալ Նրա առաքելությունը: «Նրանց կանչում էին ամենակարևոր ծառայությանը, որ միայն կարող է հանձնարարվել մարդուն. այն զիջում էր միայն Իր՝ Քրիստոսի ծառայությանը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 291):

3) Հիսուսն աղոթում էր Իր աշակերտների համար (Ղուկաս 9.18): Աշակերտությունը պահանջում է բացարձակ նվիրվածություն և Հիսուսի անձի ըմբռնում: Որպեսզի տասներկուսը կարողանան իմանալ, թե Ով է եղել Ինքը, Հիսուսը «առանձին աղոթք էր անում», իսկ դրանից հետո Նա նրանց կարևոր հարց տվեց. «Բայց դուք ո՞վ եք ասում ինձ համար, թե լինեմ» (Ղուկաս 9.20):

4) Հիսուսն աղոթում էր Իր պայծառակերպումից առաջ (Ղուկաս 9.28-36) և երկրորդ հաստատումը ստացավ երկնքից, որ Ինքն է Աստծո «սիրելի որդին»: Փորձությունները, որ Նա արդեն անցել էր, և նրանք որ պիտի անցներ, չէին կարող փոխել այն մտերմությունը, որ գոյություն ուներ Հոր և «սիրելի որդու» միջև: Աղոթքի արդյունքում աշակերտները դարձան «ականատես նրա մեծափառությանը» (Բ Պետրոս 1.16):

5) Հիսուսն աղոթում էր Գեթսեմանի այգում (Ղուկաս 22. 39-46): Սա, հավանաբար, ամենակարևոր աղոթքն է փրկության պատմության մեջ: Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես է Փրկիչը միավորում երեք կարևորագույն սկզբունքները՝ Աստծո կամքի և նախախնամության առաջնայնությունը, այդ կամքը կատարելու վճռականությունն անգամ կյանքի համար ռիսկով, և Աստծո մտահղացման կատարման ճանապարհին բոլոր գայթակղությունները հաղթահարելու զորությունը:

6) Հիսուսն աղոթում էր՝ Իր կյանքը հանձնելով Աստծո ձեռքը (Ղուկաս 23.46): Նրա վերջին բառերը խաչի վրա՝ «Հայր, հոգիս քո ձեռքն եմ ավանդում», ցույց են տալիս աղոթքի հիմնական նպատակը: Ծնվելիս կամ մահվան պահին, թշնամիների կամ ընկերների շրջապատում, քուն, թե արթուն աղոթքը պետք է Աստծո հետ մշտական կապի մեջ պահի մեզ:

Այս օրինակները ձեզ ի՞նչ են ասում ձեր սեփական աղոթքի կյանքի մասին:

Երեքշաբթի **մայիսի 12**

Աղոթքի օրինակը: Մաս 1

Կարդացե՛ք Ղուկաս 11.1-4-ը: Այս տեքստերն ինչպե՞ս են են օգնում մեզ՝ հասկանալու, թե ինչպես է գործում աղոթքը: _____

_____

_____

_____

Հիսուսը սիրում էր Աստծուն «*Հայր*» անվանել, այդ բառը չորս Ավետարաններում հանդիպում է 170 անգամից ոչ պակաս: Աստծուն անվանելով մեր Հայրը՝ մենք ընդունում ենք, որ Աստված Անձ է, Ով ընդունակ է մարդկանց հետ ամենամտերիմ, խորը փոխհարա-

բերությունների: Աստված նույնքան անձնային է, նույնքան իրական, նույնքան սիրող ու հոգատար, որքան ցանկացած երկրային հայր: Բայց Նա Հայր է, Ով երկնքում է: Նա տարբերվում է մեր երկրային հորից, քանի որ Նա ամենակարող է, ամենագետ, ամենագո և սուրբ:

«Հայր մեր, որ երկնքում ես» արտահայտությունը մեզ հիշեցնում է, որ Աստված սուրբ է ու անձնավորված, իսկ քրիստոնեությունը պարզապես փիլիսոփայական գաղափար չէ և (բնապաշտական) պանթեիստական պատկերացում չէ աստծո մասին, թե Նա շրջապատող ամեն բան է:

«*Քո անունը սուրբ լինի*» (Ղուկաս 11.2): Այստեղ մենք ևս մի հիշատակում ենք գտնում Աստծո սրբության մասին: Նրանք, ովքեր իրենց անվանում են Տիրոջ հետևորդներ, պետք է Նրա անունը սրբագործեն խոսքով և գործով: Պնդել, թե հետևում ես Նրան, և միևնույն ժամանակ մեղք գործել՝ նշանակում է անպատվել Նրա անունը: Մատթեոս 7.21-23-ում Հիսուսի խոսքերը կարող են օգնել մեզ՝ ավելի լավ հասկանալու, թե ինչ է նշանակում սրբագործել Աստծո անունը:

«*Քո արքայությունը գա*» (Ղուկաս 11.2): Ավետարանները Աստծո արքայությունը հիշատակում են ավելի քան 100 անգամ. գրեթե 40 անգամ Ղուկասի Ավետարանը, գրեթե 50 անգամ Մատթեոսի Ավետարանը, 16 անգամ Մարկոսի Ավետարանը և երեք անգամ Հովհաննեսի Ավետարանը: Հենց Աստծո արքայությունը հայտնելու և հաստատելու եկավ Հիսուսը՝ ինչպես ի դեմս շնորհի թագավորության՝ ներկայումս, այնպես էլ ի դեմս ապագա խոստացված փառքի արքայության: Չմտնելով առաջին արքայության մեջ՝ անհնար է հայտնվել երկրորդում, և Փրկիչը ցանկանում է, որ Իր աշակերտներն ապրեն առաջինում՝ սպասելով երկրորդին:

«*Քո կամքը լինի՝ ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա*» (Ղուկաս 11.2): Երկնաբնակները բարձր են գնահատում Աստծո կամքը և հնազանդվում են դրան: Հիսուսն օգտագործում է այս փաստը և այն վերածում է հույսի, որ այդպես էլ կլինի նաև երկրի վրա: «Երկրի վրա» արտահայտությունը ենթադրում է ոչ թե ընդհանրացում, այլ որոշակիություն: Թող Աստծո կամքը կատարվի երկրի վրա, բայց թող այն սկսվի մեզանից, անձամբ մեզանից յուրաքանչյուրից:

Դուք ճանաչո՞ւմ եք Տիրոջը, թե՞ պարզապես գիտեք Նրա մասին: Ձեր աղոթքի կյանքը կարո՞ղ է ձեզ մոտեցնել Նրան:

Չորեքշաբթի **մայիսի 13**

Աղոթքի նմուշը: Մաս 2

«*Մեր ամեն օրվա հացը օրեցօր տուր մեզ*» (Ղուկաս 11.3): Խնդրանքը ներառում է «տուր» բառը: Այս բառը դուրս է գալիս թե՛ միլիոնատիրոջ, թե՛ մշտական կարիքի մեջ գտնվող որբի սրտից, աղոթքը ցանկացած դեպքում կախվածության արտահայտություն է և վստահության հաստատում: Մենք ամենքս կախված ենք Աստծուց, և մեր ջանադիր աղերսը՝ «տուր», մեզ ստիպում է խոստովանել, որ Աստված է բոլոր պարգևների աղբյուրը: Նա Արարիչն է: Նրանում ենք մենք կենդանի, շարժվում ենք և գոյություն ունենք: «Նա արեց մեզ, և ոչ թե մենք» (Սաղմոս 100.3):

Աստված Հայր է, Ով մեզ տալիս է ամեն բան, ինչի կարիք մենք ունենք: Այս խոստման լույսի ներքո ի՞նչ մեծ վստահություն դուք կարող եք տեսնել Ղուկաս 11.9-13: __

_____

_____

_____

Առանց Աստծո ներման մենք փրկություն չունենք. «Եվ ձեզ, որ մի ժամանակ մեռած էիք մեղքերում, իր հետ կենդանացրեց՝ բոլոր մեղքերը ձեզ շնորհելով» (Կողոսացիս 2.13): Նրանք, ովքեր զգացել են Աստծո ներումը, պետք է ձեռք մեկնեն և ընդունեն նրանց, ովքեր, հնարավոր է, նեղացրել են իրենց: Մեզ ներելու խնդրանքը, «որովհետև մենք էլ թողնում ենք» (Ղուկաս 11.4), չի նշանակում, որ Աստծո ներումը կախված է այն բանից, թե ինչպես ենք մենք ներում ուրիշներին. ավելի շուտ՝ ներվածի մեր կարգավիճակը պահանջում է, որ միշտ ապրենք շնորհի ընդլայնվող շրջանում՝ որպես Քրիստոսի աշակերտներ՝ մի կողմից ընդունելով Աստծո շնորհը, մյուս կողմից՝ Նրա սերն ու ներումը տարածելով նրանց վրա, ովքեր, հնարավոր է, նեղացրել են մեզ:

«*Եվ մեզ փորձանքի մեջ մի տանիր, այլ փրկիր մեզ չարից...*» (Ղուկաս 11.4): Այստեղ անհրաժեշտ է նշել երկու փաստ: Նախ, փորձությունը մեղք չէ: Հունարեն «փորձություն» բառն է՝ *peirasmos*: Հունարեն,«*-asmos*» վերջավորությամբ գոյականները սովորաբար նկարագրում են գործընթացը, ոչ թե արդյունքը կամ արգասիքը: Սուրբ Գիրքը փորձությունը չի դիտարկում որպես պատրաստի արգասիք. սա մեթոդ է, գործընթաց, որն օգտագործվում է որոշակի

արդյունքի հասնելու համար: Չնայած փորձությունը մեղք չէ, սակայն դրան զիջելը մեղք է: Երկրորդ, Աստված չէ փորձությունների հեղինակը (Հակոբոս 1.13): Աստված կարող է գայթակղությունը թույլ տալ, բայց Նա երբեք չի փորձում այն իմաստով, որ մարդուն ներքաշում է մեղքի մեջ: Հետևաբար, աղոթքը այն բանի խոստովանությունն է, որ Աստված մեծագույն զորության աղբյուր է՝ բանսարկուին դիմադրելու համար:

Դիտարկե՛ք Ղուկաս 11.1-4-ը: Խորհեցե՛ք այն բոլոր թեմաների մասին, որ շոշափված են այստեղ: Այս տեսանկյուններից յուրաքանչյուրում ձեր փորձառությունն ինչպե՞ս կարող է հարստանալ ու խորանալ աղոթքի միջոցով:

Հինգշաբթի մայիսի 14

Այլ դասեր աղոթքի մասին

Իր աշակերտներին ներկայացնելով աղոթքի նմուշը՝ Հիսուսն անմիջապես, (Ղուկաս 11.5-13) նրանց դաս տվեց անդադար աղոթելու անհրաժեշտության մասին՝ կեսգիշերին եկած բարեկամի մասին առակի միջոցով: Ավելի ուշ, Իր ծառայության ավարտին մոտենալուն զուգընթաց, Նա Իր հետևորդներին հիշեցնում էր ապաշխարության և աղոթքով խոնարհվելու անհրաժեշտության մասին (Ղուկաս 18.9-14): Այս երկու առակներն էլ ցույց են տալիս, որ աղոթքը ոչ թե պարզապես կրոնական ծես է, այլ մշտական ընթացք, շփում և կյանք Հոր հետ:

Կարդացե՛ք Ղուկաս 11.5-8-ը: Հիսուսն այս առակը պատմեց՝ խրախուսելու համար հարատևությունն աղոթքում: Աղոթքը չպետք է վերածվի առօրեականության: Դրա փոխարեն աղոթքը պետք է լինի փոխհարաբերությունների՝ Աստծո հանդեպ բացարձակ, կայուն և անդադար վստահության հիմքը: Աղոթքը հոգու շնչառությունն է. առանց դրա մենք մեռած ենք հոգևորապես: Հիսուսը առակ է պատմում հարևանի մասին, ով հրաժարվում է հարևանաբար վարվել: Զուր են նրա ընկերոջ անդադար խնդրանքները հացի մասին, որի կարիքը շտապ առաջացել է կեսգիշերին: Բայց վերջիվերջո անգամ այդպիսի հարևանը տեղի է տալիս և պատասխանում է դռան անդադար գիշերային թակոցին: Որքա՜ն առավել լավ է տրամադրված Աստված նրա հանդեպ, ով հաստատակամ է աղոթքում: Այդպիսի հաստատակամությունը չի փոխի Աստծո մտադրությունները, այլ կամրապնդի մեր հավատը:

Կարդացե՛ք Ղուկաս 18.9-14-ը: Աղոթքի մասին ի՞նչ կարևոր դաս է բովանդակվում այս հատվածում: _____

_____

_____

Փարիսեցին ակնկալում էր, որ Աստված կգովաբանի իրեն այն բանի համար, ինչ ինքը արել է՝ իր արդար գործերի համար: Մաքսավորը իրեն հանձնեց Աստծո ողորմությանը և աղերսում էր Աստծո շնորհով ընդունված լինելու մասին: Աստված ընդունում է մեզ ոչ թե այն բանի հիման վրա, թե ով ենք մենք կամ ինչ ենք մենք, այլ միայն Իր շնորհի միջոցով: Միայն ապաշխարողները, հեզերն ու կոտրված հոգի ունեցողները կարող են ստանալ այդ շնորհը:

«Հեզությունն ու խոնարհությունը կդառնան հաջողության և հաղթանակի պայմանը: Փառքի պսակը սպասվում է նրանց, ովքեր խոնարհվում են խաչի պատվանդանի մոտ» (Է. Ուայթ, Մարգարեներ և թագավորներ, 590):

Այն մարդիկ, ովքեր չեն ճանաչում Տիրոջը, որպես կանոն, համեմատվում են նրանց հետ, ովքեր իբր թե ավելի վատն են, քան իրենք՝ իրենց համոզելու համար, որ իրենք այդքան էլ վատը չեն: Ինչո՞ւ սա լոկ հոգևոր խաբեության տարատեսակ է: Եթե ուրիշներն ավելի վատն են, քան մենք, ի՞նչ է փոխում դա:

Ուրբաթ մայիսի 15

Հետագա ուսումնասիրության համար

«Այն հոգին, որ ամեն օր օգնության, ամրապնդման և զորության խնդրանքով դիմում է Աստծուն, կհետևի ազնիվ մղումներին, հստակ պատկերացում կստանա ճշմարտության և պարտքի մասին, իր առջև վսեմ նպատակներ կդնի, մշտապես ճշմարտության ծարավ կլինի: Աստծո հետ անդադար կապի շնորհիվ մենք, շփվելով շրջապատողների հետ, կկարողանանք նրանց հետ կիսվել մեր սրտում բնակվող լույսով, խաղաղությամբ, հանգստով: Աղոթքի մեջ մեր կողմից ձեռք բերվող զորությունը, խոհուն և զգուշավոր կերպով վարվելու հաստատ ջանքերի հետ մեկտեղ, մեզ ընդունակ է դարձնում կատարելու մեր ամենօրյա պարտականությունները և բոլոր հանգամանքներով հանդերձ՝ մեր հոգին կպահի խաղաղության մեջ (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 85):

«Աստծուն մեր Հայրն անվանելով՝ մենք դրանով իսկ Նրա բոլոր զավակներին ընդունում ենք որպես մեր եղբայրներ: Մենք ամենքս մի մեծ մարդկային ընտանիքի անդամներն ենք: Մեր աղոթքներում մենք պետք է ներառենք խնդրանքները ինչպես մեզ համար, այնպես էլ մեր մերձավորների համար, որովհետև ոչ ոք չի կարող ճիշտ աղոթել՝ օրհնություններ խնդրելով միայն ինքն իր համար» (նույն տեղում, 105):

Հարցեր քննարկման համար

1. Հիսուսի և Սուրբ Հոգու հարաբերությունների թեման չի ավարտվում Ղուկասի Ավետարանում: Կարդալով Գործք առաքելոց գիրքը՝ Ղուկասի երկրորդ հատորը քրիստոնեական եկեղեցու պատմության մասին, անհնար է չնշել Սուրբ Հոգու նկատելի ազդեցությունը քրիստոնեական համայնքի, նրա առաքելության և նրա ծառայողների կյանքում: Իսկապես, միայն Ղուկասն է գրի առել հարությունից հետո Հիսուսի կողմից աշակերտներին տրված ցուցումը՝ մնալ Երուսաղեմում, մինչև որ նրանք օժտվեն «վերևից զորությամբ» (Ղուկաս 24.49)՝ նախքան մինչև աշխարհի ծայրերը խաչված ու հարություն առած Փրկչի մասին լուրը տանելը: Հետո Ղուկասը Գործք առաքելոց գիրքն սկսում է այն բանից, որ Հիսուսը կրկնում է Սուրբ Հոգու մասին խոստումը (Գործք առաքելոց 1.7,8) և նկարագրում է, թե այդ խոստումն ինչպես է կատարվում Պենտեկոստեի օրը (Գործք առաքելոց 2): Այս ամենը մեզ ի՞նչ է ասում եկեղեցու կյանքում Սուրբ Հոգու կարևորագույն դերի մասին:
2. Աղոթքի բուն գործողությունն ինչպե՞ս է հաստատում Աստծուց մեր կախումն ու Նրա կարիքը: Կարդացե՛ք Ղուկաս 18.9-ը: Ի՞նչ խորը հոգևոր խնդիր շոշափեց Հիսուսը՝ պատմելով հաջորդող առակը:

ԴԱՍ 8

ՄԱՅԻՍԻ 16-22

ՀԻՍՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Ղուկաս 15.4-7,11-32, Ղուկաս 16.19-31, 18.35-43, 19.1-10:

Հիշելու համարը.

«Որովհետև մարդի Որդին եկավ, որ որոնի և ապրեցնի կորածին» (Ղուկաս 19.10):

Եթե մեզ խնդրեին գրի առնել Հիսուսի ավետարանչական հայտարարությունը, մենք չէինք կարող ավելի լավ բան անել, քան Նրա սեփական խոսքերը կրկնելը. «Որոնել և ապրեցնել կորածին»:

Ի՞նչն էր կորած: Բուն մարդկությունը, որն օտարացել էր Աստծուց, պատկանում էր մահվանը, լցված էր վախով, հիասթափությամբ և հուսահատությամբ: Եթե ոչ ոք ոչինչ չաներ մեզ համար, մենք կկործանվեինք:

Բայց Հիսուսի շնորհիվ մենք ամենքս շատ պատճառներ ունենք հուսալու :

«Մեղանչելով՝ մարդն սկսեց խորթանալ Աստծուց. երկնքի և երկրի միջև կապն ընդհատվեց: Ձևավորված անդունդը բացառում էր շփման հնարավորությունը: Բայց Քրիստոսի շնորհիվ երկիրը կրկին միավորվեց երկնքի հետ: Իր արժանիքներով Քրիստոսը կամուրջ նետեց մեղքի անդունդի վրայով... Քրիստոսը ընկած մարդուն՝ իր թուլությամբ ու անօգնականությամբ, միավորում է անսահման զորության Աղբյուրի հետ» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 20):

Աստվածաշունչը՝ Ծննդոցից մինչև Հայտնություն, ընկած մարդկությանը որոնող Աստծո պատմությունն է: Ղուկասն այս ճշմարտությունը պատկերում է երեք կարևոր առակների միջոցով՝ կորած ոչխարի (Ղուկաս 15.4-7), կորած դրամի (8-10 տեքստեր) և կորած որդու (11-32 տեքստեր):

Կորած ոչխարն ու կորած դրամը

Կարդացե՛ք Ղուկաս 15.4-7-ը: Այս հատվածը ի՞նչ է ասում մեր հանդեպ Աստծո սիրո մասին: Ինչո՞ւ է այդքան կարևոր հասկանալը, որ հենց հովիվը ճանապարհվեց կորած ոչխարին փնտրելու: _____

_____

_____

Աշխարհում, որը կարող է մեր հանդեպ անտարբեր ու անհոգի թվալ, այս առակն ապշեցուցիչ ճշմարտություն է բացահայտում. Աստված այնքան ուժգին է սիրում մեզ, որ Ինքը գալիս է մեզ որոնելու, որպեսզի վերադարձնի Իր մոտ: Մենք հաճախ խոսում ենք Աստծուն որոնող մարդկանց մասին. իրականում Աստված է որոնում մեզ:

«Իրեն Քրիստոսին հանձնած հոգին Նրա աչքում առավել թանկարժեք է, քան ողջ աշխարհը: Փրկիչը Գողգոթայի տառապանքները կկրեր նաև մեկ մարդու համար, որպեսզի նրան փրկեր Իր արքայության համար: Նա երբեք չի լքի նրան, ում համար Ինքը մահացել է: Այնքան ժամանակ, քանի դեռ Իր հետևից գնացողները չլքեն Իրեն, Նա կպահպանի նրանց» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 483):

Կարդացե՛ք Ղուկաս 15.8,9-ը: Այս առակը հանդիպում է միայն Ղուկասի Ավետարանում: Կորած դրամը կարող էր երկու նշանակություններից մեկն ունենալ: Նախ, Հիսուսի ժամանակներում Հուդայում շատ աղքատներ կային, և ընտանիքների մեծ մասի համար մեկ դրամը հավասար էր ողջ օրվա աշխատանքի վարձատրությանը. այն հազիվ էր բավականացնում, որ ընտանիքը քաղցած չմնա: Երկրորդ, ի նշան ամուսնության, որոշ կանայք տասը դրամով զարդարված գըլխազարդ էին կրում՝ մի մեծ գումար, որ աղքատներն ստիպված էին լինում հավաքել երկար ժամանակ:

Բոլոր դեպքերում, կորուստը մեծ էր: Այդ պատճառով կինը, չափազանց տրտմած և վշտացած, վառում է լամպը (տանը, հնարավոր է, պատուհաններ չկային, կամ էլ միայն փոքրիկ պատուհան կար), վերցնում է ավելը և այդ դրամը գտնելու համար գլխիվայր շուռ է տալիս տունը:

«Դրամը, թեկուզ այն ընկած է փոշու և աղբի մեջ, շարունակում է մնալ արծաթե: Տերն այն որոնում է, որովհետև այն որոշակի արժեք ունի: Այդպես էլ յուրաքանչյուրը, որքան էլ ապականված լինի

մեղքից, մեծագույն արժեք է ներկայացնում Աստծո աչքում: Ինչպես դրամն է իր վրա կրում թագավորական իշխանության պատկերն ու դրա խորհրդանիշները, այնպես էլ մարդու մեջ նրա արարման ժամանակ դրոշմված են Աստծո պատկերն ու նմանությունը. ու թեև այժմ այդ կերպարը խամրել ու մշուշվել է մեղքի ազդեցությունից, նա դեռևս տեսանելի է յուրաքանչյուր մարդու մեջ» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 194):

Ժամանակակից գիտությունն ու փիլիսոփայությունը պնդում են, որ մենք ոչ այլ ինչ ենք, քան պատահականության զավակներ՝ անիմաստ տիեզերքում, որի համար բացարձակապես միևնույնն ենք թե՛ մենք, թե՛ մեր ճակատագիրը: Ի՞նչ բացարձակապես այլ տեսակետ է արտահայտված այս երկու առակներում:

Երկուշաբթի մայիսի 18

Կորած որդու առակը: Մաս 1

Մարդկության ողջ պատմության ամենագեղեցիկ պատմությունն անառակ որդու մասին առակն է՝ սիրո ամենաներող բնույթի մասին (Ղուկաս 15.11-32), որը գրի է առնված միայն Ղուկասի մոտ: Այն լիովին կարող է կոչվել առակ սիրող հոր և երկու կորած որդիների մասին: Որդիներից մեկը հոր սերը փոխանակեց հեռավոր երկրում շվայտ կյանքի հետ: Մյուս որդին գերադասեց մնալ տանը, բայց չգիտեր հայրական սիրո ողջ խորությունը կամ եղբայրական հարաբերությունների իմաստը: Առակը պայմանականորեն կարելի է բաժանել յոթ մասի. չորս մասը նվիրված է անառակ որդուն, երկուսը՝ Հորը, և մեկը՝ ավագ եղբորը:

1) «Տո՛ւր ինձ» (Ղուկաս 15.12): Ունեցվածքի իր մասը հորից պահանջելու՝ կրտսեր որդու որոշումը հանկարծակի, ակնթարթային պոռթկում չէր: Մեղքը հաճախ դրսևորվում է կյանքի մի երկարատև փուլից հետո՝ սխալ տեղաբաշխված նախապատվությունների պատճառով: Կրտսեր որդին, հավանաբար, ընկերներից լսել էր հեռավոր երկրների փայլի ու շքեղության մասին: Տանն ապրած կյանքը չափազանց միապաղաղ էր: Այո՛, այնտեղ կար սեր, բայց այն որոշակի սահմանափակումներ էր դնում. տարաշխարհիկ երկրները նրան հրապուրում էին առանց սահմանափակումների կյանքով: Հայրը չափազանց շատ էր խնամակալի վերաբերմունք ցուցաբերում, իսկ նրա

սերը չափից ավելի անձուկ էր դարձել: Որդին ազատություն էր ուզում, և այդպիսի անարգելք ազատության որոնումներում աճեց խռովության սերմը:

2) «Հեռու երկի՞ր» (Ղուկաս 15.13-16): Որդին կանխիկ պահանջեց իր ողջ բաժինը և ուղևորվեց «հեռու երկիր»: Հեռու երկիրը մի վայր է, որը գտնվում է հոր տանից հեռու: Սիրո հոգատար աչքերը, օրենքի պահպանիչ պատվարը, շնորհի ամենագո գիրքը խորթ են հեռու երկրում: Դա «անառակ» կյանքի հեռու երկիրն է (Ղուկաս 15.13): Հունարեն «անառակ» (*asotos*) բառը Նոր Կտակարանում հայտնվում է ևս երեք անգամ՝ որպես գոյական, որով մեկնաբանվում է հարբեցողությունը (Եփեսացիս 5.18), անհնազանդությունը (Տիտոս 1.6) և սանձարձակությունը, որը ներառում է «գիժությունները, ցանկությունները (հարաբերություններ տղամարդկանց միջև, հարաբերություններ անասունների հետ, անառակություն), գինեմոլությունը, արբեցությունները, կամ անօրեն կռապաշտությունները (Ա Պետրոս 4.3,4): Անաստված կյանքի նման ուրախությունները քայքայեցին նրա առողջությունը և վատնեցին հարստությունը, և շուտով նա մնաց առանց փողի, առանց ընկերների և առանց սննդի: Նրա փայլուն կյանքը նրան հասցրեց հասարակության հատակին: Աղքատանալով և հազիվ չմահանալով քաղցից՝ նա խոզապահի աշխատանք գտավ՝ սոսկալի ճակատագիր հրեայի համար:

3) «Ընդունիր ինձ» (Ղուկաս 15.17-19): Անգամ անառակը, միևնույնն է, մնում է որդի՝ ազատ կամքով և հետ վերադառնալու հնարավորությամբ: Այսպիսով, պատանին «ինքն իրեն եկավ» և հիշեց տուն կոչվող վայրը, այն մարդուն, ով իր հայրն էր, ազգակցական կապերը, որ կոչվում են սեր: Նա գնաց տուն՝ նախապատրաստելով իր խոսքը, որպեսզի աղաչի հորը. «Ինձ քո վարձկաններից մեկի պես արա»: Այսինքն՝ ինձ դարձրու ինչ ուզում ես, բայց ինձ թույլ տուր ապրել քո ուշադիր հայացքի ներքո և հո հոգատար սիրո մեջ: Չկա ավելի լավ տուն, քան հոր սիրտն է:

Աշխարհը կարող է շատ հրապուրիչ երևալ: Աշխարհում հատկապես ի՞նչն է առանձնահատուկ կերպով գայթակղում ձեզ այնպես, որ դուք մտածում եք. «Օհո՛, սա այնքան էլ վատ բան չէ», թեև հոգու խորքում գիտեք, որ դա վատ է:

Կորած որդու առակը: Մաս 2

4) Տունդարձը (Ղուկաս 15.17-20) նշանավորվեց ապաշխարությամբ: Ճանապարհորդությունն սկսվեց այն ժամանակ, երբ նա «ինքն իրեն եկավ»: Այն բանի գիտակցումը, թե որտեղ էր հայտնվել, նրա համեմատ, թե ինչպիսին էր իր հոր տունը, ստիպեց տղային «վեր կենալ» և «գնալ» հոր մոտ: Անառակ որդին տուն է վերադառնում նախապատրաստված խոսքով, որը բաղկացած էր չորս մասից և սահմանում էր ապաշխարության ճշմարիտ իմաստը:

Նախ, դա հորը որպես «հայր իմ» *ընդունելն* էր (տեքստ 18): Այժմ անառակ որդուն անհրաժեշտ է հենվել հոր սիրո և ներման վրա և վստահել նրան ճիշտ այնպես, ինչպես մենք պետք է սովորենք վստահել մեր երկնային Հոր սիրուն և վստահությանը:

Երկրորդ՝ *խոստովանությունը*. այն, ինչ գործել էր անառակ որդին, ոչ թե սխալ դատողություն էր, այլ մեղք՝ Աստծո և հոր դեմ (տեքստ 18):

Երրորդ՝ *ապաշխարությունն*. ես «այլևս արժանի չեմ» (տեքստ 19): Աստծո արժանիքի դիմաց սեփական անարժանությունն ընդունելը կարևոր նշանակություն ունի իսկական ապաշխարության համար:

Չորրորդ՝ *ներում*. «Վարձկաններից մեկի պես արա» (տեքստ 19): Աստծո կամքին հնազանդությունը ապաշխարության նպատակն է: Որդին տուն վերադարձավ:

5) Սպասող հայրը (Ղուկաս 15.20,21): Սպասումն ու արթնությունը, տրտմությունն ու հույսն սկսվեցին այն պահին, երբ մոլորյալ որդին դուրս եկավ տանից: Սպասումն ավարտվեց, երբ հայրը տեսավ նրան, «դեռ որ նա հեռու էր», իսկ հետո «գութը շարժվեց, և վազեց նրա վզովն ընկավ, և համբուրեց նրան» (տեքստ 20): Ուրիշ ոչ մի կերպար Աստծո բնավորությունը չի արտացոլում այնպես, ինչպես սպասող հոր կերպարը:

6) Ուրախությունն ընտանիքում (Ղուկաս 15.22-25): Հայրը գրկեց որդուն, նրան նոր հագուստ հագցրեց, նրա մատին մատանի դրեց և կոշիկներ հագցրեց ոտքերին, և հրամայեց խնջույք կազմակերպել: Ընտանիքում տոն էր: Եթե տանից հեռանալը խորհրդանշում էր մահը, ապա վերադարձը նման էր հարության ու արժանի էր ուրախության: Որդին իսկապես անառակ էր, բայց, այնուամենայնիվ, որդի էր, իսկ յուրաքանչյուր ապաշխարող որդու համար երկինքը ցնծում է (տեքստ 7):

7) Ավագ որդին (Ղուկաս 15.25-32): Կրտսեր որդին հոգևորապես մահացավ այն ժամանակ, երբ դուրս եկավ տանից, իսկ ավագը մահացավ, որովհետև, թեկուզև տանն էր մարմնով, նրա սիրտը հեռավոր երկրում էր: Այդպիսի սիրտը լի է բարկությամբ (տեքստ 28), տրտունջներով, ինքնագոհությամբ (տեքստը 29) և հրաժարվում է ընդունել եղբորը: Այն միայն կարող է ասել. «Այդ քո որդին, որ քո ստացվածքը... կերավ» (տեքստ 30): Հոր հանդեպ ավագ որդու վերաբերմունքը նման է փարիսեցիների վերաբերմունքին, ովքեր մեղադրում էին Հիսուսին. «Սա ընդունում է մեղավորներին և նրանց հետ ուտում» (տեքստ 2): Իր ավագ որդուն ուղղված հոր եզրափակիչ խոսքը արտացոլում է երկնքի վերաբերմունքը բոլոր ապաշխարող մեղավորների նկատմամբ. «Բայց ուրախ լինել և խնդալ պետք էր, որ այս քո եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (տեքստ 32):

Ձեզ պատկերացրեք ավագ եղբոր փոխարեն: Թեև նրա մտածողությունը սխալ է, նման իրավիճակում ինչո՞ւ են «բնական» և «տրամաբանական» նրա զգացմունքները: Այս պատմությունն ինչպե՞ս է ցույց տալիս, որ Աստծո լուրը դուրս է գալիս «բնականի» և «տրամաբանականի» սահմաններից:

Չորեքշաբթի **մայիսի 20**

Բաց թողնված հնարավորություններ

Թեև Հիսուսը եկավ որոնելու և գտնելու մեղքի մեջ կործանվողներին, Նա երբեք և ոչ ոքի չի ստիպում ընդունելու փրկությունը, որն առաջարկում է Ինքը: Փրկությունն անվճար և մատչելի է բոլորի համար, սակայն անհրաժեշտ է անվճար առաջարկն ընդունել հավատով, ինչը կբերի Աստծո կամքին համապատասխանող կյանքի: Մեր ունեցած միակ հնարավորությունը այն ժամանակն է, քանի դեռ ապրում ենք երկրում. ուրիշ ոչ մի հնարավորություն գոյություն չունի:

Կարդացե՛ք Ղուկաս 16.19-31-ը: Ո՞րն է այս առակի գլխավոր գաղափարը: _____

_____

_____

_____

_____

Այս առակը գրի է առնված միայն Ղուկասի Ավետարանում, և նա երկու խոշոր ճշմարտություն է սովորեցնում փրկության վերաբերյալ՝ «այսօրվա» կարևորությունը փրկության գործընթացում և մահից հետո փրկության մեկ այլ հնարավորության բացակայությունը:

Այսո՛ր է փրկության օրը: Առակը չի սովորեցնում, որ հարստությունն ինքնին չարիք է, իսկ աղքատության մեջ անխուսափելիորեն որևէ լավ բան կա: Այն սովորեցնում է, որ փրկությունն ստանալու և փրկված ապրելու հնարավորությունը չի կարելի բաց թողնել, քանի դեռ մենք այս երկրում ենք: Հարուստ, թե աղքատ, ուսյալ, թե անգրագետ, ուժեղ, թե թույլ՝ մենք այլ հնարավորություն չենք ունենա: Ամենքը փրկվում և դատվում են այսօր, Հիսուսի կոչին իրենց՝ այս պահի արձագանքի համաձայն: «Ահա հիմա է ընդունելի ժամանակ, ահա հիմա է փրկության օր» (Բ Կորնթացիս 6.2):

Առակը նաև սովորեցնում է, որ հավիտենական պարգևը ոչ մի ընդհանուր բան չունի նյութական բարիքների հետ: Հարուստը «շատ ազնիվ ծիրանի և բեհեզ էր հագնում և ամեն օր փառավոր զվարճություն էր անում» (Ղուկաս 16.19), բայց բաց էր թողել կյանքում գլխավորը՝ Աստծուն: Այնտեղ, ուր չեն ընդունում Աստծուն, չեն նկատում նաև մերձավորներին: Հարուստի մեղքը նրա հարստությունը չէր, այլ խոստովանելու անընդունակությունը, որ Աստծո ընտանիքն ավելի մեծ է, քան ինքը պատրաստ էր ընդունել:

Մահից հետո փրկություն ձեռք բերելու հնարավորություն չկա: Երկրորդ անխուսափելի ճշմարտությունը, որ այստեղ սովորեցնում է Հիսուսը, այն է, որ մահից հետո փրկության երկրորդ հնարավորություն չկա. «Եվ ինչպես մարդկանց համար սահմանված է մեկ անգամ մեռնել, և նրանից հետո դատաստանը» (Եբրայեցիս 9.27): Այս առակի ևս մեկ նպատակն է՝ ցույց տալ մարդկանց, որ մեզ բավական ապացույցներ տրվել են հիմա՝ այս կյանքում, որպեսզի գիտակցված ընտրություն կատարենք Աստծո դեմ կամ Նրա օգտին: Ցանկացած աստվածաբանություն, որ սովորեցնում է մահից հետո «երկրորդ հնարավորության» մասին, խաբեություն է:

Մենք սիրում ենք խոսել այն մասին, թե որքան շատ է սիրում Աստված մեզ, և այն ամենի մասին, ինչ Նա արել և անում է մեր փրկության համար: Ի՞նչ է ասում այս առակն՝ Աստծո սերն ու փրկության առաջարկը որպես պարտականություն ընդունելու վտանգի մասին:

«Կույր էի, իսկ հիմա տեսնում եմ»

Հիսուսի ավետարանչական հայտարարությունն այն մասին, որ Ինքը եկել է կորածին որոնելու և փրկելու համար, ծառայության ամբողջականության հաստատում է: Նա եկավ, որպեսզի կատարյալ դարձնի տղամարդկանց և կանանց, նրանց վերափոխի ֆիզիկական, մտավոր, հոգևոր և սոցիալական առումով: Ղուկասը երկու օրինակ է բերում, որոնք լուսաբանում են, թե ինչպես Հիսուսն ապաքինեց երկու կործանված մարդու՝ նրանց վերադարձնելով ամբողջականությունը: Մեկը կույր էր ֆիզիկապես, մյուսը՝ հոգևորապես. երկուսն էլ հալածված էին՝ մեկը չքավոր, մյուսը մաքսավոր: Բայց նրանք երկուսն էլ կային Քրիստոսի փրկարար առաքելության ծրագրում, և ոչ մեկը դուրս չմնաց Նրա սիրո կամ հասանելիության սահմաններից:

Կարդացե՛ք Ղուկաս 18.35-43-ը: Ի՞նչ է ասված այստեղ Աստծուց մեր լիակատար կախվածության մասին: Մեզանից ո՞վ ժամանակ առ ժամանակ չի աղաղակել. «Ողորմիր ինձ»: _____

_____

_____

Մարկոսը հաղորդում է այդ մարդու անունը՝ Բարտիմեոս (Մարկոս 10.46): Նա ողորմություն էր խնդրում Երիքովի դարպասներից դուրս: Լինելով չքավոր և սահմանափակ հնարավորությունների տեր մարդ և հասարակության վրա ոչ մի ազդեցություն չունենալով՝ նա հանկարծ հայտնվեց Աստծո հրաշքի գործողության շրջանում. Հիսուսը Նազարեթից անցնում էր մոտակայքով (Ղուկաս 18.37), և կույրի հավատը պոռթկաց աղաղակի մեջ. «Հիսու՛ս, որդի՛ Դավթի, ողորմիր ինձ» (տեքստ 38): Հավատին հարկավոր չեն ո՛չ ականջներ, ո՛չ ոտքեր, ո՛չ ձեռքեր. նրան հարկավոր է միայն սիրտ, որը միավորվում է աշխարհի Արարչի հետ:

Կարդացե՛ք Ղուկաս 19.1-10-ը: Ո՞վ էր «կույր» այս պատմության մեջ: _____

_____

_____

Միայն Ղուկասն է բերում Զաքեոսի պատմությունը՝ հալածվածների հետ Հիսուսի հանդիպումներից վերջինը: Կորածին որոնելու և փրկելու Քիստոսի առաքելությունը հրաշալի ձևով իրականացավ

Զաքեոսի հետ հանդիպման մեջ: Զաքեոսը Երիքովի մաքսավորների ղեկավարն էր, գլխավոր մեղավորը՝ տեղի փարիսեցիների կարծիքով, բայց գլխավոր մեղավորը գտնվեց և փրկվեց: Ինչպիսի՜ տարօրինակ վայրեր ու մեթոդներ էր օգտագործում Հիսուսը, որպեսզի կատարի Իր առաքելությունը: Թզենի... Հետաքրքրասեր տղամարդը ջանում է տեսնել, թե ով է Հիսուսը, և սիրող Տերը, Ով իրեն հրամայում է իջնել, որովհետև Նա արդեն ծրագրել է նրա հետ հանդիպումը ճաշի սեղանի շուրջ... Բայց, որ ավելի կարևոր է, Հիսուսը պետք է ինչ-որ բան աներ. «Այսօր փրկություն եղավ այս տանը» (Ղուկաս 19.9), բայց ոչ ավելի վաղ, քան Զաքեոսը ամեն բան կուղղի (տեքստ 8):

Հեշտ է տեսնել այլ մարդկանց սխալներն ու թերությունները, այնպես չէ՞: Բայց որքա՜ն հաճախ ենք մենք աչք փակում մեր սեփական թերությունների վրա: Ձեր կյանքի ո՞ր տեսանկյուններն է ձեզ անհրաժեշտ ընդունել և խոստովանել՝ հաղթանակ տոնելու համար այն բանի դեմ, ինչը դուք չափազանց երկար եք հետաձգել:

Ուրբաթ **մայիսի 22**

Հետագա ուսումնասիրության համար

«Կորած ոչխարի կերպարում Քրիստոսն ի նկատի ուներ ոչ միայն առանձին մեղավորի, այլ նաև աշխարհներից մեկը, որ սայթաքել էր և կործանվում էր մեղքի մեջ» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 190):

Մեկ մարդու արժեքի մասին. «Ո՞րն է մեկ մարդու գինը, ո՞վ կարող է որոշել ան: Այն իմանալու համար գնացե՛ք Գեթսեմանի և Քրիստոսի հետ մեկտեղ արթուն մնացեք տառապանքի այն բոլոր ժամերի ընթացքում, երբ Նրա ճակատի քրտինքը նման էր արյան կաթիլների: Նայեցե՛ք Փրկչին, Ով բարձրացված է խաչի վրա... Խաչի ստորոտին՝ հասկանալով, որ անգամ մեկ մեղավորի համար Քրիստոսը կտար Իր կյանքը, դուք կկարողանաք գիտակցել մեկ մարդու գինը» (նույն տեղում, 196):

Հարցեր քննարկման համար

1. Բոլոր կրոնները պատկերում են Աստծուն որոնող մարդուն, բայց քրիստոնեությունը ներկայացնում է Աստծուն, Ով որոնում է մարդուն. «Ո՞ւր ես, Ադամ» (տե՛ս Ծննդոց 3.9): «Կայեն, ո՞ւր է քո եղբայր Հաբելը» (տե՛ս Ծննդոց 4.9), «Ի՞նչ ունես այստեղ, Եղիա» (տե՛ս

Գ Թագավորաց 19.9), «Զաքե, շուտ արա իջիր» (տե՛ս Ղուկաս 19.5): Աստված ինչպե՞ս էր որոնում կամ որոնում է մեզ:

2. Եվս մեկ անգամ դիտարկե՛ք երեքշաբթի օրվա դասի վերջին հարցը: Ի՞նչ լուրջ սխալ էր գործել ավագ որդին: Ի՞նչ հոգևոր բացեր կարելի է ի հայտ բերել նրա աշխարհայացքում: Ինչո՞ւ մինչև նման տեսակետ իջնելն ավելի հեշտ է, քան մենք կարծում ենք: Տե՛ս նաև Մատթեոս 20.1-16-ը:
3. Հարուստի և Ղազարոսի մասին առակում Հիսուսն ասաց, որ անգամ եթե մեռելներից որևէ մեկը հարություն էլ առներ, կգտնվեին մարդիկ, ովքեր չէին հավատա: Այս առակն ինչպե՞ս է կանխատեսում որոշ մարդկանց արձագանքը Հիսուսի հարությանը, որին մինչ այսօր չեն հավատում՝ չնայած Նրա հարության ծանրակշիռ ապացույցներին:
4. Հիսուսի փրկարար ծառայության ամենատպավորիչ տեսանկյուններից մեկը հավասարությունն է, որով Նա վերաբերվում էր բոլոր մարդկանց, օրինակ՝ կույր աղքատին և Զաքեոսին, կամ Նիկոդեմոսին ու սամարացուն: Աշխարհում ամեն բանից առավել Խաչը ցույց է տալիս Աստծո առջև բոլոր մարդկանց հավասարությունը: Այս կարևորագույն ճշմարտությունն ինչպե՞ս պետք է ազդի մյուս մարդկանց հանդեպ մեր վերաբերմունքի վրա, անգամ նրանց, ում նկատմամբ նախկինում մենք թշնամանք ենք զգացել՝ նրանց քաղաքական, մշակութային, ազգային պատկանելության կամ ցանկացած այլ պատճառնով:
5. Անառակ որդու մասին պատմությունը համեմատե՛ք հարուստի և Ղազարոսի մասին առակի հետ: Ինչպե՞ս են դրանք լրացնում միմյանց:

ԴԱՍ 9

ՄԱՅԻՍԻ 23-29

ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ՀԻՍՈՒՍԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 8.22-25, 4.31-37, 6.20-49, 8.19-21, 10.25-37, Երկրորդ Օրինաց 6.5:

Հիշելու համարը.

«Եվ նրանք զարմանում էին նրա վարդապետության վրա, որ նրա խոսքը իշխանությունով էր» (Ղուկաս 4.32):

«Երբ Քրիստոսը երկիր եկավ, թվում է՝ մարդկությունը արագընթաց կերպով գլորվում էր դեպի ամենացածր մակարդակը: Հասարակության բարոյական հիմքերը խարխլված էին: Կյանքը դարձել էր կեղծ և սովորույթները՝ արհեստական... Գարշելով հորինվածքներից ու ստից և վանելով հոգևորի մասին մտքերը՝ մարդիկ դարձել էին անհավատությանն ու նյութապաշտությանը: Թողնելով հավիտենության մասին մտքերը՝ մարդիկ սկսեցին ապրել անցողիկով:

Չընդունելով Աստծուն՝ նրանք դադարեցին հաշվի նստել մեկը մյուսի հետ: Ճշմարտախոսությունը, պատիվը, ազնվությունը, վստահությունը, կարեկցանքը աստիճանաբար լքել էին երկիրը: Աննահանջ ագահությունն ու ամենակուլ պատվասիրությունը համընդհանուր անվստահություն էին ծնել: Պարտքի զգացումը, թուլության հանդեպ ներողամտությունը, մարդկային արժանապատվությունն ու մարդու իրավունքները ինչ-որ հեռավոր ու անիրական բան էին դարձել, ինչպես քաղցր անուրջները կամ առասպելները: Հասարակ ժողովրդին վերաբերվում էին ինչպես բեռնակիր կենդանիների կամ որպես աշխատանքի գործիքների՝ սեփական բարիքների ձեռքբերման միջոցների: Հարստությունն ու փառքը, ծուլությունն ու սեփական ցանկություններին հագուրդ տալը համարվում էին բարձրագույն բարիք: Ֆիզիկական անկումը, մտավոր մթագնումն ու հոգևոր սնանկությունն էին բնութագրում այդ դարաշրջանը» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 74, 75):

Այդ ֆոնի վրա մենք կարող ենք ավելի լավ հասկանալ, թե ինչու էր Հիսուսը սովորեցնում այն, ինչ սովորեցնում էր:

Հիսուսի իշխանությունը

Որպես բժիշկ և գիտնական՝ Ղուկասը գիտեր իշխանության դերի մասին: Նա գիտեր, թե հունական գիտության և կրթության մեջ ինչ իշխանությամբ է օժտված փիլիսոփայությունը: Նա գիտեր հռոմեական իրավունքի հեղինակությունը քաղաքացիական գործերում և պետական կարգում: Պողոսին իր ավետարանչական ճանապարհորդությունների ժամանակ ուղեկցելիս՝ նա տեսնում էր իշխանությունը, որով առաքյալը ղեկավարում էր հիմնադրված եկեղեցիները: Ղուկասը հասկանում էր, որ իշխանությունը հիմնվում է մարդու դիրքի կամ հիմնարկության դերի, պետության գործառույթների և իր հետևորդների հանդեպ ուսուցչի վերաբերմունքի վրա: Բոլոր մակարդակներում առնչվելով իշխանության բոլոր ձևերի հետ՝ Ղուկասն իր ընթերցողներին ցույց է տալիս, որ Հիսուսի և Նրա իշխանության մեջ ինչ-որ անգերազանցելի բան կար: Ծնված լինելով հյուսնի ընտանիքում, 30 տարի դաստիարակված լինելով գալիլեական ոչ մեծ Նազարեթ քաղաքում, ոչնչով աչքի չընկնելով ըստ աշխարհիկ չափանիշների՝ Հիսուսն Իր ուսմունքով և ծառայությամբ հակադրվում էր և՛ հռոմեական կառավարիչներին, և՛ հրեա աստվածաբաններին, և՛ ռաբբիներին, և՛ հասարակ մարդկանց, և՛ աշխարհիկ ու կրոնական իշխանություններին: Նրա համերկրացիները «զարմանում էին այն շնորհաց խոսքերի վրա, որ դուրս էին գալիս նրա բերանից» (Ղուկաս 4.22): Մի անգամ նա հույս պարգևեց նայինացի կնոջը՝ կյանքի կոչելով նրա մահացած որդուն (Ղուկաս 7.11-17): Ողջ քաղաքը պարուրվեց վախով, և ամենքն ասում էին. «Աստված իր ժողովրդին այցելել է» (տեքստ 16): Կյանքի և մահվան վրա Հիսուսի ունեցած իշխանությունը հուզեց ոչ միայն Նայինը, այլև ողջ «Հրեաստանը և բոլոր շրջակայքը» (տեքստեր 16, 17):

Կարդացե՛ք Ղուկաս 8.22-25, 4.31-37, 5.24-26, 7.49, 12.8: Այս տեքստերն ի՞նչ են ասում Հիսուսի իշխանության մասին: _____

_____

_____

Ղուկասը տեղին է համարել նշել, ոչ միայն իր բարեկամ Թեոփիլեի, այլ նաև հետագա բոլոր սերունդների համար, որ Հիսուսը, կատարելով ծառայությունը, հաստատեց Իր իշխանության եզակիությունը:

Որպես մարմնացած Աստված՝ Նա իսկապես ուներ իշխանություն, որով երբեք ոչ ոք օժտված չի եղել երկրի վրա:

Շատ մարդիկ ինչ-որ բան են անում հանուն Աստծո, ինչը, իհարկե, նրանց գործողություններին որոշակի իշխանություն է հաղորդում: Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ երբ ասում ենք. «Աստված հրամայել է ինձ անել այս բանը», դա իսկապես այդպես է: Շաբաթ օրը դասարանում քննարկե՛ք ձեր պատասխանները:

Երկուշաբթի **մայիսի 25**

Քրիստոսի մեծագույն քարոզը

Լեռան քարոզը (Մատթեոս 5-7) հաճախ անվանում են «քրիստոնեության էության» շարադրանք: Ղուկասը մեջբերումներ է անում Լեռան քարոզից Ղուկաս 6.20-49-ում և իր Ավետարանի մի քանի այլ հատվածներում: Քանի որ Ղուկասը քարոզը տեղավորում է աշակերտների «պաշտոնական» ընտրությունից (Ղուկաս 6.13) անմիջապես հետո, որոշ աստվածաբաններ այն անվանում են «Տասներկուսի հրահանգավորում ծառայության կանչվելուց հետո»:

Ինչպես երևում է Ղուկաս 6.20-49-ում, քարոզն սկսվում է չորս երանություններից և «վա՜յ ձեզ» չորս նախազգուշացումներից, և հետո շարադրվում են քրիստոնեական կյանքի այլ էական բնութագրեր:

Ուսումնասիրեք Ղուկաս 6.20-49-ի հետևյալ հատվածները և մտորեցե՛ք, թե որքանո՞վ է լիարժեք արտացոլում ձեր կյանքն այստեղ պատկերված սկզբունքները:

Քրիստոնեական երանությունները (Ղուկաս 6.20-22): Ինչպե՞ս են աղքատությունը, սովը, սուգն ու շրջապատողների ատելությունը բերում երանության:

Քրիստոնյայի ուրախության պատճառը մերժվելու պահին (Ղուկաս 6.22,23):

«Վա՜յ ձեզ» նախազգուշացումներ, որոնցից անհրաժեշտ է խուսափել (Ղուկաս 6.24-26): Կարդացե՛ք բոլոր չորս «վայ»-երը: Ինչո՞ւ պետք է քրիստոնյան պաշտպանվի դրանցից:

Քրիստոնեական կյանքի ոսկի կանոնը (Ղուկաս 6.27-31): Հիսուսի հրամաններից ոչ մեկն այնքան լայնորեն չի քննարկվում և այդքան դժվար կատարելի չի համարվում, որքան սիրո ոսկի կանոնը: Քրիստոնեական էթիկան հիմքում դրական է, ոչ թե բացասա-

կան: Այն բաղկացած է ոչ թե արգելքներից (ինչ հարկավոր չէ անել), այլ հրամաններից այն մասին, թե ինչ պետք է անել: «Չի կարելի ատել թշնամուն» ասելու փոխարեն՝ այն հռչակում է. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին»: «Ատամ ընդ ատաման» օրենքի փոխարեն՝ ոսկի կանոնը մաքուր առաքինություն է պահանջում («մյուսն այտն էլ դեմ արա»): Մահաթմա Գանդին ոսկի կանոնի հիման վրա բարու միջոցով չարին դիմակայելու մի ամբողջ քաղաքական փիլիսոփայություն մշակեց և օգտագործեց այդ սկզբունքը՝ անգլիական գաղութատիրությունից Հնդկաստանի անկախությանը հասնելու համար: Մարտին Լյութեր Քինգ-կրտսերը ոսկի կանոնի բարոյախոսությունն օգտագործում էր Միացյալ Նահանգներում խտրականությունը վերացնելու համար: Որտեղ իշխում է սերը, երանությունը գահ է բարձրանում:

Քրիստոնեական կյանքը (Ղուկաս 6.37-42): Ուշադրություն դարձրեք, թե որքան հաստատուն կերպով է Քրիստոսը խոսում ներման, ինքնակամ տալու, օրինակելի կյանքի և հանդուրժողականության մասին:

Քրիստոնեական պտուղ (Ղուկաս 6.43-45):

Քրիստոնեական շինարար (Ղուկաս 6.48,49):

Երեքշաբթի **մայիսի 26**

Նոր ընտանիք

Մեծ ուսուցիչները Հիսուսից առաջ և Նրանից հետո սովորեցնում էին միասնականության և սիրո մասին, բայց, որպես կանոն, խոսքը վերաբերում էր սիրուն՝ մեկ խմբի սահմաններում. ընտանիքը որոշվում էր բացառապես մեկ կաստային, ցեղին կամ կրոնին պատկանելությամբ, ինչպես նաև մաշկի միանման գույնի և լեզվի առկայությամբ: Բայց Հիսուսը խորտակեց մարդկանց բաժանող պատնեշները և ընտանիքի նոր սահմանում առաջարկեց, որը ոչ մի տարբերություն չի դնում մարդկանց սովորաբար բաժանող հանգամանքների միջև: Agape՝ չարժանացած, ոչ ոքի չբացառող, համընդհանուր և ինքնազոհ սիրո դրոշի ներքո Քրիստոսը նոր ընտանիք ստեղծեց: Այդ ընտանիքն արտացոլում է արարչագործության ժամանակ հաստատված սկզբնական, համընդհանուր և իդեալական հայեցակարգը, որ յուրաքանչյուր մարդ արարված է Աստծո պատկերով (Ծննդոց 1.26,27) և, հետևաբար, բոլոր մարդիկ հավասար են Նրա առջև:

Կարդացե՛ք Ղուկաս 8.19-21-ը: Ոչ մի կերպ չնվազեցնելով ծնողներին ու զավակներին կապող աղերսներն ու պարտավորությունները՝ Հիսուսը դուրս եկավ մարմնի ու արյան շրջանակներից և դրանք տեղավորեց Աստծո զոհասեղանի մոտ՝ որպես անդամներ «ամեն նահապետության երկնքում և երկրումս» (Եփեսացիս 3.15): Քրիստոսի աշակերտների ընտանիքի ներսում փոխհարաբերությունները պետք է լինեն մերձ ու սերտ՝ ոչ պակաս արյունակցական կապերից: Հիսուսի համար «ընտանիքի» իսկական նշանը ոչ թե ազգակցական կապն է, այլ Աստծո կամքի կատարումը:

Ի՞նչ տարբեր մարդկանց մասին են խոսում հետևյալ տեքստերը:
Քրիստոսն ի՞նչ արեց պատնեշների խորտակման համար, որոնք այդքան հաճախ բաժանում են մարդկանց:

Ղուկաս 5.27-32: _____

_____

Ղուկաս 7.1-10 _____

_____

Ղուկաս 14.15-24 _____

_____

Ղուկաս 17.11-19 _____

_____

Հիսուսի առաքելությունն ու ծառայությունը, Նրա ամենաներող սիրտն ու համընդգրկուն շնորհը չէին բացառում ոչ ոքի, այլ, ընդհակառակը, ընդունում էին բոլորին, ովքեր ընդունում էին Նրա կոչը: Նրա հավիտենական սերը Իրեն թույլ էր տալիս կապի մեջ լինել հասարակության բոլոր խավերի հետ:

Մենք՝ որպես եկեղեցի, ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ավելի լավ հետևենք այս կարևորագույն սկզբունքին:

Չորեքշաբթի մայիսի 27

Սիրո սահմանումը. առակ բարի սամարացու մասին: Մաս 1

Ավետարանների չորս հեղինակներից միայն Ղուկասն է գրի առել անառակ որդու և բարի սամարացու մասին առակները (Ղուկաս 10.25-37): Առաջինը նկարագրում է սիրո ուղղահայաց չափումը, Հոր անհավատալի սերը մեղավորների հանդեպ, երկրորդը ցույց է

տալիս հորիզոնական չափումը՝ այն սերը, որը պետք է բնորոշ լինի մարդկային կյանքին՝ հրաժարվելով ճանաչել մարդկանց միջև որևէ պատնեշ, այլ ապրելով համաձայն Հիսուսի տված «մերձավորի» սահմանման. բոլոր մարդիկ Աստծո որդիներ են և արժանի են, որպեսզի նրանց սիրեն և վերաբերվեն որպես հավասարի:

Կարդացե՛ք Ղուկաս 10.25-28-ը և խորհեցե՛ք երկու կարևորագույն հարցերի մասին, որոնք բարձրացվում են այստեղ: Յուրաքանչյուր հարց ինչպե՞ս է կապված քրիստոնեական հավատի և քրիստոնեական կյանքի հիմնական սկզբունքների հետ:

«Վարդապե՛տ, ի՞նչ գործեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ» (տեքստ 25):

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ այս օրինամոլը հավիտենական կյանքը ժառանգելու միջոց էր որոնում: Մեղքից փրկվելը և Աստծո արքայություն մտնելը իսկապես մարդու բոլոր ձգտումներից ազնվագույնն է, բայց օրինամոլը, շատ ուրիշների նման, մեծացել էր այն կեղծ պատկերացմամբ, որ հավիտենական կյանքը կարելի է վաստակել բարի գործերով: Ակնհայտ է, որ նա չգիտեր, որ «մեղքի վարձքը մահն է, բայց Աստծո շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռոմեացիս 6.23):

«Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես կարդում» (տեքստ 26)

Հիսուսի ժամանակներում սովորություն կար, որ ականավոր հրեաները, ինչպիսին նաև այս օրինամոլն էր, դաստակներին ֆիլակտերիաներ էին կրում: Դա ոչ մեծ կաշվե պարկ էր կամ տուփ, որտեղ Թորայի որոշակի հատվածներ կային, այդ թվում նաև այն տեքստը, որը կպատասխաներ Հիսուսի հարցին: Հիսուսը օրինամոլի ուշադրությունը սևեռեց Երկրորդ Օրինաց (Երկրորդ Օրինաց 6.5) և Ղևտացոց (Ղևտացոց 19.18) գրքերին, հնարավոր է, հենց այն հատվածներին, որ նա կրում էր իր ֆիլակտերիայում: Նրա դաստակի վրա, բայց ոչ սրտում էր իր հարցի պատասխանը: Հիսուսը օրինամոլին ուղղորդեց դեպի մեծ ճշմարտությունը. հավիտենական կյանքը ոչ թե կանոնները պահելու, այլ Աստծուն, ինչպես նաև Աստծո ողջ արարչագործությունը՝ «մերձավորին», եթե ավելի ստույգ արտահայտվենք, բացարձակապես ու անվերապահորեն սիրելու կոչի մեջ է: Սակայն անգիտության կամ մեծամտության պատճառով օրինամոլը շարունակում էր հարցեր տալ. «Իսկ ո՞վ է իմ մերձավորը»:

Ի՞նչ արտաքին վկայություններ են ցույց տալիս, որ դուք իսկապես փրկված եք շնորհով: Այսինքն՝ ձեր կյանքում ի՞նչն է վկայում այն մասին, որ դուք արդարացված եք հավատով:

Հինգշաբթի մայիսի 28

Սիրո սահմանումը. առակ բարի սամարացու մասին: Մաս 2

«Իսկ նա, որովհետև կամենում էր իր անձն արդարացնել, Հիսուսին ասաց. Եվ իմ ընկերն ո՞վ է» (Ղուկաս 10.29):

Լինելով հրեական օրենքի գիտակ՝ օրինամոլը պետք է իմանար այս հարցի պատասխանը: Ղևտացոց 19.18-ը, որտեղ գրված է երկրորդ մեծագույն պատվիրանը, «մերձավորներին» սահմանում է որպես «քո ժողովրդի որդիները»: Այդ պատճառով, օրինամոլին անմիջապես իր հարցի պատասխանը տալու կամ նրա և այդ զրույցին հետևող բոլոր մյուսների հետ աստվածաբանական բանավեճի մեջ մտնելու փոխարեն, Հիսուսը օրինամոլին և Իր ունկնդիրներին բարձրացնում է առավել բարձր մակարդակի:

Կարդացե՛ք Ղուկաս 10.30-37-ը: Որո՞նք են այս պատմության հիմնարար պահերը, և դրանք ի՞նչ են ասում այն մասին, թե ինչպես պետք է մենք վերաբերվենք այլ մարդկանց:

_____

_____

Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպես Հիսուսն ասաց, որ «մի մարդ» (տեքստ 30) ավազակների ձեռքն ընկավ: Ինչո՞ւ Հիսուսը չնշեց մարդու ծագումը կամ սոցիալական դիրքը: Հաշվի առնելով այս պատմության ողջ իմաստը՝ ինչո՞ւ է դա կարևոր:

Քահանան ու ղևտացին տեսան վիրավորին, բայց կողքով անցան: Ինչպիսին էլ լինեն պատճառները, որոնք նրանց ստիպեցին չօգնել նրան, մեր հարցը հետևյալն է. Ո՞րն է ճշմարիտ կրոնը, և ինչպե՞ս պետք է դրսևորվի այն: Երկրորդ Օրինաց 10.12,13, Միքիա 6.8, Հակոբոս 1.27:

Հրեաների և սամարացիների փոխհարաբերությունները բնութագրվում էին ատելությամբ և թշնամանքով, և Հիսուսի ժամանակներում նրանց միջև թշնամանքը միայն սրվում էր (Ղուկաս 9.51-54, Հովհաննես 4.9): Այդ պատճառով, սամարացուն դարձնելով իր

պատմության «գլխավոր հերոսը», Հիսուսը հարցի էությունը, տվյալ դեպքում՝ հրեաների համար, շարադրում է էլ ավելի համոզիչ կերպով:

Այն, ինչ արեց սամարացին, Հիսուսը նկարագրեց ամենայն մանրամասնությամբ. նա գթաց, մոտեցավ վիրավորին, վերքերը լվաց գինով, փափկեցրեց յուղով, վիրակապեց, նրան փոխադրեց հյուրանոց, վճարեց այնտեղ նրա գտնվելու ժամանակի համար և խոստացավ վճարել լրացուցիչ ծախսերի համար: Սամարացու այս բոլոր գործողությունները բնորոշում են իսկական սիրո անսահմանությունը: Այն փաստը, որ նա այդ ամենն արեց մի մարդու համար, ով, հնարավոր է, հրեա էր, ցույց է տալիս, որ իսկական սերը սահմաններ չի ճանաչում:

Քահանան ու ղևտացին հարց էին տալիս իրենց. ի՞նչ կլինի մեզ հետ, եթե մենք կանգ առնենք և օգնենք այս մարդուն: Սամարացին հարցրեց. ի՞նչ կլինի այդ մարդու հետ, եթե ես չօգնեմ նրան: Ո՞րն է այս երկու հարցերի տարբերությունը:

Ուրբաթ մայիսի 29

Հեպագա ուսումնասիրության համար

«Իր կյանքով ու քարոզներով Քրիստոսը մեզ՝ Աստծուց բխող անշահախնդիր ծառայության կատարյալ օրինակ է թողել: Աստված գոյություն ունի ոչ Իր համար: Արարելով աշխարհը և պահպանելով կենդանությունը՝ Նա անդադար ծառայում է ուրիշներին: «Նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է բերում արդարների և անիրավների վրա» (Մատթեոս 5.45): Եվ այս կատարյալ ծառայությունն Աստված հանձնարարել է Իր Որդուն: Հիսուսը պետք է ցույց տար ողջ մարդկությանը, թե ինչ է նշանակում ծառայել մարդկանց: Հիսուսի ողջ երկրային կյանքն անցավ ծառայության օրենքին համապատասխան: Նա ծառայում էր բոլորին և օգնում էր բոլորին, քանի որ ապրում էր ըստ Աստծո Օրենքի, և Իր օրինակով ցույց տվեց, թե ինչպես պետք է մենք հնազանդվենք դրան» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 649):

Բարի սամարացու առակը մտացածին պատմություն չէ: Այս դրվագը հորինված չէր. Հիսուսն այն վերցրել էր կյանքից: Քահանան ու ղևտացին, ովքեր շրջանցեցին տուժածին, գտնվում էին Քրիստոսի ունկնդիրների մեջ» (նույն տեղում, 499):

Հարցեր քննարկման համար

1. Քննարկե՛ք միաշաբթի օրվա դասի վերջի կարևոր հարցերը: Մեզանից ո՞վ չի լսել, թե ինչպես են մարդիկ խոսում, որ իրենք ինչ-որ բան արել են, որովհետև Աստված է իրենց հրամայել այդպես վարվել: Ի՞նչ ձևով է Աստված մեզ հայտնում Իր կամքը: Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ չենք քողարկվում Աստծո հեղինակությամբ՝ պարզապես մեր արարքներն արդարացնելու համար:
2. Ղուկաս 6.24-26-ում ևս մեկ անգամ կարդացե՛ք չորս «վա՜յ ձեզ» արտահայտությունները: Ինչպե՞ս հասկանալ այն, ինչ Հիսուսն ասում է այստեղ: Իրականում ինչի՞ մասին է նախազգուշացնում Նա մեզ:
3. Խորհեցե՛ք իշխանության մասին ընդհանուր առմամբ: Ի՞նչ է իշխանությունը: Իշխանության ի՞նչ տեսակներ գոյություն ունեն: Իշխանության ո՞ր տեսակներն են գերիշխում: Մենք ինչպե՞ս պետք է վերաբերվենք մեր կյանքում իշխանության զանազան տեսակներին: Ի՞նչ անել, եթե այն իշխանությունները, որոնց մենք ստիպված ենք հնազանդվել, հակասում են միմյանց:

ԴԱՍ 10

ՄԱՅԻՍԻ 30-ՀՈՒՆԻՍԻ 5

ՀԻՍՈՒՍԻՆ ՀԵՏԵՎԵԼԸ ԱՄԵՆՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Ղուկաս 11.37-54, 12.4-21,35-53, Ամովս 6.1, Ղուկաս 8.4-15, 22.24-27:

Հիշելու համարը.
«Եվ առաքյալներն ասացին Տիրոջը. Մեր հավատն ավելացրու» (Ղուկաս 17.5):

Թեև Հիսուսը ականավոր ուսուցիչ էր, Նա աստվածաբանական կամ փիլիսոփայական դպրոց չստեղծեց: Նրա նպատակը «կորածին որոնել և ապրեցնելն» էր (Ղուկաս 19.10): Նա եկավ բացահայտելու Աստծո բնավորությունը, հայտնություն, որի գագաթնակետը Խաչն էր, որտեղ Նա մարդկությանն ու չմեղանչած աշխարհներին ոչ միայն ցույց տվեց, թե իրականում ինչպիսին է Աստված, այլ նաև ընդունեց մեղքի պատիժը, որպեսզի մարդիկ, չնայած իրենց մեղսավոր էությանը, կարողանան փրկագնվել:

Բացի դրանից, Նա ստեղծեց փրկագնված հանրույթ: Այդ նրանք էին, ովքեր, փրկված լինելով Նրա մահվամբ, ընտրել են օրինակ լինելու Նրա կյանքի և ուսմունքի:

Այդ փրկագնված հանրույթի մասը լինելու կոչը ոչ թե կյանքում գերադասելի դիրք գրավելու, այլ Կանչողին՝ հենց Քրիստոսին բացարձակ հավատարմության կոչ է: Այն, ինչ ասում է Նա, կյանքի օրենք է դառնում աշակերտի համար: Այն, ինչ ցանկանում է, դառնում է աշակերտի միակ նպատակը: Արտաքին բարիքի ոչ մի քանակություն կամ դավանաբանական կատարելություն չի կարող փոխարինել Քրիստոսին ու Նրա կամքին հավատարիմ լինելուն:

Աշակերտությունը, որ հնարավոր է միայն մեր մեջ Քրիստոսի բնակվելու դեպքում, որոշակի պարտադիր պահանջներ է առաջ քաշում: Չի կարող լինել որևէ մրցակցություն, և թույլատրելի չէ որևէ փոխարինում:

Զգուշացե՛ք փարիսեցիությունից

Ավետարաններում ավելի քան 80 անգամ հիշտակվում է փարիսեցիների մասին, ընդ որում՝ բոլոր այդ տեքստերի ավելի քան մեկ քառորդը գտնվում է Ղուկասի Ավետարանում: Փարիսեցիներին բնորոշ էր դավանաբանական պահպանողականությունը, ի տարբերություն սադուկեցիների, ովքեր հայտնի էին իրենց ազատամիտ գաղափարներով: Փարիսեցիները, որպես կանոն, օրինամոլներ էին, ովքեր, հայտարարելով շնորհի հանդեպ իրենց հավատի մասին, ուսուցանում էին օրենքին հետևելու վրա հիմնված փրկություն:

Կարդացե՛ք Ղուկաս 11.37-54-ը: Ինչի՞ մասին է զգուշացնում Հիսուսը, և ինչո՞ւ Նրա խոսքերը ոչ պակաս արդիական են այսօր: Մենք ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ չենք անում այն, ինչից նախազգուշացնում էր Հիսուսը: ___

___

___

___

«Վա՜յ ձեզ» նախազգուշացումների (Ղուկաս 11.42-54) ակնարկը՝ հասցեագրված փարիսեցիներին և դպիրներին, ցույց է տալիս, թե որքանով է իսկական կրոնի կոչը վերաբերում յուրաքանչյուր սերնդի, այդ թվում նաև մեր սերնդին:

Օրինակ՝ տասանորդը, լինելով երախտագիտություն Աստծո հոգատարության համար, ոչ մի կերպ չի կարող փոխարինել սիրո և արդարության հիմնական պահանջմունքներին մարդկային փոխհարաբերությունների մեջ (տեքստ 42): Կամ էլ մարդիկ, ովքեր հոգ չեն տանում «Աստծո իրավունքի և սիրո» մասին, սիրում են «ժողովարանների մեջ առաջին աթոռները» (տեքստ 42,43): Ահա թե ինչ է նշանակում ճշմարիտ հավատի էությունն անտեսելը:

Հիսուսը նաև զգուշացնում էր, որ նրանք, ովքեր իսկական կրոնը հանգեցնում են միայն արտաքին ծեսերին, անմաքուր են՝ նման նրանց, ովքեր դիպչում են մահացած մարմնին (Ղուկաս 11.44, տե՛ս նաև Թվոց 19.16-ը): Որքա՜ն հեշտ է առօրեականը շփոթել մի բանի հետ, ինչ սուրբ է Աստծո աչքում:

Բացի դրանից, Հիսուսը «վա՜յ ձեզ» ասաց նաև օրենքի այն գիտակների հասցեին, ովքեր օգտագործել էին իրենց կրթությունն ու փորձը, որպեսզի անտանելի կրոնական բեռներ դնեն ուրիշների վրա,

իսկ իրենք մատով անգամ չէին դիպչում դրանց (տե՛ս Ղուկաս 11.46-ը):

Միևնույն ժամանակ փարիսեցիները պատվում էին արդեն մահացած մարգարեներին և, ընդ որում, ընդդիմանում էին կենդանի մարգարեներին: Անգամ այն պահին, երբ Հիսուսն ասում էր այդ խոսքերը, ոմանք մտմտում էին սպանել Աստծո Որդուն: Կարևոր է ոչ թե պարզապես մարգարեներին պատվելը, այլ սիրո, ողորմության և դատաստանի՝ նրանց մարգարեական ուղերձին ականջալուր լինելը:

Վերջին «վա՜յ ձեզ»-ը հիրավի զարհուրելի է: Այն մարդիկ, ում վստահված էր Աստծո արքայության բանալին, չարդարացրեցին այդ վստահությունը: Այդ բանալին իմաստությամբ օգտագործելու և Աստծո ժողովրդի արքայություն մտնելուն նպաստելու փոխարեն՝ նրանց կողպեցին մուտքը և դեն նետեցին բանալին:

Երկուշաբթի հունիսի 1

«Վախեցե՛ք Աստծուց»

«Վախեցե՛ք Աստծուց և փառք տվեք նրան» (Հայտնություն 14.7). սա առաջինն է երեք հրեշտակների պատգամներից, որոնք այդքան կարևոր տեղ են զբաղեցնում Յոթերորդ օրվա ադվենտիստների կյանքում և ուսմունքի մեջ: Աստծուց վախենալ՝ չի նշանակում վախից դողալ Նրա առջև, ինչպես ենթադրում են շատերը: Դա նշանակում է հասկանալ, թե ով է Աստված, և որոնք են մեր հանդեպ Նրա իրավունքները: Դա հավատի գործողություն է, որը ներառում է Նրա նկատմամբ բացարձակ նվիրվածությունը: Աստված դառնում է միակը, Ով որոշում և դատում է մեր կյանքը՝ մեր մտքերը, գործողությունները, փոխհարաբերություններն ու հավիտենական ճակատագիրը: Այս տեսակի «վախի» վրա հիմնված աշակերտությունը անսասան հիմք ունի:

Կարդացե՛ք Ղուկաս 12.4-12-ը: Հիսուսն այստեղ ի՞նչ է ասում վախի մասին: _____

Այս հատվածը մեզ ցույց է տալիս, թե ումից պետք է վախենալ, ումից՝ ոչ: Մենք չպետք է վախենանք այն ուժերից, որոնք կարող են ազդել միայն մեր մարմնի վրա՝ ժամանակակից աշխարհում: Դրա փոխարեն մենք պետք է վախենանք Աստծուց և հնազանդվենք Նրան, որովհետև Նրա ձեռքերում է մեր հավիտենական ճակատագիրը: Բայց մեր Աստված Աստված է, Ով մոռացության չի մատնում ոչ մի

փոքրիկ թռչնակի (Ղուկաս 12.6), և Ով գիտի մեր մազերի քանակը (համար 7), սիրող և հոգատար Աստված, հետևաբար մեզանից յուրաքանչյուրն անսահման թանկ է Նրա աչքում: Եթե մենք իսկապես հավատայինք դրան, որքա՜ն վախեր կանհետանային մեր կյանքից:

Կարդացե՛ք Ղուկաս 12.13-21-ը: Այս տեքստերում ինչի՞ մասին է նախազգուշացնում Հիսուսը: _____

_____

Թեև Հիսուսը հրաժարվեց միջամտել ունեցվածքի բաժանման պատճառով թշնամացած երկու եղբայրների վեճին, Նա ընդգծեց տասներորդ պատվիրանի այժմեականությունը (Ելից 20.17), որը նախազգուշացնում է ագահության արատից, և մատնացույց արեց բոլոր ժամանակների կարևորագույն ճշմարտությունը. կյանքը բաղկացած չէ նյութական առարկաներից (Ղուկաս 12.15): Անմիտ հարուստը ապրում էր փոքրիկ մի աշխարհով, որը սահմանափակվում էր հենց իրենով: Նրա համար ոչ մի այլ բան գոյություն չուներ: Որքա՜ն զգույշ պետք է լինենք մենք, որ չընկնենք այս թակարդը. սա հատկապես կարևոր է նրանց համար, ովքեր ունեն օրհնություններ՝ ի դեմս նյութական բարիքների:

Թեև մենք ամենքս վայելում ենք նյութական բարիքները, խորհեցե՛ք, թե որքան քիչ իսկական բավականություն կարող են տալ դրանք, հատկապես հավիտենության լույսի ներքո: Այդ դեպքում ինչո՞ւ է այդքան հեշտ սխալը գործելը, որի մասին նախազգուշացնում էր Հիսուսը Ղուկաս 12.16-21-ում:

Երեքշաբթի հունիսի 2

Պատրա՛ստ և զգո՛ն եղեք

«Զգոնություն և հավատարմություն՝ ահա՛ այն հատկանիշները, որ ցանկացած դարաշրջանում անհրաժեշտ են Քրիստոսի հետևորդներին: Բայց այժմ, երբ մենք կանգնած ենք հավիտենական աշխարհի հենց նախաշեմին և այսպիսի ճշմարտություններ, այսքան մեծ լույս ու այսքան կարևոր գործ ունենք, մենք պետք է կրկնապատկենք մեր ջանքերը» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 5, էջ 460,461):

Կարդացե՛ք Ղուկաս 12.35-53-ը և ընդհանրացրեք այն, ինչ նշանակում են այդ տեքստերը անձամբ ձեզ համար,

հատկապես եթե դուք արդեն երկար ժամանակ սպասում եք Հիսուսի երկրորդ գալստյանը: _____

_____

_____

_____

Քրիստոնյաները չեն կարող իրենց թույլ տալ՝ թույլ կամ ընկճված լինելու: Անհայտ մի ժամի Նրա անվիճելի վերադարձը մեզ պետք է դրդի՝ մեր հանդերձները պահելու գոտևորված, իսկ ճրագները՝ վառ: Վախճանաբանական հույսը պետք է մեր կյանքի ու աշխատանքի, մեր պատրաստակամության և հավատարմության շարժիչ ուժը լինի: Հենց Նրա կամքը կատարելու այդ հավատարմությունը և Նրան դիմավորելու պատրաստակամությունն է բարի ծառային տարբերում չարից:

Հավատարմության առումով ցանկացած անփութություն՝ «իմ տերն ուշանում է» (Ղուկաս 12.45) պատրվակի ներքո, նշանակում է, որ մարդն ընկնում է Աստծո խստագույն դատաստանի տակ (45-48 տեքստեր): Որքան ավելի մեծ է առավելությունը, այնքան ավելի բարձր է պատասխանատվությունը, հետևաբար՝ ում շատ է տրված, նրանցից ակնկալվում է շատ (տեքստ 48):

Հին մարգարեի խոսքերը՝ «Վա՜յ Սիոնում ապահով նստողներին» (Ամոս 6.1), արտացոլված են Քրիստոսի նախազգուշացման մեջ այն մասին, որ քրիստոնեական աշակերտությունը ծուլության վիճակ չէ: Պողոսը բացատրում է, որ քրիստոնեական կյանքը հոգևոր պատերազմ է (Եփեսացիս 6.12): Գլխավոր կիզակետն այն է, որ յուրաքանչյուր քրիստոնյա մասնակցում է Քրիստոսի և սատանայի միջև տիեզերական հակամարտությանը, իսկ խաչը հստակ սահմանագիծ է անցկացնում նրանց միջև: Միայն խաչված Քրիստոսի հանդեպ մշտական հավատի շնորհիվ կարելի է վերջնական հաղթանակ տանել:

«Այն ամենին, որ շատ տրվեց, նրանից շատ կուզվի, և ում որ ավելի շատ պահ տրվեց, նրանից էլ ավելին կպահանջեն» (Ղուկաս 12.48): Ի՞նչ պետք է նշանակի այս տեքստը մեզ համար՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ:

Չորեքշաբթի **հունիսի 3**

Արգասավոր վկաներ լինել

Հայրը, Որդին և Սուրբ Հոգին Իրենց հավերժական խորհրդում «աշխարհի ստեղծվելուց առաջ» (Եփեսացիս 1.4) կազմեցին փրկու-

թյան ծրագիրը: Այսինքն՝ Աստված փրկության պատրաստի ծրագիր ուներ դեռևս այս աշխարհը ստեղծվելուց առաջ և, իհարկե, նախքան այնտեղ մեղքի ի հայտ գալը: Ծրագիրը հիմնված է խաչի վրա, և խաչի մասին ավետիսը պետք է պատմվի աշխարհի բոլոր մարդկանց: Այս վկայության պատասխանատվությունն ընկած է յուրաքանչյուր քրիստոնյայի վրա:

«Եվ իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ մինչև երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8): Հիսուսի վերջին հրահանգն ընդգծում է այն կարևոր դերը, որ Տերը հատկացնում է Իր հետևորդների քարոզչական գործունեությանը:

Քրիստոնյա վկաներն ի՞նչ դասեր պետք է քաղեն սերմնացանի և հողի առակից: Ղուկաս 8.4-15: _____

_____

_____

Ե՞րբ և ի՞նչ պարգև է սպասվում նրանց, ովքեր վկայում են: Ղուկաս 18.24-30: _____

_____

_____

Տասը մնասների առակը (Ղուկաս 19.11-27) ի՞նչ է ասում վկայության մեջ հավատարմության և պատասխանատվության մասին: _____

_____

_____

Այս տեքստերից յուրաքանչյուրի, ինչպես նաև ուրիշների մեջ, նկարագրված են այն վտանգները, պարտականություններն ու պարգևները, որ սպասվում են նրանց, ովքեր վկայում են և հավատում: Մեզ տրված է հանդիսավոր խոստում, բայց, հաշվի առնելով, թե որքան ենք մենք ստացել, որքա՜ն քիչ բան է իրականում մեզանից ակնկալվում:

Հինգշաբթի **հունիսի 4**

Լինել առաջնորդ-ծառա

Կարդացե՛ք Ղուկաս 22.24-27-ը: Անգամ խորհրդավոր ընթրիքի ժամանակ աշակերտները հարցրեցին այն մասին, թե իրենցից ով է ավելի մեծ լինելու Աստծո արքայության մեջ: Հիսուսն ինչպե՞ս է արձագանքում նրանց

վեճին, և ինչո՞ւ կարելի է Նրա պատասխանը համարել հեղափոխական: _____

_____

_____

Հիսուսի պատասխանը նմանը չունի առաջնորդության պատմության մեջ: Փարավոնը, Նաբուգոդոնոսորը, Ալեքսանդր Մեծը, Հուլիոս Կեսարը, Նապոլեոնն ու Չինգիզխանը՝ ամենքը առաջնորդությունը դիտարկում էին ուժի և ուրիշների հանդեպ իշխանության տեսանկյունից: Հենց այդպես է աշխարհը միշտ դիտարկել իշխանության հասկացությունը:

«Բայց դուք ոչ այնպես. այլ ձեր միջի մեծը թող փոքրագույնի պես լինի, և առաջնորդը՝ ծառայողի պես» (Ղուկաս 22.26): Այս խոսքերով տիեզերքի Տերը առաջնորդության նոր սահանում ներմուծեց. «Ձեզանից ով որ կամենա մեծ լինել, թող ձեզ ծառա լինի: Եվ ձեզանից ով որ կամենա առաջին լինել, թող ձեզ ծառա լինի: Ինչպես մարդի Որդին չեկավ, որ իրեն ծառայեն, այլ որ ինքը ծառայի, և շատերի փոխանակ իր անձը փրկանք տա» (Մատթեոս 20.26-28):

Այդպիսով, ծառայությունն ու անձնազոհությունը անվանելով Իր կյանքի ու Իր առաջնորդության հիմնական սկզբունքներ՝ Հիսուսը ներկայացրեց մարդկային փոխհարաբերությունների նոր դինամիկան. բավարարվածության զգացումը գալիս է ոչ թե իշխանությունից, այլ ծառայությունից. առաջնորդությունն իր լիազորություններն ստանում է ոչ թե հասարակական դիրքից, այլ ծառայությունից. վերափոխումն սկսվում է ոչ թե գահից, այլ խաչից: Ապրել՝ նշանակում է մահանալ (Հովհաննես 12.24):

Ղուկաս 9.46-48-ում նկարագրված է, թե Հիսուսի աշակերտների միջև ինչպես վեճ ծագեց այն մասին, թե ով է ավելի մեծ լինելու: Աշխարհի սկզբունքները շատ ամուր նստած էին Նրա աշակերտների մտքերում: Ուսուցչի պատասխանն ուղղված է խնդրի բուն էությանը և իրենից ներկայացնում է ընդհանուր առմամբ կյանքի և մասնավորապես քրիստոնեական կյանքի ամենաբարդ խնդիրներից մեկը: Հիսուսի խոսքերը «փոքրագույն» լինելու մասին ցույց են տալիս, թե որքանով են աշխարհիկ առաջնահերթությունները կառուցված հակառակ կարգով:

Եթե աշխարհի սկզբունքներն այդ աստիճան հակադիր են այն ամենին, ինչ ասում էր Հիսուսը, մենք ինչպե՞ս կարող

ենք ողջ մնալ այս աշխարհում, եթե Նրա սկզբունքները կիրառենք մեր կյանքում:

Ուրբաթ **հունիսի 5**

Հետագա ուսումնասիրության համար

«Ո՞ւմ է պատկանում մեր սիրտը: Ո՞վ է իշխում մեր մտքերին: Ո՞ւմ մասին ենք սիրում խոսել մենք: Ո՞ւմ են նվիրված ամենանուրբ զգացմունքները, ո՞ւմ ենք մենք տալիս մեր ուժերը: Եթե մենք Քրիստոսինն ենք, ապա ամենից շատ մեզ հաճելի է Նրա մասին մտածելը: Մենք Նրան ենք հանձնում ինքներս մեզ և այն ամենը, ինչ ունենք: Մենք լի ենք Նրա կերպարն արտացոլելու, Նրա ոգով լցվելու, Նրա կամքը կատարելու և Նրան ամեն բանում հաճո լինելու ցանկությամբ» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 58):

«Մեր երկրային կյանքում՝ թեկուզև մեղքից փչացած, մենք կարող ենք հավիտենական ուրախություն գտնել և արժանավայել ծառայել ուրիշներին: Իսկ ապագայում, սահմանափակված չլինելով մեղսավոր էության շրջանակներով, մենք մեծագույն ուրախություն կգտնենք ծառայության մեջ, որն այլևս սահմանափակված չի լինի մեղքով, մենք նորովի կճանաչենք «այս խորհուրդի փառավոր ճոխությունը... որ է Քրիստոսը ձեզանում՝ այն փառքի հույսը» (Կողոսացիս 1.27)» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 309):

Հարցեր քննարկման համար

1. Հիսուսն անմիտ անվանեց հարուստ և հաջողակ ագարակատիրոջը (Ղուկաս 12.20): Բայց անմիտ կարող էր լինել ոչ հարուստ և ոչ հաջողակ մարդը: Ի՞նչն է մարդու անմիտ (կամ հիմար) դարձնում Աստծո աչքերում:
2. Մեր եկեղեցիների մեծ մասում կարելի է երկու տեսակ մարդկանց հանդիպել: Առաջին խմբի մեջ մտնում են մասնագետները, ձեռնարկությունների ղեկավարները, եկեղեցական ու հասարակական առաջնորդները, ինչպես նաև ազդեցիկ մարդիկ՝ բոլոր նրանք, ովքեր հարգանք, ուշադրություն և դրական վերաբերմունք են վայելում, իսկ երկրորդ կատեգորիային կարելի է դասել լուռումունջ և աննկատ մարդկանց, ովքեր պարզապես գալիս և գնում են՝ առանց որևէ մեկի կողմից նկատվելու: Դուք ի՞նչ կարող

եք անել, որպեսզի երկրորդ տեսակի մարդիկ իրենց նույնքան կարևոր զգան, որքան և առաջին կատեգորիայի մարդիկ:

3. Թեև այսօր հեշտ է փարիսեցիներին հանդիմանել այն բանի համար, որ նրանք աղավաղեցին ճշմարտությունը, մենք ինչպե՞ս կարող ենք չգործել այդ նույն սխալները: Ինչպե՞ս կարող ենք սովորել՝ հաստատապես պաշտպանել այն, ինչ ճիշտ է՝ միաժամանակ չդառնալով փարիսեցի: Կամ, որ է՛լ ավելի կարևոր է, մենք ինչպե՞ս ենք որոշում, թե ինչն է ճիշտ, և հանուն ինչի արժե պայքարել, իսկ ինչն է ընդամենը «քամելով մոծակին հեռացնել»:
4. Մենք ինչպե՞ս կարող ենք աչալուրջ և պատրաստակամ լինել Հիսուսի վերադարձի առումով, երբ յուրաքանչյուր տարի ամենքի համար ավելի ու ավելի հեշտ է դառնում զգոնությունը կորցնելը:

ԴԱՍ 11

ՀՈՒՆԻՍԻ 6-12

ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ղուկաս 11.2, Ղուկաս 1.32,33, 18.16-30, Ղուկաս 17.23,24, Հայտնություն 21.1-3, Ղուկաս 21.34-36:

Հիշելու համարը.

«Եվ կգան արևելքից և արևմուտքից, և հյուսիսից, և հարավից, և կնստեն Աստծո արքայությունում» (Ղուկաս 13.29):

Աստծո արքայությունը Հիսուսի ուսմունքի հիմնական թեման ու կարևոր գերակայությունն է: Այս արտահայտությունն ի հայտ է գալիս Մատթեոսի Ավետարանում գրեթե 50 անգամ, 16 անգամ՝ Մարկոսի Ավետարանում, մոտ 40 անգամ՝ Ղուկասի Ավետարանում, և 3 անգամ՝ Հովհաննեսի Ավետարանում: Բոլոր դեպքերում՝ լինի դա Տերունական աղոթքում, Լեռան քարոզում, թե Հիսուսի մյուս առակներում, Աստծո արքայությունը այն բանի արտահայտումն է, ինչը պատմության մեջ Աստված արել է մարդու համար՝ լուծելով մեղքի հիմնախնդիրն ու մեծ պայքար մղելով սատանայի դեմ՝ մինչև վերջնական ու վճռական հաղթանակ: Աստծո արքայությունը նման չէ աշխարհի ուրիշ ոչ մի թագավորության, և դա այն պատճառով, որ այն այս աշխարհից չէ:

«Աստծո արքայությունն ինչ-որ առերևույթ բան չէ: Այն գալիս է, երբ սիրով կատարում են Նրա խոսքը, Նրա Հոգու՝ խիղճն արթնացնող ներքին աշխատանքի միջոցով, մարդու շփման միջոցով Նրա հետ, Ով կյանք է: Նրա իշխանության մեծագույն ապացույցը դրսևորվում է մարդկային էության մեջ, որ աճում է մինչև Քրիստոսի կատարյալ բնավորությունը» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 6):

Այս շաբաթ մենք կտեսնենք, թե այս թեման ինչպես է բացահայտվում Ղուկասի Ավետարանում:

Միաշաբթի **հունիսի 7**

Աստծո արքայության բնութագիրը: Մաս 1

Ավետարանները լի են Աստծո արքայության մասին հիշատակումներով, բոլորը միասին դրանք վկայում են այն մասին, որ Հիսուսի մեջ և Նրա միջոցով նոր կարգ հաստատվեց:

Ղուկաս 11.2-ն ի՞նչ է ասում Աստծո արքայության մասին: Ո՞ւմն է այդ թագավորությունը, և ինչո՞ւ է դա այդքան կարևոր: _____

_____

_____

_____

Ասել, որ դա Աստծո թագավորությունն է, նշանակում է՝ ոչ թե պարզապես ասել ակնհայտը, այլ, ավելի շուտ, հաստատել. Աստծո արքայությունը փիլիսոփայական հասկացություն չէ, և ոչ էլ բարոյական ուսմունք: Դա սոցիալական ավետարան չէ, որը հաց ու ջուր է հռչակում քաղցածների համար կամ հավասարություն և արդարություն՝ քաղաքականապես հալածվածների համար: Այն գերազանցում է մարդկային ողջ բարությունն ու բարոյական գործունեությունը, և դրա կենտրոնում Աստծո ինքնիշխան գործունեությունն է՝ մարմնացյալ Որդու միջոցով, Ով եկավ քարոզելու բարի լուրը արքայության մասին (Ղուկաս 4.42-44, Մատթեոս 4.23-25):

Ղուկաս 1.32,33-ում ի՞նչ է ասվում Նրա մասին, Ով հաստատել է Աստծո Արքայությունը, և այն մասին, թե որը կլինի դրա վերջնական արդյունքը: _____

_____

_____

_____

Այս հատվածը առաջնահերթ նշանակություն ունի երկու պատճառով. նախ՝ Փրկիչը, ում սպասում էին Հին Կտակարանի ժամանակներում, ոչ այլ ոք է, քան Հիսուսը՝ «Բարձրյալի Որդին»: Երկրորդ՝ «նրա թագավորությանը վերջ չի լինի»: Սա նշանակում է, որ Իր մարմնացման, մահվան և հարության միջոցով Հիսուսը հաղթահարեց Աստծո տիրակալությունը վիճարկելու սատանայի ջանքերը և առհավետ հաստատեց Նրա թագավորությունը: «Աշխարհի թագավորությունը մեր Տիրոջը և Նրա Քրիստոսինը եղան. և նա կթագավորի հավիտյանս հավիտենից» (Հայտնություն11.15): Քրիստոսի և սատա-

նայի բախման մեջ վերջինս իր հաղթանակը հռչակեց Ադամի ու Եվայի մեղանչումից հետո: Բայց Հիսուսի առաքելությունն ապացուցեց թշնամու հավակնությունների սուտ լինելը. Նա յուրաքանչյուր քայլում հաղթեց սատանային և Իր մահվամբ ու հարությամբ հայտարարեց ողջ տիեզերքին, որ Աստծո թագավորությունն արդեն եկել է:

Ձեր կյանքն ինչպե՞ս կարող է վկայել այն մասին, որ Աստծո արքայությունն արդեն եկել է: Ի՞նչ պետք է փոխվի մեր կյանքում:

Երկուշաբթի հունիսի 8

Աստծո արքայության բնութագրերը: Մաս 2

Հետևյալ տեքստերն ինչպե՞ս ես բնորոշում Աստծո թագավորությունը:

Ղուկաս 18.16-30 _____

_____

_____

Ղուկաս 12.31-33 _____

_____

_____

Ղուկաս 9.59-62 _____

_____

_____

Աստծո արքայություն մուտքը կախված չէ մարդու կարգավիճակից կամ դիրքից, հարստությունից կամ դրա բացակայությունից: Ղուկասը, Ավետարանների մյուս հեղինակների նման, նշում է, որ մարդը պետք է Հիսուսի մոտ գա կատարյալ հնազանդության պատրաստակամությամբ, բացարձակ կախվածությամբ և մանկական վստահությամբ: Ահա թե ինչպես են բնութագրվում նրանք, ովքեր մտել են Աստծո թագավորություն: Նրանք պետք է պատրաստ լինեն հրաժարվել ամեն բանից, եթե անհրաժեշտ լինի. որովհետև այն, ինչից նրանք չեն ցանկանում հրաժարվել, որոշ իմաստով ոչ միայն մրցակցելու է Հիսուսի հետ, այլ նաև, ըստ էության, հաղթելու է Նրան: Հիսուսը գերակա իրավունք ունի մեր կյանքի, մեր կյանքի յուրաքանչյուր տեսանկյան հանդեպ: Եվ սրանում խորը իմաստ կա, որովհետև միայն Նրա շնորհիվ է, որ մենք առհասարակ գոյություն

ունենք: Այդ պատճառով, իհարկե, Նա արժանի է մեր լիակատար նվիրվածությանը:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Ղուկաս 18.29-30-ը: Ի՞նչ է մեզ ասում Հիսուսը և ի՞նչ է խոստանում: Հանուն Աստծո թագավորության անհրաժե՞շտ է թողնել ծնողներին, ամուսնուն, անգամ զավակներին: Հիսուսը չի ասում, որ այսպես պարտավոր են վարվել բոլոր հավատացյալները, բայց եթե որևէ մեկն ստիպված լինի այդ ամենը թողնել հանուն Աստծո արքայության, Աստծո թագավորությունը արժե դրան:

Ավելի հանգամանորեն ուսումնասիրենք Հիսուսի խոսքերը. «Թող մեռելներն իրենց մեռելներին թաղեն»: Ի՞նչ կարևոր ճշմարտություն է արտահայտված այստեղ այն մարդու համար, ով արդարացում է որոնում, որպեսզի չհետևի իր Տիրոջը՝ անկախ այն բանից, թե այդ հիմնավորումները որքանով կարող են արդարացված թվալ:

Երեքշաբթի հունիսի 9

Աստծո արքայությունը. արդեն ու դեռ ոչ

Հիսուսը եկավ Աստծո արքայությունը քարոզելով: Նազարեթում ժողովրդին ուղղված իր առաջին ելույթում (Ղուկաս 4.16-21) Նա հաստատեց, որ Իր միջոցով կատարվեց Եսայիայի մեսիական մարգարեությունն Աստծո թագավորության և Իր քավչարար ծառայության մասին:

Ղուկասը գրի է առել ևս մեկ արտահայտություն, որ հավաստում է արքայության գալու իրական լինելը: Փարիսեցիների հարցին այն մասին, թե երբ կգա արքայությունը, Հիսուսը պատասխանեց, որ «Աստծո արքայությունը հենց ձեր մեջ է» (Ղուկաս 17.21): Այլ թարգմանություններ առաջ են քաշում այն միտքը, որ Աստծո արքայությունը ձեր միջև է: Այսինքն՝ արքայությունն արդեն եկել էր Հիսուսի գալստյան հետ, որը երևում է նրա այնպիսի դրսևորումներում, ինչպիսին էին հիվանդների բժշկումը (Ղուկաս 9.11), Ավետարանի քարոզը (Ղուկաս 4.16-19), մեղքերի ներումը (Ղուկաս 7.48-50, 19.9,10) և չարի ուժերի կործանումը (Ղուկաս 11.20): Այդպիսով, Հիսուսի գալուստը հնարավոր դարձրեց Աստծո արքայության գալուստը մարդու ներսում՝ վերափոխելով նրան, որպեսզի նա կարողանա նման լինել Իրեն: Աստծո արքայությունը դրսևորվում է նաև հավատացյալների

համայնքում, արդարության և փրկության հայտնության մեջ: Սույն տեսանկյունը հայտնի է նաև որպես «Աստծո շնորհի թագավորություն, (*որը*) հաստատվում է այժմ՝ այն բանին զուգընթաց, որ նախկինում մեղքով ու դիմադրությամբ լի սրտերը օրեցօր հնազանդվում են Նրա սիրո հզորությանը» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 108):

Այն ժամանակ, երբ Աստծո արքայությունն արդեն հասել է («արդեն» նշանակում է դրա հաստատման վերջնական բնույթը), այսինքն՝ մեղքի և սատանայի պարտությունն ու Հիսուսի հաղթանակը մեծ պայքարում, «դեռ ոչ» տեսանկյան կողմնակիցները միայն սպասում են չարի ֆիզիկական ոչնչացմանը և նոր երկրի արարմանը. «Բայց Նրա փառքի արքայության վերջնական հաստատումը տեղի կունենա միայն Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ» (նույն տեղում, 108):

Այս տեքստերն ի՞նչ են ասում Աստծո արքայության մասին ժամանակի վերջում: Ղուկաս 17.23,24, 21.5-36: _____

_____

_____

_____

Մեր ողջ աշխարհն ու նրա վիճակը՝ ցնցումները, տրտմություններն ու դրանում տեղի ունեցող տհաճությունները, իհարկե, արտահայտում են այստեղ Հիսուսի ասած խոսքերը: Թեև ոմանք պնդում են, որ ցավն ու տառապանքները այս աշխարհում նշանակում են, որ Աստված գոյություն չունի, մենք կարող ենք պատասխանել. հաշվի առնելով 2000 տարի առաջ Հիսուսի տված նախազգուշացումները՝ մեր աշխարհի վիճակը օգնում է ապացուցել ոչ միայն Աստծո գոյությունը, այլ նաև հենց Աստվածաշնչի ճշմարիտ լինելը: (Եթե աշխարհը այսօր դրախտ լիներ, Հիսուսի խոսքերը սուտ կլինեին): Միայն ժամանակի վերջում կհաստատվի Աստծո արքայությունը՝ իր ողջ լիությամբ: Մինչ այդ մենք պետք է համբերությամբ սպասենք:

Չորեքշաբթի հունիսի 10

Աստծո արքայությունն ու Քրիստոսի երկրորդ գալուստը

Երբ Հիսուսը խոսում էր Աստծո արքայության մասին, Նա խոսում էր երկու անվիճարկելի փաստերի մասին. (1) մարդկության պատմության ընթացքում Աստծո գործունեության մասին Հիսուս Քրիս-

տոսի միջոցով՝ հանուն մարդկությանը մեղքից փրկելու, և (2) այն մասին, որ Աստված կավարտի երկրի պատմությունը՝ փրկվածների կյանքում կենսագործելով Իր սկզբնական ծրագիրը՝ կյանքը Իր հետ, խոստացված երկրում (Հայտնություն 21.1-3): Առաջինը, ինչպես արդեն նշվել է, կատարվում էր Քրիստոսի առաքելության և ծառայության միջոցով: Նրա մեջ մենք արդեն ապրում ենք շնորհի արքայության մեջ (Եփեսացիս 1.4-9): Փրկագնման երկրորդ մասը՝ փրկվածների կյանքը փառքի թագավորությունում, ապագա հույս է, որին սպասում են նրանք, ովքեր Քրիստոսի մեջ են (եփեսացիս 1.10, Տիտոս 2.13): Հիսուսն Ինքը և Նոր Կտակարանի բոլոր հեղինակները այդ պատմական պահը, երբ հավատացյալները կժառանգեն փառքի արքայությունը, կապում են Քրիստոսի երկրորդ գալստյան հետ:

Քրիստոսի երկրորդ գալուստը Բարի լուրի գագաթնակետն է, որ հռչակում էր Հիսուսը, երբ եկավ առաջին անգամ: Այն նույն Հիսուսը, Ով Գողգոթայի վրա հաղթել էր մեղքին ու սատանային, շուտով կվերադառնա, որպեսզի սկսի չարն արմատախիլ անելու և այս երկիրը դժբախտություններից մաքրելու գործընթացը, դժբախտություններ, որ սատանան բերել էր Աստծո ողջ արարչագործության վրա:

Կարդացե՛ք Ղուկաս 21.34-36-ը: Ձեր խոսքերով վերապատմեք հատվածի հիմնական միտքը: Դրանից հետո վերլուծե՛ք ձեր կյանքն ու խորհեցե՛ք, թե այդ խոսքերն ինչպե՞ս են վերաբերում ձեզ: Դուք ի՞նչ պետք է անեք, որպեսզի հետևեք այն ամենին, ինչի մասին այստեղ խոսում է Հիսուսը: _____

_____

_____

_____

_____

Մեզ՝ Նրա վերադարձին սպասողներիս, Հիսուսը կոչ է անում. «Արթո՛ւն կացեք... աղո՛թք արեք, որ արժանի լինեք... կանգնել Մարդի Որդու առջև» (համար 36):

Նրանք, ովքեր մտել են շնորհի արքայություն, պետք է սպասեն, արթուն լինեն և աղոթք անեն փառքի արքայության վրա հասնելու մասին: Մեկի և մյուսի միջև, «արդենի» և «դեռ ոչի» միջև հավատացյալները պետք է զբաղված լինեն ծառայությամբ ու առաքելությամբ՝ ապրելով ու հուսալով, սովորեցնելով ու վկայելով: Երկրորդ գալստյանն սպասելը պահանջում է մեր կյանքի սրբագործում այստեղ և հիմա:

Վկաները

Կարդացե՛ք Գործք առաքելոց 1.1-8-ը: Աստծո արքայության մասին ի՞նչ կարևոր ճշմարտություններ են արտահայտված այստեղ: _____

_____

_____

Երբ Ղուկասը գրում էր իր Ավետարանի շարունակությունը՝ վաղ եկեղեցու պատմության համառոտ շարադրանքի ձևով, նա ամենից շատ մտածում էր Աստծո արքայության մասին: Իր պատմական շարադրանքի՝ «Գործք Առաքելոց» գրքի առաջին տողերում Ղուկասը երեք հիմնարար ճշմարտություններ է հաստատում Աստծո արքայության մասին:

Նախ՝ վստա՛հ եղեք, որ Հիսուսը կրկին գալու է: Իր հարության և համբարձման միջև եղած 40 օրերի ընթացքում Տերը շարունակում էր քարոզել այն, ինչ սովորեցրել էր Իր աշակերտներին խաչելությունից առաջ «Աստծո արքայության մասին» (Գործք առաքելոց 1.3): Խաչի և հարության հետ կապված զարմանալի իրադարձությունները ոչինչ չէին փոխել արքայության մասին Հիսուսի ուսմունքի մեջ. բոլոր դեպքերում, հարության 40 օրերի ընթացքում Հիսուսը շարունակում է աշակերտներին հավաստիացնել արքայության իրական լինելը:

Երկրորդ՝ սպասեք, որ Հիսուսը կրկին գալու է Աստծո նշանակած ժամանակին: Հարությունից հետո Հիսուսի աշակերտները Նրան լուրջ և հուզիչ հարց տվեցին. «Տեր, այս ժամանակո՞ւմ ես կանգնեցնում Իսրայելի թագավորությունը» (Գործք առաքելոց 1.6): Հիսուսը չպատասխանեց հարցին, այլ աշակերտների համար ճշտեց հեռանկարը. Նրա միտքը քննելը, Նրա ծրագրերի իրականացման ժամանակը կանխատեսելը, նրա գաղտնիքների մեջ ներթափանցելը մարմնի ու արյան գործը չէ: Նա գիտի, երբ պետք է վրա հասնի արքայությունը, և Նա այն կկատարի իր ժամանակին (Գործք առաքելոց 1.7, Մատթեոս 24.36), ճիշտ այնպես, ինչպես, «երբ ժամանակի լրումը եկավ» (Գաղատացիս 4.4),Նա ուղարկեց Իր Որդուն, որպեսզի հաստատի շնորհի թագավորությունը:

Երրորդ՝ եղե՛ք Հիսուսի Ավետարանի վկաները: Քրիստոսը աշակերտներին անհայտի վերաբերյալ մտորումներից՝ թե երբ կգա

փառքի արքայությունը, ուղղորդեց նրան, ինչ հայտնի է և պետք է կատարվի: Երկրորդ գալստյան ժամանակը հայտնի չէ, բայց մենք կոչված ենք սպասելու այդ փառավոր օրվան և մինչ այդ «շրջանառության մեջ դնել» մեզ տրված պարգևներն ու ընդունակությունները (Ղուկաս 19.13): Սա նշանակում է, որ մենք պետք է մասնակցենք Հիսուս Քրիստոսի Ավետարանի տարածմանը՝ մինչև «երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8): Սա մեր պարտականությունն է՝ ոչ թե մեր սեփական ուժերով, այլ Սուրբ Հոգու զորությամբ, որ Աստված խոստացել է հեղել բոլոր նրանց վրա, ովքեր պետք է վկաները լինեն իրենց տեսածի ու լսածի (4-8 տեքստեր):

Հիսուսի այս հավատարիմ հետևորդները դեռևս որոշ սխալ պատկերացումներ ունեին Քրիստոսի աշխատանքի բնույթի մասին: Եվ, այնուամենայնիվ, Տերն օգտագործում էր նրանց: Որպեսզի Աստված կարողանա օգտագործել մեզ, անհրաժեշտ չէ՞, որ մենք ամեն բան հասկանանք լիովին: Սրանում ի՞նչ դաս է բովանդակվում մեզ համար:

Ուրբաթ հունիսի 12

Հետագա ուսումնասիրության համար

«Հոգով աղքատների մասին Քրիստոսն ասում է. «Նրանցն է երկնքի արքայությունը»: Փրկիչն ամենևին էլ նկատի չուներ երկրային ժամանակավոր թագավորություն, ինչպես դրա հույսն ունեին Հիսուսի ունկնդիրները: Քրիստոսը նրանց առջև բացահայտեց Իր սիրո, շնորհի ու արդարության հոգևոր արքայությունը: Փրկչի կառավարման մասին վկայող նշանը Մարդի Որդուն նմանությունն է: Նրա հպատակները աղքատ են հոգով, խոնարհ են, հալածված ճշմարտության համար: Նրանց է պատկանում երկնքի արքայությունը» (Է. Ուայթ, Քրիստոսի լեռան քարոզը, 8):

«Այժմ մենք գտնվում են Աստծո արհեստանոցում: Մեզանից շատերը նման են անտաշ քարերի, որ հենց նոր դուրս են եկել քարհանքից, բայց երբ մենք ընդունում ենք Աստծո ճշմարտությունը, դրա ազդեցությունը փոխում է մեզ: Ճշմարտությունն ազնվացնում է մեզ և մեզանից հեռացնում է ցանկացած անկատարություն և մեղք: Այդպիսով մենք պատրաստվում ենք, որ տեսնենք Արքային՝ Իր ողջ գեղեցկությամբ, և փառքի թագավորության մեջ միավորվենք մաքուր երկնային հրեշտակների հետ: Հենց այստեղ՝ երկրի վրա, այդ աշ-

խատանքը պետք է կատարվի մեզ համար, հենց այստեղ է պետք մեր հոգիներն ու մարմինները նախապատրաստել անմահությանը» (Է. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հատոր 2, 355, 356):

Հարցեր քննարկման համար

1. Քաջ հայտնի է (կամ, ավելի շուտ, ցավոք հայտնի է) ֆիզիկոս Սթիվեն Վայնբերգի արտահայտությունը տիեզերքի մասին. «Որքան ավելի հասկանալի է դառնում տիեզերքը, այնքան ավելի անհեթեթ է այն թվում»: Նրա խոսքերը իսկական իրարանցում առաջ բերեցին, և նա արդյունքում փորձեց մեղմացնել իր ասածը: Ոմանք, սակայն, տիեզերքի անմտությունը վիճարկելու ոչ մի պատճառ չեն տեսնում: «Ինչո՞ւ այն պետք է իմաստ ունենա, - տիեզերքի մասին հարցնում է Հարվարդի համալսարանի աստղագետ Մարթա Հելլերը: - Ի՞նչ իմաստ կարող է լինել: Չէ՞ որ դա պարզապես ֆիզիկական համակարգ է, ի՞նչ իմաստ: Ես միշտ տարակուսել եմ այդ հայտարարության առթիվ»: Տիեզերքը պարզապես համակարգ է և այն էլ անմի՞տ: Որպես Հիսուսի երկրորդ գալստյանն ու Աստծո արքայության լիակատար ու համակողմանի հաստատմանն սպասող քրիստոնյա՝ դուք ի՞նչ կպատասխանեիք այս պնդումների հետևում կանգնած գաղափարներին:
2. Քրիստոնյաների յուրաքանչյուր սերունդ սպասել է, որ Հիսուսը կվերադառնա հենց իրենց ժամանակներում, իսկ որոշ հովիվներ/ավետարանիչներ անգամ որոշակի տարեթվեր են ասել: Բայց նրանք բոլորը սխալվում էին: Ի՞նչ վատ բան կա Քրիստոսի վերադարձի ժամանակը որոշելու մեջ:

ԴԱՍ 12

ՀՈՒՆԻՍԻ 13-19

ՀԻՍՈՒՍԸ ԵՐԿՈՒՍԱՂԵՄՈՒՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.
Ղուկաս 19.28-40, Զաքարիա 9.9, Ղուկաս 19.45-48, Մատթեոս 21.12-17, Ղուկաս 20.9-26:

Հիշելու համարը.
«Եվ երբ որ մոտեցավ, տեսավ քաղաքը, լացեց նրա վրա» (Ղուկաս 19.41):

Իր երկրային կյանքի վերջին շաբաթը Հիսուսն անցկացրեց Երուսաղեմում: Ինչպիսի՜ բուռն իրադարձություններով նշանավորվեց այդ շաբաթը. հաղթական մուտքը, Հիսուսը արտասվում է անտարբեր քաղաքի համար, տաճարի մաքրումը, Նրա դեմ խարդավանքներն ու դավադրությունը, ոգեշնչմամբ լի խորհրդավոր ընթրիքը և տառապալից հոգևոր մաքառումը Գեթսեմանիում, դատաքննության ծաղրանմանումը, խաչելությունը և վերջապես հարությունը: Երբևէ նախկինում և երբեք հետագայում որևէ քաղաք վկան չի եղել պատմական իրադարձությունների այդպիսի բուռն զարգացման, իրադարձություններ, որոնք բարու և չարի միջև տիեզերական հակամարտությունը բերեցին դրա հանգուցալուծմանը, թեև ոչ ոք, բացի Հիսուսից, չէր հասկանում տեղի ունեցող իրադարձությունների ողջ նշանակությունը:

Հիսուսն Իր կյանքի ընթացքում մի քանի անգամ անցել էր Երուսաղեմով: Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասն ու Հովհաննեսը գրում են, թե ինչպես հասուն տարիքում Հիսուսն այցելեց Երուսաղեմ, հիմնականում՝ չարչարանաց շաբաթվա ընթացքում: Թեև քաջ հայտնի են Հիսուսի կողմից Երուսաղեմ այցելության նաև այլ դեպքեր՝ նորածին Հիսուսին բերում են տաճար (Ղուկաս 2.22-28), 12-ամյա Հիսուսը տաճարում զրուցում է ուսուցիչների հետ (41-50 տեքստեր), փորձիչը Հիսուսին հասցնում է տաճարի գագաթը (Ղուկաս 4.9-13), Նրա ծառայության այս վերջին շաբաթը գրավում է Ավետարանների հեղինակների առանձնահատուկ ուշադրությունը:

Հաղթական մուտքը

Նա ծնվել էր Բեթղեհեմում: Նա մեծացել էր Նազարեթում: Նա սովորեցնում, քարոզում, բժշկում էր ողջ Գալիլեայում, Սամարիայում, Հուդայում և Պերեայում: Բայց մի քաղաք էր անդադար գտնվում Նրա ուշադրության կենտրոնում՝ Երուսաղեմը: «Եվ եղավ, երբ որ նրա վերանալու օրերը կատարվում էին, նա իր երեսը հաստատեց, որ գնա Երուսաղեմ» (Ղուկաս 9.51): Քաղաք Նրա մուտքը նշանավորեց համաշխարհային պատմության մեջ ամենադրամատիկ և վճռորոշ շաբաթվա սկիզբը: Ծաբաթն սկսվեց նրանով, որ Քրիստոսը թագավորի նման մուտք գործեց քաղաք և Իր մահը դիմավորեց խաչի վրա, որի շնորհիվ մենք, որ թշնամիներ էինք, «Աստծո հետ հաշտվեցինք նրա Որդու մահով» (Հռոմեացիս 5.10):

Կարդացե՛ք Ղուկաս 19.28-40-ը: Պատկերացրե՛ք աշակերտների հուզմունքը: Նրանք, հավանաբար, մտածում էին, որ այդ ժամանակ Հիսուս Արքան երկրային գահ կբարձրանա Երուսաղեմում՝ Դավիթ թագավորի գահը: Սխալ ակնկալիքների մասին ի՞նչ կարևոր դաս կարող ենք քաղել այս պատմությունից: _____

_____

_____

_____

Երբ Հիսուսը ծնվեց, Արևելքի մոգերը Երուսաղեմի դարպասները թակեցին հրատապ հարցով. «Որտե՞ղ է Հրեաների ծնված թագավորը» (Մատթեոս 2.2): Իսկ հիմա՝ խաչելությունից մի քանի օր առաջ, երբ Նրա աշակերտներն ու ժողովուրդը խուռն կերպով լցրել էին քաղաքը, Երուսաղեմի երկինքը խլացնում էին բարձրաձայն աղաղակները. «Օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկող թագավորը» (Ղուկաս 19.38):

Այս զարմանալի տեսարանը իրենից ներկայացնում էր մարգարեության կատարում: «Մեծապես ուրախացիր, ով Սիոնի աղջիկ, ցնծությամբ աղաղակիր, ով Երուսաղեմի աղջիկ, ահա քո Թագավորը գալիս է քեզ մոտ, նա արդար ու փրկագործ է, հեզ, և էշի վրա հեծած, այսինքն էշի ձագի՝ ավանակի վրա» (Զաքարիա 9.9): Սակայն Հիսուսը գիտեր, որ այս պատմական քայլերթը, որ սկսվել էր «Օվսաննա» աղաղակներից, շուտով ավարտվելու է Գողգոթայում, որտեղ Նա կարտասանի այն նույն հաղթական բառը. «Կատարվե՛ց»:

Ու թեև այդ ամենը տեղի էր ունենում Աստծո հավիտենական ծրագրին համապատասխան, Նրա աշակերտները այնքան կլանված էին ավանդույթներով, ուսմունքներով և իրենց ժամանակի ու մշակույթի սպասումներով, որ կատարելապես աչքաթող էին արել բազմաթիվ նախազգուշացումներն այն մասին, թե ինչ է տեղի ունենալու, և ինչ է այդ ամենը նշանակում:

Քրիստոսը խոսում էր նրանց հետ, բայց նրանք չէին լսում: Կամ միգուցե լսում էին, բայց Նրա խոսքերը այնքան չէին համապատասխանում նրանց ակնկալիքներին, որ նրանք պարզապես թույլ չէին տալիս դրանց՝ հասնելու իրենց գիտակցությանը: Մենք ինչպե՞ս կարող ենք անել ամեն հնարավորը, որպեսզի չվարվենք նույն կերպ, երբ բանը վերաբերում է աստվածաշնչյան ճշմարտությանը:

Երկուշաբթի հունիսի 15

Երուսաղեմ. տաճարի մաքրումը

«Գրված է, թե իմ տունն աղոթքի տուն է, և դուք նրան ավազակների այր եք արել» (Ղուկաս 19.46):

Հաղթական մուտքից հետո, որի ժամանակ Հիսուսն արտասվում էր Երուսաղեմի ճակատագրի համար, առաջին բանը, ինչ Նա արեց, տաճար գնալն էր:

Կարդացե՛ք Ղուկաս 19.45-48, Մատթեոս 21.12-17, Մարկոս 11.15-19-ը: Ի՞նչ կարևոր դասեր կարող ենք քաղել այն ամենից, ինչ արեց Հիսուսը: Այս պատմություններն ի՞նչ են ասում մեզանից յուրաքանչյուրին՝ որպես առանձին անհատ և որպես քրիստոնեական համայնքի անդամ, ով, որոշ իմաստով, գործում է որպես տաճար: Եփեսացիս 2.21: _____

_____

_____

_____

Բոլոր չորս Ավետարաններում գրված է տաճարի մաքրման մասին: Բայց եթե Հովհաննեսը գրում է տաճարի առաջին մաքրման մասին (Հովհաննես 2.13-25), որ տեղի էր ունեցել Հիսուսի կողմից Ք.ա. 28 թվականի Զատկի տոնին Երուսաղեմ այցելության ժամանակ, ապա մյուսները պատմում են տաճարի երկրորդ մաքրման մա-

սին՝ Հիսուսի ծառայության ավարտին, այս անգամ Ք.հ. 31 թվականի Զատկին: Այսպիսով, տաճարի երկու մաքրումները շրջանակում են Հիսուսի ծառայությունը՝ ցույց տալով, թե որքան էր հոգ տանում Նա տաճարի սրբության և այնտեղ կատարվող ծառայության մասին, և ինչպես էր Նա ռազմավարական առումով հաստատում Իր մեսիական առաքելությունն ու իշխանությունը:

Տաճարում Նրա գործողությունները, հատկապես երկրորդ անգամ՝ Իր մահից ոչ շատ առաջ, հետաքրքիր հարց են բարձրացնում. իմանալով, որ Ինքը շուտով մահանալու է, իմանալով, որ տաճարն ու այնտեղ կատարվող ծառայությունը շուտով կորցնելու են իրենց ուժը, Հիսուսն, այնուամենայնիվ, տաճարից վռնդեց նրանց, ովքեր պղծում էին այն իրենց առևտրով: Ինչո՞ւ Նա ամեն բան պարզապես չթողեց այնպես, ինչպես կար՝ ընկած վիճակով, եթե գիտեր, որ շուտով տաճարը ոչ միայն անօգուտ կդառնա, այլ նաև հենց այդ սերնդի օրոք կավերվի:

Թեև մենք չունենք այս հարցի ճշգրիտ պատասխանը, կարող ենք ենթադրել, որ Հիսուսն այդպես վարվեց, որովհետև տաճարը դեռևս մնում էր Աստծո տունը և այն վայրը, որտեղ բացահայտվել էր փրկության ծրագիրը: Որոշ իմաստով կարելի է պնդել, որ, հաշվի առնելով Քրիստոսի մոտալուտ մահը, տաճարը և այնտեղ կատարվող ծառայությունը կարևոր գործառույթ ունեին, քանի որ այն վայրն էր, որտեղ հավատարիմ հրեաները կարող էին գալ այն ըմբռնմանը, թե Ով էր Հիսուսը, և իրականում ինչ էր նշանակում Նրա մահը խաչի վրա: Այսինքն՝ տաճարը, որ ներկայացնում էր փրկության ծրագիրը, կարող էր շատերին օգնել՝ Հիսուսի մեջ տեսնելու «Գառին, որ աշխարհի սկզբից ի վեր մորթված է» (Հայտնություն 13.8):

Երեքշաբթի **հունիսի 16**

Անհավատարիմները

Չար այգեպանների առակը (Ղուկաս 20.9-19) մեզ դաս է տալիս փրկության պատմությունից: Այս պատմության մեջ գլխավորը Աստված է և Նրա մշտենջենական սերը մոլորյալ մեղավորների նկատմամբ: Թեև առակը հատուկ հասցեագրված է այն ժամանակվա հրեա առաջնորդներին («որովհետև իմացան, որ իրենց համար ասաց այն առակը» [համար 19]), այն ժամանակային սահմանափակումներ չունի: Այն կիրառելի է յուրաքանչյուր սերնդի, յուրաքանչյուր համայնքի

և յուրաքանչյուր մարդու համար, ում վրա հեղել է Աստված Իր սերն ու վստահությունը և ումից հավատարիմ պատասխան է ակնկալում: Մենք ժամանակակից այգեպաններն ենք և կարող ենք այս առակից որոշ դասեր քաղել պատմության մասին, թե ինչպես է այն տեսնում Աստված:

Կարդացե՛ք Ղուկաս 20.9-19-ը: Այստեղ շարադրված սկզբունքներն ինչպե՞ս կարելի է կիրառել մեր վերաբերյալ, որ նույնպիսի սխալներ ենք գործում, ինչպես առակի հերոսները: _____

_____

_____

_____

Աստծուն սիրո և հավատարմության պտուղներ տալու փոխարեն՝ Աստծո խաղողի այգու բնակիչները հրաժարվեցին Աստծուց և չարաշահեցին Նրա վստահությունը: Բայց Աստված՝ որպես այգու տեր, Իր անփոփոխ սիրով նրանց մոտ էր ուղարկում ծառա ծառայի հետևից (10-12 տեքստեր), մարգարե մարգարեի հետևից (Երեմիա 35.15), որպեսզի հասնի այդ մարդկանց բարեհաճությանը և նրանց ցույց տա իրենց պարտականությունները՝ որպես կառավարիչներ: Բայց բոլոր մարգարեները մերժվեցին նրանց կողմից: «Մարգարեներից որի՞ն չհալածեցին ձեր հայրերը» (Գործք առաքելոց 7.52):

Աստվածային պատմությունը սիրո երկարատև պատմություն է: Դժբախտությունները տեղի կունենան կրկին ու կրկին, բայց հաղթանակը, միևնույնն է, կգա: Խաչին կհետևի հարությունը: Անարգված քարը անկյունաքարը կդառնա մեծ տաճարի, որը կտեղավորի Աստծո ողջ հանրույթը, որտեղ բոլոր փրկվածները՝ հարուստները և աղքատները, հրեաները և ոչ հրեաները, տղամարդիկ և կանայք, կապրեն որպես մեկ ժողովուրդ: Նրանք կապրեն վախճանաբանական խաղողի այգում և նրա պտուղները կվայելեն ողջ հավիտենության ընթացքում:

Այսօր, հնարավոր է, չկան ողջ մարգարեներ, ում կարելի էր հալածել, բայց մենք, ինչպես և հին ժամանակների մարդիկ, նույնպես կարող ենք մերժել Աստծո լրաբերներին: Ինչպե՞ս կարող ենք մենք, որ կոչված ենք Տիրոջը «խաղողի որթի պտուղներ» բերելու, չմերժել Աստծո լրաբերներին և նրանց լուրը:

Չորեքշաբթի **հունիսի 17**

Աստված և կայսրը

Կարդացե՛ք Ղուկաս 20.20-26-ը: Ինչպե՞ս պետք է հասկանալ Հիսուսի այս խոսքերը և դրանք կիրառել մեր իրավիճակում, որ երկրում էլ որ ապրենք: _____

_____

_____

Հիսուսի ժամանակներում հռոմեական հարկերը ապակայունացնող հիմնախնդիր էին: Ըստ Հովսեփ Փլավիոսի՝ մոտավորապես Ք.հ. 6 թվականին հեղափոխական առաջնորդ Հուդա Գալիլեացին հայտարարեց, որ կայսրին հարկ վճարելը դավաճանություն է Աստծո նկատմամբ: Այս վիճելի հարցը, այլ մեսիական հայտարարությունների և մեսիայի դերի հավակնորդների հետ մեկտեղ, պարբերաբար ապստամբություններ էր հրահրում հռոմեացիների դեմ: Այսպիսի խռովահույզ մթնոլորտում կայսրին հարկ վճարելու օրինականության մասին Հիսուսին տրված հարցը ցույց տվեց հարցնողների ծածուկ դրդապատճառները: Եթե Հիսուսը պատասխաներ, որ հարկավոր է հարկեր վճարել, դա Նրան կդարձներ Հռոմի դաշնակից և ցույց կտար, որ Նա չի կարող լինել Հուդայի Թագավորը, ինչպես ամբոխն աղաղակում էր Երուսաղեմ Նրա մուտքի ժամանակ: Եթե Նա պատասխաներ «ոչ», դա կնշանակեր, որ Հիսուսը Հուդա Գալիլեացու հետևորդն է, ով հայտարարում էր հռոմեական տիրապետության անօրինականության մասին և իր վրա է գրավում պետական դավաճանության մեղադրանքը: Նրանք հույս ունեին Հիսուսին դնել անելանելի դրության մեջ, որից Նա չէր կարողանա դուրս գալ:

Սակայն Հիսուսը թափանցում էր նրանց մտադրությունների մեջ: Նա ցույց տվեց կայսեր պատկերը դրամի վրա և ասաց իր որոշումը. «Ուրեմն կայսրինը կայսրին տվեք, և Աստծունը՝ Աստծուն» (Ղուկաս 20.25): Ապրել կայսեր իշխանության ներքո և նրա փողն օգտագործել ամենօրյա պահանջմունքների բավարարման համար՝ նշանակում է որոշակի պարտականություններ ունենալ կայսեր առջև: Բայց գոյություն ունի ևս մեկ պարտականություն, անհամեմատ ավելին, որը ծագում է այն փաստից, որ մենք ստեղծված ենք Աստծո պատկերով և պարտավոր ենք ամբողջովին հավատարիմ լինել Նրան:

«Քրիստոսը չխուսափեց պատասխանից: Նրա պատասխանն ուղղակի էր ու ճիշտ... Նա հայտարարեց. եթե նրանք ապրում են հռո-

մեական իշխանության պաշտպանության ներքո, ապա պետք է այդ իշխանությանն աջակցեն այնքան ժամանակ, քանի դեռ դա հակադրության մեջ չի մտնում Աստծո հանդեպ իրենց պարտքի հետ: Բայց չնայած այն բանին, որ նրանք պետք է հնազանդորեն ենթարկվեն պետական օրենքներին, առաջին հերթին հարկավոր է միշտ հավատարիմ լինել երկնային Հորը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 602):

Ինչպե՞ս մնալ սեփական երկրի լավ քաղաքացիներ և միևնույն ժամանակ իմանալ, որ մեր իսկական քաղաքացիությունը պատկանում է այն քաղաքին, «որի ճարտարապետն ու արարիչը Աստված է» (Եբրայեցիս 11.10):

Հինգշաբթի հունիսի 18

Տիրոջ ընթրիքը

Կարդացե՛ք Ղուկաս 22.13-20-ը: Ի՞նչ նշանակություն ունի այն փաստը, որ Տիրոջ ընթրիքը տեղի է ունենում Զատկին:

Հիսուսը Տիրոջ ընթրիքը հաստատեց Զատիկը տոնելու պատմական համատեքստի ֆոնին: Զատիկն ընդգծում էր մարդու անզորությունը Աստծո մեծ զորության համեմատ: Իսրայելը նույնքան անզոր էր ազատվելու եգիպտական գերությունից, որքան և մենք ենք անզոր ազատվելու մեղքի հետևանքներից: Ազատագրումը եկավ Աստծուց՝ որպես Նրա սիրո և շնորհի պարգև, և սա այն դասն է, որ Իսրայելը պետք է իր զավակներին տա սերնդեսերունդ (Ելից 12.26,27): Ինչպես Իսրայելի ազատագրումը արմատներով այդքան խորն էր գնում պատմության մեջ՝ Աստծո քավչարար գործողությունների միջոցով, այդպես էլ մեղքից մարդկության ազատագրումը հիմնված է պատմական իրադարձության՝ Հիսուսի խաչելության վրա: Հիսուսը մեր «Զատկի Գառն» է (տե՛ս Ա Կորնթացիս 5.7), և Նրա Խորհրդավոր ընթրիքը «հասարակական ակտ է, որի միջոցով հավատացյալների համայնքը հռչակում է Քրիստոսի մահվան փառավոր ու վճռորոշ նշանակությունը» (Ջ. Ս. Բերկաուեր, Խորհուրդները, (G.C.Berkouwer, The Sacraments), 193):

Տիրոջ ընթրիքը հիշեցնում է, որ «այն գիշերը, որ մատնվում էր» (Ա Կորնթացիս 11.23), այսինքն՝ խաչելության նախընթաց գիշերը Հիսուսն Իր աշակերտներին հանդիսավոր լուր հայտնեց, որ նրանք պետք է հիշեին. հացն ու գինին խորհրդանիշներն են Նրա մարմնի, որ ուր որ է պիտի մահվան մատնվեր, և արյան, որ ուր որ է թափվելու

էր՝ ի թողություն մեղքերի (տե՛ս Մատթեոս 26.28): Հիսուսի մահը Աստծո միակ միջոցն է մեղքից մեր փրկագնման համար: Որպեսզի մենք չմոռանանք, որ Հիսուսի մահը երկնքի գործն էր՝ հանուն մեր փրկության, Հիսուսը հաստատեց Տիրոջ ընթրիքը և հրամայեց այն պահել մինչև Իր վերադարձը (Ա Կորնթացիս 11.24-26):

«Այս է իմ արյունը նոր ուխտի, որ թափվում է շատերի համար՝ ի թողություն մեղքերի» (Մատթեոս 26.28): Հիսուսի այս պնդումը հարկավոր է հիշել մինչև պատմության վերջը: Այս պնդումն անտեսելն ու փրկության որևէ այլ միջոց ընտրելը նշանակում է մերժել Աստծուն և փրկության Նրա ընտրած մեթոդը:

Այստեղ ներկայացված բազում դասերից առանձնանում են երկու ամենակարևորները: «Քրիստոսը մահացավ մեզ համար»՝ սա առաջին դասն է, որ հարկավոր է հիշել՝ Տիրոջ ընթրիքն ընդունելիս: Երկրորդ դասն այն է, որ մենք Նրա ընթրիքի շուրջ նստում ենք որպես մեկ մարմին՝ Նրա մահվան շնորհիվ, որը մեզ ամենքիս միասնական եղբայրության հասցրեց: Անգամ այսօր, երբ մենք նստում ենք ճաշակելու Տիրոջ ընթրիքը, նստում ենք որպես ժամանակի վերջի Քրիստոսի փրկված հասարակություն, որն սպասում է Տիրոջ վերադարձին: Մինչ այդ Տիրոջ ընթրիքը հիշեցնում է, որ պատմությունն իմաստ ունի, իսկ կյանքում հույս կա:

Քրիստոսը տվեց Իր մարմինն ու արյունը, որպեսզի ձեզ հավիտենական կյանքի խոստումը տա: Դուք ինչպե՞ս կարող եք այդ զարմանալի ճշմարտությունը ձերը դարձնել այնպես, որ այն կարողանա մշտապես հույս և վստահություն տալ ձեզ:

Ուրբաթ **հունիսի 19**

Հետագա ուսումնասիրության համար

«Ուտել Քրիստոսի մարմինը և խմել արյունը՝ նշանակում է Նրան ընդունել որպես անձնական Փրկիչ, հավատալ, որ Նա ներում է մեր մեղքերը, և որ մենք Նրանով հասնում ենք կատարելության: Տեսնելով Նրա սերը, մտորելով դրա մասին, ընդունելով այն՝ մենք դառնում ենք Նրա էության մասնակիցները: Քրիստոսը պետք է հոգու համար դառնա այն, ինչ սնունդն է մարմնի համար: Սնունդը մեզ ոչ մի օգուտ չի բերի, քանի դեռ մենք չենք կերել այն, քանի դեռ այն չի դարձել մեր էության մասը: Այդպես էլ Քրիստոսը մեզ օգուտ չի բերի, եթե մենք

Նրան չընդունենք որպես անձնական Փրկիչ: Քրիստոսի մասին տեսական գիտելիքները մեզ օգուտ չեն բերի: Մենք պետք է կշտանանք Նրանով, Նրան ընդունենք մեր սրտի մեջ, որպեսզի Նրա կյանքը դառնա մեր կյանքը: Մենք պետք է ընդունենք Նրա սերն ու Նրա շնորհը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 389):

Հարցեր քննարկման համար

1. Խորհեցե՛ք այն դեպքերի մասին, երբ Հիսուսը մաքրում էր տաճարը: Մենք ինչպե՞ս կարող ենք առուծախի հանել մեր հավատն ու հավատարմությունը: Ինչպե՞ս կարող են օգտագործել կրոնը՝ շահույթ ստանալու, հեղինակություն և դիրք ձեռք բերելու համար: Եվ որ ամենակարևորն է, մենք՝ որպես եկեղեցի, ի՞նչ կարող ենք անել՝ այդ նույն խաբեության մեջ չընկնելու համար:
2. Աթեիստ գրող Ալեքս Ռոզենբերգը համարում է, որ ողջ իրականությունը, ողջ գոյությունը զուտ նյութական է: Այսինքն՝ ամեն բան կարող է և պետք է բացատրվի միայն ու միայն ֆիզիկական գործընթացների միջոցով: Այդ գործընթացները, իհարկե, չունեն ո՛չ մտադրություն, ո՛չ նպատակ, ո՛չ Աստված: «Ո՞րն է տիեզերքի նպատակը, - հարցնում է նա: - Ո՛չ մի նպատակ չկա: Ի՞նչ ձգտումներ են գործում տիեզերքում:- Պատասխանը նույնն է՝ ո՛չ մի»: Սակայն եթե տիեզերքի անմտությունն ու աննպատակ լինելը տխրեցնում են ձեզ, Ռոզենբերգը նախազգուշացնում է, որ դուք ձեր «ընկճախտը լուրջ չընդունեք»: Ինչո՞ւ: Ինչո՞ւ մեր հույզերը, այդ թվում նաև ընկճախտը, ոչ այլ ինչ են, քան նյարդաբջիջների և քիմիական նյութերի որոշակի դասավորություն, իսկ ի՞նչ լուրջ բան կարող է լինել դրանում: Սակայն Ռոզենբերգը պատասխան ունի նրանց համար, ովքեր տրտմած են իրենց կյանքի անիմաստության պատճառով: Քանի որ ընկճախտը սոսկ նյարդաբջիջների որոշակի դասավորություն է, պարզապես տեղափոխե՛ք նյարդաբջիջները, իսկ դա կարելի է անել բուժանյութերի միջոցով: «Եթե դուք ձեզ ավելի լավ չզգաք առավոտյան... կամ երեք շաբաթ անց, պարզապես փոխե՛ք բուժամիջոցը: Որպես կանոն՝ երեք շաբաթը բավական է, որպեսզի գործեն սերոտոնինի կրկնակի կլանման այնպիսի բուժամիջոցներ, ինչպես «պրոզակը», «վելբուտրինը», «պակսիլը», «զոլոֆտը», «սելեկսան» կամ «լյուվոքսը»: Եթե չօգնի մեկը, ամենայն հավանականությամբ, կօգնի մեկ ուրիշը»: Նրա պատասխանի մեջ ամենազարմանալին այն

է, որ նա լուրջ է խոսում. եթե դուք ընկճախտի մեջ եք, դեղեր ընդունեք: Կյանքի վերաբերյալ այս տեսակետը համեմատե՛ք այն բանի հետ, ինչ մենք գիտենք Հիսուս Քրիստոսի և այն մասին, ինչ Նա արել է մեզ համար խաչի վրա: Ինչո՞ւ մեր մասնակցությունը Տիրոջ ընթրիքին բացահայտ ու խիզախ հերքումն է՝ Ռոզենբերգի և նրա աթեիստական աշխարհայացքի ներկայացրած ժխտողականության և անմտության:

ԴԱՍ 13

ՅՈՒՆԻՍ 20-26

ԽԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱԾ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ծննդոց 3.1-6, Ղուկաս 22.39-46, Բ Կորնթացիս 13.8, Ղուկաս 22.53, Մատթեոս 12.30, Ա Կորնթացիս 15.14:

Հիշելու համարը.

«Պետք է մարդի Որդին մեղավոր մարդկանց ձեռքը մատնվի և խաչվի և երրորդ օրը հարություն առնի» (Ղուկաս 24.7):

Արդեն մանկուց Հիսուսը գիտակցում էր, որ այս երկիր եկել է Հոր կամքը կատարելու համար (Ղուկաս 2.41-50): Նա սովորեցնում, բժշկում և ծառայում էր Հորը ենթարկվելու անսասան վճռականությամբ: Այժմ՝ խորհրդավոր ընթրիքից հետո, եկել էր միայնակ մնալու ժամանակը, որպեսզի կատարվեր Աստծո կամքը, մատնվեր և լքվեր, դատվեր և խաչվեր, ու հարություն առներ՝ մահը հաղթելով:

Իր ողջ կյանքում Հիսուսը գիտեր խաչի անխուսափելիության մասին: Ավետարաններում շատ անգամ Հիսուսի տառապանքների և մահվան վերաբերյալ օգտագործվում է «պետք է» բառը (Ղուկաս 17.25, 22.37, 24.7, Մատթեոս 16.21, Մարկոս 8.31, 9.12, Հովհաննես 3.14): Նա պետք է գնար Երուսաղեմ: Նա պետք է տառապեր: Նա պետք է լքվեր: Նա պետք է բարձրացվեր: Եվ այսպես շարունակ: Ոչինչ չէր կարող Աստծո Որդուն հետ պահել Գողգոթա գնալուց: Նա մերժում էր խաչից հրաժարվելու ցանկացած առաջարկ՝ իբրև սատանայի թակարդ (Մատթեոս 16.22,23) Նա համոզված էր, որ «պետք է... գնալ... չարչարվել, սպանվել և... հարություն առնել» (տեքստ 21): Հիսուսի համար դեպի խաչ տանող ճանապարհը հնարավոր որոշումներից մեկը չէր, դա «պետք էր» անել (Ղուկաս 24.25,26,46), դա մասն էր Աստծո «խորհրդի, որ ծածկված էր հավիտենից և դարերից, իսկ հիմա հայտնվեց իր սուրբերին» (Կողոսացիս 1.26):

Գեթսեմանի. սոսկալի պայքար

Պատմության արշալույսին Աստված ստեղծեց Ադամին ու Եվային և նրանց բնակեցրեց հիասքանչ մի այգում՝ օրհնելով ամեն բանով, ինչ նրանց անհրաժեշտ էր ուրախությամբ լի կյանքի համար: Ծուտով ինչ-որ արտասովոր բան տեղի ունեցավ. հայտնվեց սատանան (Ծննդոց 3): Նա գայթակղեց առաջին մարդկանց, իսկ հետո երիտասարդ մոլորակը ներքաշեց բարու և չարի, Աստծո և սատանայի միջև մեծ պայքարի մեջ:

Այժմ՝ Աստծո սահմանած ժամանակին, մեկ այլ այգի (Ղուկաս 22.39-46) դարձավ ահեղ մարտի դաշտ, որտեղ ծավալվեց ճշմարտության և կեղծիքի, արդարության և մեղքի, մարդկության փրկության Աստծո ծրագրի և բոլոր մարդկանց ոչնչացնելու՝ սատանայի մտադրության միջև պատերազմի հերթական փուլը:

Եդեմում աշխարհը խորասուզվեց մեղքի աղետի մեջ. Գեթսեմանում խաղաղությունը վերջնական հաղթանակ տարավ: Եդեմը վկան դարձավ չարի ողբերգական հաղթանակի, որը մարդուն հեռացրեց Աստծուց. Գեթսեմանը ցույց տվեց, թե ինչպես է «ես»-ը հնազանդվում Աստծուն, և հայտնեց հաղթանակը մեղքի հանդեպ:

Համեմատե՛ք այն, ինչ տեղի ունեցավ Եդեմում (Ծննդոց 3.1-6), այն բանի հետ, ինչ տեղի ունեցավ Գեթսեմանում (Ղուկաս 22.39-46): Ո՞րն էր երկու այգիներում տեղի ունեցած իրադարձությունների ամենամեծ տարբերությունը:

_____

_____

_____

Գեթսեմանում երկու կարևորագույն իրադարձություն տեղի ունեցավ. նախ՝ սատանան ամենադաժան փորձն արեց՝ Հիսուսին աստվածային առաքելությունից և նպատակից հետ դարձնելու, երկրորդ՝ այստեղ բացահայտվեց Աստծո զորության հանդեպ վստահության ազնվագույն օրինակը՝ Նրա կամքն ու մտադրությունը կատարելու համար: Գեթսեմանը ցույց է տալիս, որ, ինչքան էլ կատաղի լինի պայքարը, և որքան էլ թույլ լինի «եսը», հաղթանակը երաշխավորված է նրանց համար, ովքեր փորձով ճանաչել են աղոթքի ուժը: Ինչպես Հիսուսի հանրահայտ աղոթքում է՝ «Սակայն ոչ թե իմ կամքը, այլ քո կամքը լինի» (Ղուկաս 22.42):

Սատանայի ողջ զորքը համախմբվել էր Հիսուսի դեմ, Նրա այդքան շատ սիրած աշակերտները քարացել էին Նրա տառապանքներից: Արյան կաթիլները գլորվում էին մեկը մյուսի հետևից, ուր որ է կմոտենա մատնիչը՝ համբույրով, հետո կհարձակվեն քահանաներն ու տաճարի պահապանները: Սակայն Հիսուսը նրանց ցույց տվեց, որ աղոթքն ու հնազանդությունը Աստծուն՝ անհրաժեշտ ուժ է տալիս հոգու համար, որպեսզի հնարավոր լինի տանել կյանքի ցանկացած դժվարություն:

Հաջորդ անգամ, երբ ձեզ լուրջ փորձություն հանդիպի, դուք ինչպե՞ս կարող եք հաղթահարել այն Հիսուսի նման՝ Գեթսեմանում, առանց դրան տրվելու, ինչպես Ադամն ու Եվան Եդեմում: Ի՞նչ վճռորոշ գործոն է տարբերակում այս երկու այգիները և գայթակղության հետ հանդիպման երկու տարբեր ելքերը:

Երկուշաբթի հունիսի 22

Հուդան

«Սատանան էլ մտավ Իսկարիովտացի ասված Հուդայի մեջ, որ տասներկուսի թվից էր» (Ղուկաս 22.3): Իհարկե, սատանան ողջ ուժով ջանում էր ճանկը գցել բոլոր աշակերտներին: Ի՞նչ կար Հուդայի մեջ, ինչը թշնամուն թույլ տվեց հաջողության հասնել նրա դեպքում՝ ի տարբերություն մյուսների: _____

_____

_____

Ղուկասը պատմում է, թե ինչպես Հիսուսը ելավ սարը, և միայնակ աղոթում էր ողջ գիշերը՝ նախքան կընտրեր Իր աշակերտներին (Ղուկաս 6.12-16): Հիսուսն Ինքը համարում էր, որ այդ տասներկու աշակերտները Աստծո պարգևն էին Իրեն (Հովհաննես 17.6-9): Հուդան իսկապե՞ս աղոթքի պատասխան էր: Ինչպե՞ս հասկանալ, թե այստեղ ինչ տեղի ունեցավ, բացի նրանից, որ անգամ Հուդայի մատնության և դավաճանության միջոցով պետք է կատարվեր Աստծո մտադրությունը (տե՛ս Բ Կորնթացիս 13.8):

Այդքան մեծ ներուժով օժտված Հուդան, հնարավոր է, կարող էր Պողոս առաքյալի նման մեկը դառնալ, բայց դրա փոխարեն նա գնաց միանգամայն այլ ուղղությամբ: Նա կարող էր ունենալ իր Գեթսեմա-

նին՝ հաղթանակ տանել սեփական «եսի» և մեղքի հանդեպ, բայց դրա փոխարեն նա վերապրեց Եդեմի փորձառությունը՝ մեղանչման փորձառությունը:

«Նա իր մեջ խրախուսում էր ագահության չար ոգին՝ այնքան ժամանակ, մինչև որ այն դարձավ նրա կյանքի հիմնական շարժառիթը: Փողի հանդեպ սերը նրա մեջ հաղթեց Քրիստոսի նկատմամբ սիրուն» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 716):

Երբ Հիսուսը 5000 մարդ կերակրեց հինգ հացով և երկու ձկով (Ղուկաս 9.10-17), Հուդան առաջինը գնահատեց այդ հրաշքի քաղաքական արժեքը, և հենց «նա առաջարկեց ուժով ստիպել Քրիստոսին՝ զբաղեցնել թագավորական գահը» (նույն տեղում, 718, 719): Բայց Հիսուսը դատապարտեց այդ փորձը, և դրանից սկսվեց Հուդայի հիասթափությունը. «Բայց Հուդայի փայփայած հույսերը չիրականացան, և նա դառը հիասթափություն էր զգում (նույն տեղում, 719): Ակնհայտ է, որ Հուդան, ինչպես և մյուսները, հավատում էր, որ Հիսուսն Իր արտակարգ հնարավորությունները կօգտագործի այս աշխարհում Աստծո արքայությունը հաստատելու համար, և Հուդան, ակներևաբար, ցանկանում էր տեղ զբաղեցնել այդ թագավորության մեջ: Որքա՜ն ողբերգական է. ժամանակավոր թագավորության մեջ տեղ ստանալու նրա ցանկությունը, որը այդպես էլ երբեք չեկավ, նրան ստիպեց կորցնել տեղը հավիտենական արքայության մեջ, որը հաստատապես գալու է:

Մեկ այլ անգամ, երբ Հիսուսին նվիրված հետևորդ կինը որոշեց Նրա ոտքերը օծել թանկարժեք յուղով, Հուդան նրա արարքը դատապարտեց՝ որպես փողի անհարկի ծախս (Հովհաննես 12.1-8): Ամենը, ինչ կարող էր տեսնել Հուդան, փողն էր. փողի և իշխանության հանդեպ սերը մթագնում էր Հիսուսի հանդեպ նրա սերը: Փողով և իշխանությամբ տարվածությունը բերեց այն բանին, որ Հուդան որոշեց երկնքի անգին Պարգևի արժեքը (Մատթեոս 26.15): Այն ժամանակից «սատանան մտավ... Հուդայի մեջ» (Ղուկաս 22.3), և Հուդան գնաց կործանման ճանապարհով:

Ոչ մի վատ բան չկա հասարակության մեջ բարձր դիրք, իշխանություն կամ փող ունենալու մեջ: Խնդիրը ծագում է, երբ այս բաները (կամ որևէ այլ բան) մթագնում են մեր հավատարմությունն Աստծո հանդեպ: Ինչո՞ւ է միշտ կարևոր ինքնավերլուծությունը՝ ինքնախաբեությանը չտրվելու համար, ինչպես տեղի ունեցավ Հուդայի հետ:

Նրա հետ կամ Նրա դեմ

Խաչը պատմությունը բաժանում է երկու մասի. այն տարանջատում է հավատն ու անհավատությունը, դավաճանությունն ու ընդունումը, ինչպես նաև՝ հավիտենական կյանքն ու մահը: Խաչի հանդեպ մարդկանց վերաբերմունքի մեջ չեզոք դիրք գոյություն չունի. մենք կա՛մ մի կողմում ենք, կա՛մ՝ մյուսում:

«Ով ինձ հետ չէ, ինձ հակառակ է, և ով որ ինձ հետ չի ժողովում, ցրվում է» (Մատթեոս 12.30): Սրանք ուժեղ խոսքեր են, որոնք կարող են մեզ ստիպել՝ անհարմարություն զգալ, բայց դա փաստ է, որին բախվում են բոլոր նրանք, ովքեր ներքաշված են Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարի մեջ: Մենք կա՛մ Հիսուսի հետ ենք, կա՛մ սատանայի:

Այո՛, հենց այդքան կտրուկ:

Հետևյալ մարդիկ ինչպե՞ս էին վերաբերվում Հիսուսին, և ի՞նչ դասեր կարող ենք քաղել նրանց օրինակից՝ Աստծո հետ մեր փոխհարաբերություններում և խաչի հանդեպ մեր վերաբերմունքի հարցում:

Սինեդրիոնը (Ղուկասն 22.53): Ի՞նչ սխալներ գործեցին այս մարդիկ, ինչո՞ւ: Ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել նման սխալներից: _____

_____

_____

Պիղատոսը (Ղուկաս 23.1-7,13-25): Ի՞նչը ստիպեց Պիղատոսին՝ ասել. «Ես ոչ մի հանցանք չեմ գտնում նրանում» (Հովհաննես 19.4), և միևնույն ժամանակ Նրան դատապարտել խաչելության: Մենք ի՞նչ կարող ենք սովորել նրա սխալից: _____

_____

_____

_____

Հերովդեսը (Ղուկաս 23.6-12): Ո՞րն էր նրա մեծ սխալը, և մենք ի՞նչ կարող ենք սովորել դրանից: _____

_____

_____

_____

Երկու ավազակները (Ղուկաս 23.39-43): Երկու մեղավորները նայում էին միևնույն խաչին և տարբեր կերպ վերաբերվեցին դրան: Այս տեսարանն ինչպե՞ս է պատկերում փրկության մասին կարևոր ճշմարտությունը՝ մեծ պայքարում մենք կա՛մ այս, կա՛մ այն կողմում ենք: _____

_____

_____

_____

Չորեքշաբթի **հունիսի 24**

Նա հարություն է առել

Միաշաբթի վաղ առավոտյան կանայք մի նպատակով գնացին գերեզմանի մոտ՝ ավարտել թաղման ծիսակարգը: Չնայած այն ժամանակը, որ նրանք անց էին կացրել Հիսուսի հետ, նրանք իրականում չէին հասկանում, թե ինչ պետք է տեղի ունենա: Նրանք, իհարկե, չէին սպասում դատարկ գերեզման կամ երկնային լրաբերների տեսնել, ովքեր նրանց ասացին. «Այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկաս 24.6):

Հենց միայն Գործք առաքելոց գրքի առաջին մի քանի գլուխներում առնվազն ութ անգամ հիշատակվում է Հիսուս Քրիստոսի հարությունը. Գործք առաքելոց 1.22, 2.14-36, 3.14,15, 4.1,2,10,12,33, 5.30-32: Ինչո՞ւ էր Հիսուսի հարությունն գրեթե բոլոր քարոզների գլխավոր թեման և ողջ վաղ եկեղեցու էությունը: Ինչո՞ւ է այն մինչ այսօր այդքան կարևոր մեզ՝ ժամանակակից քրիստոնյաներիս համար:

Կանայք Հիսուսի հարության անմիջական ականատեսն էին: Նրանք փութացին այս լավ լուրով կիսվելու մյուսների հետ, բայց նրանց ոչ ոք չէր հավատում (Ղուկաս 24.11): Սրա փոխարեն առաքյալները մերժեցին փրկության պատմության մեծագույն պատմությունը՝ որպես տառապած ու ողբացող կանանց «ցնորք» (10, 11 տեքստեր):

Ծատ շուտով նրանք պետք է համոզվեին, թե որքան էին սխալվում իրենք:

Քրիստոսի հարությունը հիմնարար գործողությունն է Աստծո քավչարար գործունեության և քրիստոնեական հավատի ու կյանքի լիության համար: Պողոս առաքյալը շատ հստակ կերպով խոսում է այդ մասին. «Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն ունայն է մեր

քարոզությունը, և ունայն է ձեր հավատքն էլ» (Ա Կորնթացիս 15.14): Այն ունայն է կամ դատարկ, որովհետև միայն Քրիստոսի հարության մեջ մենք կարող ենք գտնել մեզ պատկանող հույսը: Առանց այդ հույսի մեր կյանքն այստեղ ավարտվում է և ավարտվում է ընդմիշտ: Քրիստոսի կյանքը չավարտվեց գերեզմանում, և սա մեծագույն հույսն է, որ մեր կյանքն էլ չի ավարտվի այստեղ:

«Եթե Քրիստոսը մեռելներից հարություն չի առել, ուրեմն Իր ժողովրդի փրկության համար Աստծո քավչարար գործողությունների երկարատև ընթացքը մտնում է փակուղի, գերեզման: Եթե Քրիստոսի հարությունը իրականություն չէ, ուրեմն մենք ոչ մի վստահություն չունենք, որ Աստված կենդանի Աստված է, որովհետև վերջին խոսքն ասում է մահը: Հավատն անօգուտ է, քանի որ այդ հավատի առարկան իրեն չի արդարացրել որպես կյանքի Իշխան: Քրիստոնեական հավատը, այդ դեպքում, ամփոփված է գերեզմանի մեջ՝ Քրիստոսի մեջ Աստծո վերջնական ու բարձրագույն ինքնաբացահայտման հետ մեկտեղ, եթե Քրիստոսն իսկապես մահացել է» (Ջորջ Էլդոն Լեդդ, Նոր Կտակարանի աստվածաբանությունը, [George Eldon Ladd, *A Theology of the New Testament*], 318):

Հինգշաբթի **հունիսի 25**

«Պետք է կատարվի բոլորը»

Կարդացե՛ք Ղուկաս 24.13-49-ը, որտեղ պատմվում է իրադարձությունների մասին, որ տեղի էին ունենում Քրիստոսի հարությունից անմիջապես հետո: Ի՞նչ է մատնանշում Հիսուսը տարբեր մարդկանց հետո Իր հանդիպումների ժամանակ՝ նրանց օգնելու համար, որ հասկանան, թե ինչ է տեղի ունեցել Իր հետ, և թե ինչու՞ է այսօր դա այդքան կարևոր մեզ համար, նաև աշխարհին մեր վկայության համար: _____

_____

_____

_____

_____

Հիսուսի հարությունը պետք է դառնար բավարար ապացույց այն բանի, որ Հիսուսը Մեսիան է: Հիսուսին, որ խոշտանգվել և տարատեսակ դաժանությունների էր ենթարկվել, խաչեցին, հետո նաև

խոցեցին, ինչից հետո փաթաթեցին պատանքով և գերեզման դրեցին: Եթե Նա, ինչպես ոմանք ասում են, անգամ ողջ էր մնացել խաչելությունից և թաղումից հետո, արնաշաղախ, խոշտանգված ու թուլացած, Ով օրորվելով դուրս էր եկել գերեզմանից, ոչ մի կերպ նման չէր լինի հաղթող Մեսիային:

Սակայն ահա՛ Նա՝ Հիսուսը, ողջ է և բավականաչափ ուժեղ, որպեսզի առնվազն մի քանի կիլոմետր անցնի երկու տղամարդկանց հետ՝ Էմմաուսի ճանապարհով: Եվ անգամ այս ժամանակ, նախքան կբացահայտի, թե Ով է Ինքը, Հիսուսը նրանց մտքերն ուղղեց դեպի Սուրբ Գիրքը՝ նրանց տալով հաստատուն աստվածաշնչյան հիմք՝ Իրեն հավատալու համար:

Հետո, հայտնվելով աշակերտներին, Հիսուսն Իրեն ցույց տվեց նրանց և կերավ նրանց հետ: Բայց Հիսուսը նաև ավելին արեց. Նա նրանց ցույց տվեց Աստծո Խոսքը. «Եվ նրանց ասաց, թե այսպես է գրված, և այսպես պետք էր Քրիստոսին չարչարվել և երրորդ օրը մեռելների միջից հարություն առնել. Եվ նրա անունով ապաշխարություն և մեղքերի թողություն քարոզվել բոլոր ազգերի մեջ՝ Երուսաղեմից սկսած: Եվ դուք այս բաների համար վկաներ եք» (Ղուկաս 24.46-48):

Այստեղ նույնպես Հիսուսը ոչ միայն մատնացույց արեց Սուրբ Գիրքը (բացի այն ապացույցից, որ Ինքն իրականում ողջ է և գտնվում է նրանց մեջ), այլև օգտագործեց Սուրբ Գիրքը, որպեսզի օգնի նրանց հասկանալու, թե հատկապես ի՛նչ տեղի ունեցավ Իր հետ: Բացի դրանից, Նա ուղղակիորեն Իր հարությունը կապեց բոլոր ժողովուրդներին Ավետարանը քարոզելու առաքելության հետ:

Այսպիսով, անգամ այսքան համոզիչ ապացույցներ ունենալով, որոնք հաստատում էին, թե Ով էր Հիսուսը, Նա միշտ Իր հետևորդներին ուղղորդում էր դեպի Աստծո Խոսքը: Չէ՞ որ եթե մենք այսօր չունենայինք Աստծո Խոսքը, ինչպե՞ս կիմանայինք մեր կոչման և Ավետարանն աշխարհին քարոզելու առաքելության մասին: Մենք առհասարակ ինչպե՞ս կիմանայինք Բարի լուրի մասին: Աստվածաշունչը նույնքան կարևոր է մեզ համար այսօր, որքան կարևոր էր Հիսուսի և Նրա աշակերտների համար:

Որքա՞ն ժամանակ եք դուք անցկացնում Աստվածաշնչի ուսումնասիրության վրա: Ինչպե՞ս է այն ազդում մեր կենսակերպի, որոշումների և այլ մարդկանց հանդեպ վերաբերմունքի վրա:

Հետագա ուսումնասիրության համար

«Սուրբերն ու հրեշտակները ուսումնասիրելու են Քրիստոսի մահվան նշանակությունն ու իմաստը: Մեղավոր մարդը չէր կարող ապրել Աստծո դրախտում, եթե չլիներ աշխարհի սկզբից ի վեր մորթված Գառը: Մի՞թե մենք չպետք է մեծարենք Քրիստոսի խաչը: Հրեշտակները փառք ու պատիվ են ուղղում Քրիստոսին, որովհետև անգամ նրանք անվտանգության մեջ չեն, եթե չեն նայում Աստծո Որդու տառապանքներին: Միայն խաչի արդյունավետության շնորհիվ է, որ երկնային հրեշտակները պաշտպանված են ուրացությունից: Առանց խաչի՝ նրանք պաշտպանված կլինեն չարից ոչ ավելի, քան նախքան սատանայի անկումը: Հրեշտակների կատարելությունը խախտվեց երկնքում: Մարդկանց կատարելությունը խախտվեց Եդեմում՝ օրհնյալ դրախտում: Բոլորը, ովքեր ցանկանում են երկրի վրա կամ երկնքում ապրել անվտանգության մեջ, պետք է նայեն Աստծո Գառին» (Է. Ուայթ, ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հատոր 5, 1132):

Հարցեր քննարկման համար

1. Որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է ապրենք հավատով, այսինքն՝ պետք է հավատանք այն բանին, ինչ չենք կարող լիովին ապացուցել և ինչի համար չունենք անմիջական ականատեսների վկայությունը: Իհարկե, նման բան հանդիպում է կյանքի տարբեր ոլորտներում, օրինակ՝ գիտության մեջ: Մի հեղինակ գրում է. «Փաստորեն մենք ուղղակի ապացույցներ ունենք միայն զարմանալիորեն քիչ քանակությամբ համոզմունքների համար, որ մենք ունենք» (Ռիչարդ դե Ուիթթ, [Richard DeWitt, *Worldwiews: An Introduction to the History and Philosophy of Science*, second edition, Chichester, West Sussex, U.K.: John Wiley and Sons, Ltd., 2010, 15); Սակայն մենք բազում ծանրակշիռ ապացույցներ ունենք մեր հավատի համար, այն համոզմունքների համար, որ ունենք: Օրինակ՝ տեսեք, թե ինչ ասաց Հիսուսը Իր աշակերտներին մեծ հանձնարարությունը տալու ժամանակ. «Եվ արքայության այս ավետարանը բոլոր տիեզերքում կքարոզվի ամեն հեթանոսների վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը» (Մատթեոս 24.14): Խորհեցե՛ք այն ժամանակի մասին, երբ

Հիսուսն ասում էր այս խոսքերը: Որքանո՞վ էին բազմաթիվ Նրա հետևորդներն այն ժամանակ: Որքա՞ն մարդ հավատաց Նրան կամ հասկացավ, թե Ով է Նա և ինչ է կատարելու: Խորհեցե՛ք նաև այն ողջ հակամարտության մասին, որին Հռոմեական կայսրությունում պետք է բախվեր վաղ եկեղեցին դարերի ընթացքում: Հաշվի առնելով այս բոլոր փաստերը՝ քննարկե՛ք, թե որքան ապշեցուցիչ էին Հիսուսի՝ նախորոք ասված այս խոսքերը, և թե ինչպես պետք է օգնի դա մեզ՝ վստահելու Աստծո Խոսքին:

2. Խորհե՛ք Է. Ուայթից վերը բերված մեջբերման մասին: Դա ինչպե՞ս է օգնում մեզ՝ հասկանալու, թե որքան համընդհանուր է մեղքի հինախնդիրը: Անգամ հրեշտակները անվտանգության մեջ չեն, եթե չեն նայում Հիսուսին: Ի՞նչ է սա նշանակում:

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2015 թվականի երկրորդ եռամսյակ

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

Ջոն Մ. Ֆաուլեր

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Մերինե Աթոյան
Վերստուգող՝ Ալվարդ Մադոյան
Գրական խմբագիր՝ Գեղեցիկ Մարտիրոսյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան